





# ԱԿՄԲԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1988 թ.





Պատմաբնակ բոլոր յերկրների, միացեաւ.

ՀՅԱՍՏԱՆԻ ԽՈԶ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ  
374.28 (-22)

# ԱԿՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

18718  
A  $\frac{\pi}{23314}$



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1933 թ.

Հեղինակ. Դ. Յովան  
Գտա Խմբագիր. Տ. Մաշենյան  
Տեղ Խմբացիք. Դ. Զեմյան  
Թարգմանիչներ՝ Հ. Մազմանյան, Հ. Էպրայրյան  
Սրբագրիչ՝ Հ. Կարսյան  
Համակած և պատճենաբարյան 7 պատճեն 1933 թ.  
Անարազրկավուն և առին 2 սեպան 1933 թ.  
Գալակի 1811 Ցիրած 1000  
Գ. Ա. Հ. 8253 (բ) Հրատ. Ա. 2690

## ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

### Ի. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿՈՒՄ

«Վորպեսզի կարելի լինի քաղաքական խնդիրները դնել ժողովրդի առաջ, վորպեսզի կարելի լինի ժողովրդական մասսաներին ցույց տալ թե՝ «Ահա թե ինչպիսի խնդիրների պիտի ձգտենք մենք» (իսկ այդ մենք պետք են անելինք), հարկավոր ե հասկանալ, վոք այսուել պահանջվում ե բարձրացնել մասսաների կուլտուրական մակարդակը: Եել պետք ե հասնել կուլտուրայի այդ վորոշ մակարդակին:—Առանց դրան՝ չի կարելի գործնականում իրականացնել մեր խնդիրները»: Լենին

Կուսակցության 17-րդ կոնֆերենցիան իր պատմական վորոշումներում ի մի ամփոփեց բայլեկելիյան հաղթանակների պրէյունքները և նշեց մեր յերկրում անդասակարդ, սոցիալիստական հասարակություն կառուցելու հոյակապ ծրագրը:

Խորհրդային Միության բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը, բայլեկելիների լինինյան կուտակցության զեկավարությար, բայլեկելիյան հաղթանակների հանճարեղ կաղմակերպչի, կուսակցության ու համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջնօրդին—ընկ. Ստալինի զեկավարությամբ, դասակարգային իւստադի պայքարի պայմաններում, սոցիալիստական շինարարության մեջ հանդես բերելով, հերոսության ու նվիրվածության հրաշեներ, ջախջախելով իր ճանապարհին յեղած բոլոր խոչընդուռները, վորոշակի կերպով հաստատեցին լենինի ու Ստալինի ուսմունքի ճշությունը՝ մի յերկրում սոցիալիզմի կառուցման հարաբերության մասին: Նրանք բոլոր ժամանակների մարդկության լավագույն մասի չքնաղ իդքտ-սոցիալիզմը

գալքմբին մեզ որերի ռեալ իրականություն, կառուցեցին սոցիալիստական և կոնոմիկայի հիմքը և բոլոր նախադրյալքներն ստեղծեցին՝ յերկրորդ հնդամյակում անդասակարգ, սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

«Ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար ստեղծված և սևիական բազա, սոցիալիստական խոշոր մեքենայական ինդուստրիայի բաղադրական աշխատավայր»:

«Վոլեկտիվացման, խորհոնակառությունների ծավալման ու մեքենայական տեխնիկայի լայն կիրառման հիման վրա Խորհրդային Միությունը մանր ու մանրագույն հողագործական յերկրից դարձել և աշխարհի ամենախոշոր հողագործական յերկրը»:

Դրանով իսկ լուծումն և ստացել որութեարական հեղափոխության ամենակարենոր ու ամենազժվարին խնդիրը:

Առաջին հնդամյակում սոցիալիստական չինարության հետեւանքով վերջնականապես արմատախիլ են արված կապիտալիզմի արմատաները, դյուլում, վերացված են մարդու կողմից մարդուն շահագործելու հիմունքներն ու աղբյուրները, կանխօսուշված և կապիտալիստական տարրերի լիակատար վերացումն ու դասակարգերի լիակատար վոչնչացումը:

Լենինյան «ովլում» հարցը թե՛ քաղաքում և թե՛ դյուդում լիովին ու անդառնախորեն լուծվել և ընդում կապիտալիզմի և հոգուտ սոցիալիզմի:

Այս հաղթանակները հնարավոր յեղան միայն կուսակցության ճիշտ լենինյան քաղաքականության հետեւանքով, վորը հետեւողականորեն ու ամ բողջ ֆրոնտով հարձակում կիրառեց կապիտալիստական տարրերի դեմ, անողոք պայքար մղեց ընդդեմ հակահեղականիստական տրոցիկոզմի, ընդդեմ աջ ոպրտունիզմի, վորը սոցիալիզմի կառուցման տվյալ ետապում գլխավոր վտանդն և հանդիսանում և ընդդեմ կուսակցության գլխավոր գծից ամեն տեսակ շեղումների նկատմամբ հաշտվողականության:

Կուսակցությունն այդ հաղթանակներին հասավ շնորհիվ իր իսկ կազմակերպած «բանվոր զասակարգի ու աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հեղափոխական ակտիվության վիթխարի աճման, սոցիալիստական մքցության ու հարվածայնության հսկայական վերելքի», վորոնք վկայում են մասսաների կուլտուրական մակարդակի վերելքը.

կուլտուրական հեղափոխության բնադավառում ունեցած նշանակալից տեղաշարժերը, վորի հաջողությամբ ել էնինը պայմանավորում եր սոցիալիզմի հաղթանակը Խորհրդային Միության մեջ:

Յերկրորդ հնդամյակի խոշորագույն, համաշխարհային-պատմական նշանակություն՝ ունեցող խնդիրների իրականացումը նույն չափով սկայմանավորված և բանվորության և աշխատավոր գյուղացիության կուլտուրական մակարդակի հետադա հղոր վերելքով, նրանց հեղափոխական ակտիվության, քաղաքական գիտակցության աճումով:

Առաջին հնդամյակի լիովին անհրաժեշտ բազա նախապատրամուց սոցիալիստական կուլտուրայի հղոր վերելքի համար, մեր առաջ դրված կուլտուրական հեղափոխության վերինարդի խնդիրների լուծման համար: Իսկ կուլտուրական հեղափոխության խնդիրներն ամբողջովին բնորոշվում են յերկրորդ հնդամյակի քաղաքական ու տնտեսական խնդիրներով: «Յերկրորդ հնդամյակի հիմնական քաղաքական խնդիրն ե հանդիսանում բնդհանրապես կապիտալիստական տարրերի ու դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարրերությունները ու շահագործում ծնող պատճառների լիսկատար վոչնչացումը և կապիտալիզմի մեջարդների վերացումն եկամումիկայի ու մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամրող աշխատավոր բնակչության վախճակումը՝ գիտակցուն ու ակտիվորեն անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցողների»:

«Յերկրորդ հնդամյակի հիմնական ու վեռական տնտեսական խնդիրն ե ամրող ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը, նոր տեխնիկական բազայի ստեղծումը ժողովրդական տնտեսության բալոր նյութերի համար»:

Այստեղից ել բախում են կուլտուրական հեղափոխության, կուլտուրական շինարարության, մասսաների մեջ կատարվելիք կուլտուր-քաղաքական աշխատանքի խնդիրները, ըստ վորում 17-րդ կուսկոնֆերենցիան իր վորոշումների մեջ միանդամայն վորոշակի նշում և այդ խնդիրների լուծման ուղիները:

«Ժողովրդական տնտեսության լիակատար տեխնիկական վերակառուցման խնդիրների իրականացումն անխզելիորեն կապված ե մեր տնտեսական կաղըերի կողմից տեխնիկային

տիրապետելու գործի, բանվորներից ու զյուրացիներից մեր սեփական տեխնիկական ինտելիգենցիայի լայն կաղըքը ստեղծելու և աշխատավորության ամրադր մասսայի կուլտուրական մակարդակը վճռականորեն բարձրացնելու հետ...

Տեխնիկական կագրերի պրոբլեմի լուծումը կուլտուրական հեղափոխության ու սոցիալիզմի հաջող կառուցման խնդիրների բայց էթիկան իրազործման կարենուազույն տարրն և հանդիսանում:

Բնակչության համատարած դրագիտության խնդրի երականացման արտագցումը, տեխնիկական կրթության խնդրի շռատափույթը բարձրացումը և ԽՍՀՄ-ում գիտության գարգացմանը պետական ուժեղ աջակցություն ցույց տալը՝ ահա այն մոռագության խնդիրները, վորոնք մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասն են կազմում:

«Բանվոր դասակարգը սոցիալիզմի նոր հաջողությունները կարող են ապահովել միայն ողայքարելով կապիտալիզմի մնացորդների դեմ, անողոք հակահարված տալով մեռնող կապիտալիստական տարրերի ընդդիմադրությանը, հաղթահարելով աշխատավորության մեջ յեղած բուրդուական ու մանր-բուրդուական նախապաշտարումները և համառ աշխատանք կատարելով նրա սոցիալիստական վերադասիտարակման համար»:

Կուլտուրական հեղափոխության այս խնդիրների լուծումը պահանջում է բարձրացնել կուլտուրական աշխատանքի տեմպերն ու վորակը, պահանջում է վերակառուցել կուլտուրական ֆրոնտի բոլոր բնագավառները և նրանց մակարդակը հասցել սոցիալիզմի կառուցման գործնական պահանջներին: Կուլտուրական ֆրոնտի առաջ խնդիր և դրվում մելլիպոնների արշավ կազմակերպել՝ տեխնիկական գիտելիքների բարձրացման, տեխնիկային տիրապետելու համար, համատարած դրագիտություն և ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացում, աշխատավոր մասսաների կուլտուր-քաղաքական լայն դաստիարակություն՝ նրանց մեջ մարքս-լենինյան աշխարհահայացքը տարածելու և դեպի աշխատանքը, դեպի հասարակական գույքն ու հասարակական հարաբերությունների նոր ձևերը գիտակցական, կոմունիստական վերաբերմունք զարգացնելու հիման վրա: Արշավ կազմակերպել աշխատավորության մեջ գիտակցական, սո-

ցիալիստական դիմոցիպլինան զարդացնելու, նրանց միջից  
անհատապաշտական, մանր-բութուական հայացքներն ու  
սովորություններն արմատախիլ անելու, աշխատավորության  
միջից կրօնական ու աղդայնական նախապաշարումները վե-  
րացնելու համար ևայլն, — մի խոսքով՝ ամբողջ աշխատավոր  
րնակչությունը զարձնել անդասակարգ, սոցիալիստական  
հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ:

Սա պահանջում է լայնորեն ծավալել կուլտուրական շի-  
նարարությունը-ընդհանուր պարտադիր ուսուցման ավար-  
տումը, նախաղպրոցական զաստիարակության, սովորեխնիկիկ  
զարդացիք զարդացումը, անդրադիտության և կիսադրագիտու-  
թյան վերացման ավարտումը, մասսայական քաղաքական ու  
կուլտուր-լուսաւորական աշխատանքի ծավալում (ակումբ-  
ների, կաբանիք անկյունների, գրադարանների, թանգարան-  
ների, կինոսերի, ուղիփոյի), թատրոնի և արվեստի մյուս  
տեսակների ցանցը), գիտական, տեխնիկական և սոցիալ-  
քաղաքական գրքերի հրատարակություն, մամուլի հետագա-  
ծավալում (մանավանդ ստորին մամուլի) և այլն, և այլն:

Սրանք են ընդհանուր գծերով կուլտուրական հեղափո-  
խության խնդիրները՝ յերկրորդ հնդամյակում:

## 2. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Դեպի սոցիալիզմ տանող ճանապարհով հետազա-  
տուաշխաղցումը հնարավոր և միայն գյուղի կուլ-  
տուրական վերելքի հիման վրա»: Ռ.Կ(Բ)Կ. XIII հա-  
մադումար

«Ելեկարական լուսավորություն, թատրոններ,  
կինոներ, գրադարաններ, գրքեր, պարկ, ասվալտած  
ճանապարհ, ավտոմոբիլներ, մեքենաներ, գնացք—  
այս ամենը կլինեն գյուղում: Բայց եկիներն իրենց  
առաջ խնդիր են զնում—գյուղի ու քաղաքի միջև յե-  
ղած հակադրությունը վոչնչացնել վոչ այնպես, վոր  
քաղաքը գյուղ գառնա, այլ այնպես, վոր գյուղն եց  
դառնա նույնպիսի առաջավոր վայր, ինչպիսին և մեր  
սոցիալիստական, բանվորական խորհրդային քա-  
ղաքը»: Լ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

Կուսակցության 17-րդ կոնֆերենցիան մատնանշեց, վոր

«կոլանտեսությունների կազմակերպչական—տնտեսուական ամրապնդման ու կորոնտեսային մտասների սոցիալիստական վերակառուցման խնդիրները յերկրորդ հնգամյակում և պետք ե լինեն ուշադրության կենտրոնում»:

Գյուղում յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրն ե «ԿՈԼԱՆՏԵՍՈՒՅԻՆ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՍՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՃՄԱԿԱՆ ԲԱՄԲՐԱՑՈՒՄԸ», «արտադրության սոցիալիստական կազմակերպումը, գյուղատնտեսության մեջ բարձր մեքենայական տեխնիկայի և ժամանակակից ադրոնմիտյի ու զուանխնիկայի բոլոր նվաճումների կիրառումը», քաղաքի ու գյուղի միջև յեղած հակառարյան լիակատար վերացման համար պայմաններ ստեղծելը». և այս ամենը բնորոշում է կուլտուրական հեղափոխության հատուկ խնդիրները գյուղում:

Համ. կ(թ)կ Կենտրոնի հոնվարյան պլենումում և Հարվածային կուլտուրեսականների համագումարում ընկլ. Ստալինի ասած ճառերը և պլենումի վորոշումները կոնկրետ ծրագիր տվին այն խնդիրների լուծման համար, վորոնք գրված են կուսակցության ու բանվոր դասակարգի առաջ դյուզում:

Կուլտուրական ֆրոնտը հեղափոխության ճակատամասերից մեկն և, ուստի և կուսակցության առաջ դրված խնդիրները միևնույն ժամանակ կուլտուրական հեղափոխության մարտիկների խնդիրներն են հանդիսանում: Մեր առաջ բացառիկ բարդ ու պատամիտանատու խնդիրներ են դրված՝ ամրապնդել կոլտանեսությունները, սոցիալիստորեն վերադաստիարակել կոլտնտեսականներին, վերջնական հարվածաւալ ջարդված կուլակության վերջին մնացորդներին, մեր բոլոր կոլտնտեսություններն իսկական բայլչեկլյան կուլտուրեսություններ դարձնել:

Մեր առաջ կանգնած ե կոլտնտեսային ու խորհուտեսային դաշտերի բերքատվությունը վնասականորեն բարձրացնելու խնդիրը:

Մեր առաջ խրդիր ե գրված—ողնել «բոլոր կոլտնտեսականներին և նախկին չքավորներին ու նախկին միջակներին, վոր նրանք բարձրանան մինչև ունելորության մակարդակը» (ՍՏԱԼԻՆ):

Այս խնդիրների լուծման համար կուսակցությունը և նրա բոլոր շարժիչ փոկերն ու լծակները գյուղում պետք ե

վերակառուցեն իրենց աշխատանքները, վերացնեն այն թերությունները, վոր նշեց ընկ. Ստալինը՝ գյուղի աշխատանքների մասին արտասանած իր ճառի մեջ, պետք է կոլտնտեսություններից դուրս շպրան կուլակներին, դաշնակներին և այլ հակախորհրդային տարրերին, լծին կոլտնտեսային արտադրության դործնական հարցերի լուծման դործին:

Դրա համար նախ և առաջ ՄՏԿայանների ու խորհանուեսությունների քաղաքաժինները, գյուղական կուսակցական կազմակերպությունները՝ պետք է կոլտնտեսություններում կուսակցական-կոմյերիտական ամրակուռ բայլշեփելյան կորից սանդեն, նրա չուրջը համախմբեն-լավագույն ակտիվ տնկուսակցական կոլտնտեսականներին, իրենց յետեւից տանեն կոլտնտեսականների ու խորհաննեսությունների բանվորների ամբողջ մասսան՝ իրականացնելու համար գյուղի սոցիալիստական վերակառուցման բայլշեփելյան պլանները:

Կուլտուրական Փրոնտի խնդիրն ե—ոժանդակել կուսակցությանը գյուղում ծավալելու մարքս-լենինյան դաստիարակությունը և նոպատուել կուսակցության ու կոմյերիտմիության անդամների տեսական ուսուցմանը, ապահովել ակտիվի քաղաքական աճումը, կոմունիզմի զաղափարների պրոպագանդա ծավալել կոլտնտեսականների՝ ու աշխատավոր մենատնտեսների լայն մասսաների մեջ, կուլտուր-գաստիարակչական լայն աշխատանք ծավալել մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար, վերացնել նրանց ընդհանուր, քաղաքական, տեխնիկական և մասնավորապես աղբու-տեխնիկական անդրադիտությունը, մի խոսքով՝ սոցիալիստորեն վերադաստիարակել նրանց և ծավալուն բայլշեփելյան աղիտացիալով համախմբել նրանց դենինյան կուսակցության չուրջը, մասսաներին պայքարի առաջնորդել արտադրական պլանների կատարման համար, պայքարի հանել դասակարգային թշնամիների դեմ և բայլշեփելյան կուլտնտեսությունների համար:

Կույտուրական Փրոնտի մարտիկները պետք է գիտակցեն իրենց գերի ամբողջ պատամիանատվությունը՝ գյուղի աշխատանքների նոր ետապում, նոր պայմաններում, դաստիարակարդային պայքարի նոր հանդամներում:

Լուսավորության աշխատավորները պետք է հասկանան, վոր դասակարգային զգոնության պակասության, «կոլտնտեսությունների դեմ բացարձակ գրոհից կամացուկ փորելու»

աշխատանքին անցած դասակարգային թշնամու մանելրները չըմբռնելու մասին յեղած հանդիմանանքը հավատար չափով վերաբերում են և իրենց և սրանից պետք և համապատասան յեղակացություններ հանեն:

Դյուզում կատարվող այն կուլտուրական աշխատանքը, վոր կտրված և սոցիալիստական շինարարության դորձնական խնդիրներից, շաղկապված չի դյուզի սոցիալիստական վերակառուցման համար կուսակցության կողմից մղվող քաղաքական պայքարին, չի ողնում այդ վերակառուցման տնտեսական խնդիրների լուծմանը, —այդպիսի կուլտուրական աշխատանքը վոչնչով չի տարբերվում բուրժուական կուլտուրաբարությունից, այդպիսի աշխատանքը մեղ խակի ձրի ել պետք չե: Մինչդեռ, մինչև այժմ ել հաճախ կուլտուրական ֆրոնտի աշխատավորներն ստիպված են լինում արդարացի կշտամբանք լսել նման ապաքաղաքական, մերկ կուլտուրաբարության համար:

Դպրոցը, միկայանը, արվեստը, մամուլը, կինոն, ուսումնական, ակումբը, գրադարանը, քաղլուսվարական, կուլտուրական հիմնարկությունների ամրող ցանցը պետք և ծառայի անդամակարդ, սոցիալիստական հասարակության կառուցման խնդրին; այդ հասարակության կառուցման համար ակտիվ ու դիտակից կառուցողներ դաստիարակելուն, այդ կառուցման ամեննորյա ու ամենժամյա կոնկրետ ու գործնական խնդիրներին:

Խորհրդային գյուղի բնության մեջ չկա այնպիսի մի կուլտուրական հիմնարկություն, —սկսած մանկամառներից ու մանկահրապարակից և վերջացրած միշնակարդ դպրոցներով, սոցկուլտուրայի տներով, —վորոնք ուղղակի և անմիջականորեն չծառայեն կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրներին, նրանց բայլըեկեկացմանը, դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարին, բերքատվության բարձրացմանը, կոլտնտեսականներին ու նեվորության մակարդակին հասցնելուն, սոցիալիստական հասարակության կուլտուրական, զարդացած, քաղաքականակենս դիտակից, տեխնիկապես գրագետ անդամներ ստեղծելու խնդիրներին:

Ց ՔԱՂԱՔԱԿԱՆ - ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՆԵԼ  
ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆՁԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ

«Ներկայումս, կոմունիզմի հաղթանակի տեսակետից քաղաքավորության աշխատանքը գյուղում ե'լ ավելի կենսական ե»: ԽԿ(բ)Կ. XIII համագումար

Քաղաքական-լուսավորության աշխատանքը, իր բոլոր բազմաթիվ միջոցներով ու ձեերով, ճյուղավորված ցանցով ու անսպառ հնարավորություններով, վորի կոչումը հենց սկզբից յեղել ե-լլնել կուսակցության հզոր զննքը կոմունիզմի պրակադանդան, մասսայական ագիտացիան ու աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացումը կազմակերպելու գործում, աներկայիս գյուղի պայմաններում, յերկրորդ հնգամյակի առաջադրած խնդիրների առնչությամբ առանձնապես կարևոր նշանակություն ու գեր և ստանում: Մինչդեռ նրա ներկա գրությունն ամենենին չի ապահովում իր առաջ դրած խնդիրների կենսագործումը:

Գարնանցանի կամպանիայի ընթացքում, յերբ կուսակցությանը հարկավոր եր ողտագործել քաղ-լուսաշխատանքների բոլոր միջոցները՝ այնպիսի քաղաքական ու պրակտիկ-տնտեսական խնդիրներ լուծելու համար, ինչպիսիք են, որինակ, —ցանքի պլանները հասցնել ցանփարներին և նրանց մորիլիզացիայի յենթարկել այդ պլանների կառարժան համար, նրանց հասցնել պետության կողմից սահմանադրության աղքանումիական օլարտադիր կանոնները և ծավալել ագրո-տեխնիկական պրոպագանդա (վաղ ցանքի համար, վարի ու ցանքի բարձր վորակի համար, քաշող ուժը նախազարդարանու համար) կամ թե հարկավոր եր մասսաներին հասցնել այնպիսի մի չափազանց կարևոր վորոշում, ինչպիսին ե պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու դեկրետը, և յերբ Խորհրդային իշխանության այս բոլոր միջոցառումների ղեմ դասակարգային թշնամին կատաղի դրույկանց, և հարկավոր եր մերկացնել կուլտակային պրովակացիան, վշըել կուլտակային սարուտաժը, կոչել մասսաներին հեղափոխական զգոնության, ղեպի աշխատանքը գիտակցական, սոցիալիստական վերաբերմունքի և այլն, հենց այդ ժամանակ բանից գուրս յեկավ, վոր իրականում նման բարդ ու պատասխանատու խնդիրներ կենսագործող քաղ-լուսավորական ցանց գոյություն չունի:

Յեզ, չոտյելով այս վիթխարի խնդիրներին, պարզվեց, վոր «շատ խրճիթ-ընթերցարաններ անդործության են մատնըվել, ուղղիսն չի աշխատում, զրքերն ուշ են հասնում գյուղ, կամ ամեննեւին չեն հասնում, կրնատված և շրջիկ կինոների թիվը, իսկ յեղածներն եւ աշխատում են ընդհատումներով և ցուցադրում են վատ նկարներ, խրճիթ-ընթերցարանները, դրսդարանները և գյուղի մյուս կուլտուրատիարակչական հիմնարկները վատ են աշխատում և չեն բավարարում կուտնաեւուականների ու աշխատավոր մենաանտեսների աճող պահանջները, այդ հիմնարկները սուր զենք չեն դարձել սոցիալիստական շինարարության անուեսական-քաղաքական խնդիրները լուծելու համար մասսաներին մորիլիզացիայի յենթարկելու գործում (Հայաստանի Կոռ. Կուռ. Կենտկոմի 1933 թ. առլրիլի 3-ի մորոշումը)։ Յեզ, գժիքադարար, բատ յերեւոյթին զրությունն այդպիս և վոչ միայն Հայաստանում ու Անդրկամիկասում, այլ և ամենուորք, ահա թե ինչու ՌԽՄՖՀ Լուսմողկոմ ընկ. Բուրնովին Արմմտյան մարզի մարզկամի քարառուղարին ուղղած իր նամակում քաղլուսաշխատանքների գրությունը բնորոշում ե այսպիս. «...յեթե պարզ խոսենք, պետք ե խոսավանել, վոր գյուղում քաղլուս աշխատանքը «Քացել» ե։

Ինչպես կարող եր պատուահել, վոր ազիտացիայի ու պրոպագանդայի այնպիսի մի հզոր լծակ, ինչպիսին քաղլուսաշխատանքն և մասնավորապես խրճիթ-ընթերցարանը, վոր դեռևս կուռակցության XIII համաշըմարի կողմից համարվեց «ամբողջ քաղլուսաշխատանքի կենտրոն», «կոմունիզմի պրոպագանդայի պետական որգան», «վորի կոչումն և ցույց տալ, «թե ինչպես պիտի կօմունիզմ կառուցել» (Լենին)՝ յերկրորդ հնգամյակի հսկայական խնդիրների առաջ հավասարվեց «չիք»-ի: Խրճիթ-ընթերցարաններն ու զրադարանները «կողպեքով վակված են մնացել», ակումբներն ու կարմիր անկյունները չեն գործում կամ զրադվում են «հին տիպի պրոպագանդանդանվով», իսկ կուլակն ու դաշնակը նույն ժամանակ բավական յեռանդուն, ճարպիկ ու ճկուն պրովակացիացիա և ագիտացիա յեն ծավալում՝ բոլոր «ողաներում», քուրսու վրա, դաշտում, մի բաժակ ողու առաջ և այլն և այլն։

Այդ տեղի յե ունեցել յերկու պատճառով. նախ այն պատճառով, վոր մի շարք կուսակցական ու կոմյերիտական

կաղմակերպություններ և ժողովուսի որդանների մեծ մասը թերազնահատել ու չեն հասկացել մասսայական քաղլուսաշխատանքի աճած գերը և տեղ-տեղ այդ թերազնահատումը հասել և պարզապես ոպորտունիստական վերաբերմունքի գեպի մասսայական ազիտացիայի ու ոլորպաղմնդայի հարցերը և, յերկրորդ, դասսակարգային թշնամու այն չափազանց վարպետուրեն ու նրբուրեն կաղմակերպած մնասարարության, վոր հանդես ե բերել նա իդեոլոգիական ֆրոնտի այդ կարևոր բնագավառում։ Վերջին հաշվով քաղլուս աշխատանքի թերազնահատման կամ ուղղակի մնասարարության արդյունքները բոլորովին միատեսակ են յեղել, — և՝ այս և՝ մյուսը հավասարապես ծառայել են թշնամու նպատակներին։

Ինչո՞վ և արտահայտմել չըջանային կաղմակերպությունների և մասնավորապես լուսբաժնի ոպորտունիստական վերաբերմունքը՝ դեպի քաղլուս աշխատանքը; Խրճիթը ընթերցարանների ու գրադարանների բյուջեները կրծատելով, նրանց միջոցներն այլ կարիքների վրա ծախսելով, խրճիթ-ընթերցարանների, թատրոնի, կինոյի և այլ քաղլուսիմնարկություններին գյուղի անմենանպեսք, խարխած (մութ, խոնավ ու կեղտոտ) շենքերը հատկացնելով, խրճիթ-ընթերցարանների ցանցի ինքնակամ կրծատումով, նրանց մեծ մասի վերացումով, (մանավանդ գրադարանների), ուղարկելով քաղլուսաշխատանքի անդրադես, անկուլտուրական, թույլ աշխատավորներ, դեպի այդ աշխատավորների նյութական-կենցաղային կարիքներն անուշադիր վերաբերմունք ցույց տալով (ցածր աշխատավարձ, մատակարարման անկաղմակերպություն, բնակարաններին վատ պայմաններ): Այդ թերազնահատումն արտահայտվել է նաև քաղլուսաշխատավորների հաճախակի տեղափոխումներով և այդ կաղերերի հոսունությանն ամեն կերպ նպաստելով, կաղմակերպված ու մեթոդական զեկավարության, հրահանգման, ոժանդակության լիակատար բացակայությամբ: Այդ թերազնահատման արտահայտությունն է նաև խրճիթընթերցարանների ցանցի պլանավորման գործում ցուցաբերած անսահման, «ձախ» պրոֆեկտորությունն ու ֆանտազյությունը, մոլիտվնորեն քանակի յետեից ընկնելն ու վորակի վրա ուշադրություն չդարձնելը (ՎիՍՀ նախատեսվել է 1932թվի 301 խրճիթընթերցարանի դիմաց 1937թվին ունենալ

4.500 իրճ.-ընթերցարան, ԱԽՍՀ 1932 թ. «գոյություն ունեցող» 621-ի փոխարքեն 1937 թվին ունենալ 4.057, Հայտատանում նմանապես): Վերջապես այդ թերզնահատման արաւակայտությունն են այն մերկ կուլտուրնիկությունը, անգաղափարականությունն ու աղաքաղաքականությունը, վոր, ինչպես վերն տասցինք, ժողուոսի բազմաթիվ սրբաների կողմից մացվել են քաղլուսցանցի մեջ:

Իսկ վնասարարներն ամենից առաջ ուղարկել են այդ բոլոր սխալներից ու մեր աշխատանքի թերություններից, ձարպկորեն խրախուսել են մեր սեփական զենքի արդ այլանդակ, «կամավոր» փշացումը, բայց, զրա, հետ միասին մեր հիմնարկություններում նստած իրենց զործակալների միջոցով կաղմակերպել են սիստեմատիկ վնասարարությունն (Փինըաժիններում, լուսրաժիններում, փոստում, զրավաճառանոցներում, ռազմի ֆիկացիայի, կինոյի սրբաններում և այլն): Այդ կուլակ-զանակացին զործակալները ևս գործել են վոչ թե ուղղակի զըսհօվ, այլ գաղտաղովի: Թշնամու այդ զործակալն իրեն բարեկամ ձեւացներու «խորհուրդ և տալիս» դպրոցի կարիքները հսկող խրճիթ-ընթերցարանի միջոցներից, միլիցիայի ձիերի կերպ համար սպազործել այն միջոցները, վոր նախատեսված են զյուղի համար զրականություն ձեռք բերելու: Այդպիսի զործակալները նպաստում են նաև խրճիթ-ընթերցարանների ուղղիու լուսրանների, ակումբների կահավորությունն ու դույքն ուղղակի կողապետուն ու վոչնչացներուն: Անձամբ իրենք (Հանցանքի մեջ չբռնվելու համար) դուցե և սեղաններ, աթուաներ, ուագիուապարատներ չեն վերցնում, ուկայն շատ վարպետորեն կաղմակերպում են այդ դույքի ցաք ու ցրիվ տալիք շրջանային աշխատավորների կողմից: Անրջապես կտավի ու դրաժամառման որդաններում նստած վնասարարները փակցնում են գյուղի համար այս կամ այն անտեսական-քաղաքական կամպանիայի մասին հրատարակված զբարեն ու բրոշյուրները, ուղարկում են սխալ հասցեներով (թրքական զրականությունն ընկնում և հայկական գյուղ և ընդհակառակն), ուղղակի վոչնչացնում են այդ զրականությունը և ամեն կերպ աշխատում են, վոր գիրքը գյուղ չհասնի, կամ տեղ հանի միայն այն ժամանակ, յերբ արդեն նրա ժամանակն անցել է (զարնանացանին վերաբերող գրականությունը գյուղ և հասնութ ամառը):

Նույնն են անում նրանք նաև թերթերի նկատմամբ:

Յել, պետք ե խոստովանել, նրանք զգալի չափով հաս-  
նում են իրենց նպատակին: Մեր գյուղը գրքի սով և զգում  
այն ժամանակ, յերբ կուսակցությունն ու պետությունը վոչ  
մի միջոց չեն խնայում թերթեր, մասսայական, հանրամատ-  
չելի գրքեր հրատարակելու համար:

Ահա թե ինչ պատճառներ են քաղլուսաշխատանքը  
հասցըել այնպիսի վիճակի, վոր նա դարձել ե անպետք, ա-  
նողութ և չի կարող ուժեղ զենք լինել կուսակցության ձեռ-  
քում՝ սոցիալիզմի համար պայքարելու, սոցիալիստական  
շինարարության այսորվա դործնական խնդիրների լուծման  
գործում:

Այնինչ այսոր մասսայական քաղաքական լուսավորու-  
թյունը կուսակցության ձեռքում պիտի մի հզոր լծակ լիներ  
այն տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման համար,  
վոր այժմ դրված են մեր առաջ: «Հին ձեի պրոպագանդայի»  
փոխարեն այժմ պետք ե կուտնաեսականներին ու մենատըն-  
տեսներին «գործնականորեն ցույց տալ, թե ինչպես պիտի  
սոցիալիզմ կառուցել» (Լենին), ոգնել կուսակցությանը՝  
կուտնաեսությունները բայց չեի կայան դարձնելու, բայց չեի կ-  
յան կորիզը տեսականորեն զինել, նրա շուրջն ակտիվ հա-  
մայնք բել, դաստիարակել կուտնաեսային ակտիվը, զինել նրան  
ժարքութենինյան աշխարհմանց քոյլ, ոգնել նրան տիրապետե-  
լու արդյունաբերության տեխնիկային, դաստիարակել ու  
վերադաստիարակել այսորվա մենատնտեսովազմական կուտնաե-  
սականին, գործնականորեն ոգնել կուտնաեսությունների  
կազմակերպական-տնտեսական ամրապնդմանը և առաջազոր  
կուտնաեսությունների գրական փորձի ցուցադրումով, կու-  
տրնաեսությունների աճումն ու ամրացումն արգելակող յե-  
րեվույթների հայտաբերումով վերադաստիարակել մասսա-  
ներին, բարձրացնել նրանց քաղաքական ինքնադիտակցու-  
թյունը, նրանց հեղափոխական զգոնության կանչել, տանել  
նրանց զենքի անողոք պայքար՝ վոչնչացնելու համար գեռ  
վերջնականապես չժախճախված դասակարգային թշնամու-  
մնացորդներին, նրա գործակալներին, նրանց ոժանդակողնե-  
րին, լողիքներին, գործալիքներին, գոփողներին, դատարակա-  
պորտներին; ջախճախել բոլոր գույնի սպարտունիզմը, մաս-  
սաներին համախմբել սոցիալիզմ կառուցող լենինյան կու-  
տակցության շուրջը:

Հենինը մեղ առվորեցրել եւ, վոր յուբաքանչյուր պրոպա-  
գանդիստ—ազիատասորի հիմնական խնդիրն եւ—զմասահերին  
կապել առաջին հերթին ընդհանուր տնտեսական հյանքի շո-  
նարարության հետ»։ Այսոր այդ նշանակում եւ, վոր քաղ-  
լուավարական ցանցը պետք եւ, առաջին հերթին, իր մասսա-  
յական, ազիատացիոն ու պրոպագանդիստական աշխատան-  
քով մասսաներին կաղմակերպի քանակապես ու վորակապես  
կատարելու ժողովանեսական պլանը, կատարելու և դերակա-  
տարելու ցանքի, նրա մշակման, քաղհանի պլանները, մոլո-  
խութերի զեմ պայքարելու, բերքահավաքի պլանները, —պայ-  
քարի հանի բներքատվության բարձրացման համար, աշխա-  
տանքի սոցիալիստական մեթոդների, բորձր, գիտակցու-  
կան աշխատանքային դիսցիլինայի, սոցիալիստական սե-  
փականության պահպանման եւ, պետության հանդեպ ունե-  
տեղ պարտավորությունների լրիվ կատարման համար։

«Քաղլուավարության աշխատանքի արդյունքները  
կարելի յեւ չափել միայն տնտեսական շնորհարության մեջ  
ունեցած հաջողություններով» (Լենին)։

Վյապես խոշոր, բարդ ու պատասխանառու յեն այն  
խնդիրները, վոր գրված են քաղլուս աշխատավորների առաջ։  
Դժվար, բայց վերին աստիճանի պատվավոր խնդիր ե լինել  
կուսակցության ողնականը սոցիալիզմի կառուցման ներկա-  
ետապում։ Այժմ արդեն բավական չե միայն քաղաքական  
ազիատացիան, այժմ հարկավոր ե «կութնանեսականներին ող-  
նել՝ իրենց տնտեսությունը վարելու գիտության ու տեխ-  
նիկայի հիման վրա» (Ստալին)։


Սակայն այս առաջնակարգ խնդիրների շարքում ե նրանց  
լուծման համար քաղլուսաշխատանքը պետք ե պայքարի  
մասսաների ընդհանուր կուտուրական մակարդակի բարձ-  
րացման համար, քաղաքի ու գյուղի կուլտուրայի «մկրատի»  
վոչնչացման, նոր, սոցիալիստական կենցաղի համար։

Վորովչետև «քաղաքական լուսավորություն նշանակում  
ե տալ ամեն ինչի հանրադումարները» (Լենին)։

Վորաբեսզի կարելի լինի քաղլուսաշխատանքը հասցնել  
յերկորդ հնդամյակի խնդիրների մակարդակին, դարձնել  
այն կուսակցության հավատարիմ ողնականը՝ գյուղի սո-  
ցիալիստական վերակառուցման համար մղվող ամենորյա-  
պայքարում, հարկավոր ե վճռականապես արմատախիլ անել  
աշխատանքի բոլոր թերությունները, այն բոլոր պատճառ-

ները, վորոնք քաղլուս-աշխատանքը հասցըել են այդքան խցանեկ, վողորմելի վիճակի: Պետք ե բայլչեկըրեն հարվածել իդեոլոգիական Փրոնտի այդ կարևորագույն ճակատամասի ոպորտունիստական թերագնահատմանը, մերիկ կուլտուրինիկությանը, պետք ե բարձրացնել դասակարգային զգոնաթյունը ժողովուսի բոլոր մարմիններում, անողոքաբար արմատախիլ անել կուլտուրական Փրոնտում յեղած մինասարարությունը: Անհրաժեշտ է բարձրացնել կուլտակցական ու խորհրդային կազմակերպությունների պատասխանատվությունը՝ դյուզի քաղ-լուսաշխատանքի զրության ու վորակի համար, այդ գործի կազմակերպմանն ու զեկավարությանը ընել ՄՏԿ և խորհանտեսությունների քաղլագիններին, իրականացես կազմակերպել պրոլետարական քաղաքի ոգնությունը դյուզի կուլտուրական վերելքին, դյուզին տալ իսկական և վոչ թե «Ծղկթի» կուլտ-շեֆեր, կոմյերիտմիությանը կոչ անել հատարելու կուլտուրական հսկութանակի մարտինների իր անմիջական ու վիթխարի պարտականությունները, մորիլիզացիայի յենթարկել իր բոլոր ուժերն ու միջոցները՝ կուլտուրական աշխատանքի վորակն ամեն կերպ բարձրացնելու համար, այդ աշխատանքի վորակը սոցիալիստական շինարարության խնդիրների աճող պահանջներին հավասարեցնելու համար: Հարկավոր ե բայլչեկըրեն լուծել դյուզական քաղ-լուս աշխատավորների կադրերի խնդիրը, —տգետ, վարկարեկված և վոչ մի հեղինակություն չվայելող խրճիթվարի փոխարեն դյուզին տալ բարձր վորակի, զարգացած, միանգամայն կուլտուրական քաղլուս աշխատավոր: Գյուղին տալ ամենակուլտուրական կոմունիստաներ ու կոմյերիտականներ, տալ բարձրագույն կրթությամբ մարդիկ, լավագույն պրոպագանդիստներ ու ագիտատորներն այդ պիտի անել ինչ գնով ել լինի՝ դյուզում կուլտուրական հեղափոխությունն իրագործելու համար, քաղաքի ու գյուղի միջնե յեղած կուլտուրայի «մկրատի» վերացման համար:

Դրա հետ միասին պետք ե վերանայել քաղլուս-աշխատանքի Փինասավորման ամբողջ սիստեմը, վճռականակես հրաժարվել այդ նպատակի համար փշանքներ նետելու միանգամայն անպետք սովորությունից, վերացնել մինչեւ այժմ գոյություն ունեցող անիմաստ հավասարեցումը քաղլուսաշխատանքի բյուջեների մեջ (յերբ բոլոր խրճիթ-ընթերցարանները հավասար գումար են ստա-



նում), իրապես բարձրացնելու ամբապնդել այդ աշխատանքի նյութական-տեխնիկական բազան։ Յեկը, վերջապես, վերակառուցել քաղլուսաշխատանքի ամբողջ սիստեմը, վոչ միայն նրա ցանցի ընդլայնման իմաստով, աշխատանքի վորակի բարձրացման, նրա մեթոդների փոփոխման իմաստով, այլև և հենց հիմնարկությունների տիպը վերակառուցելով, քանի վոր ներկայիս քաղյուս հիմնարկներն առեղծվել են միանգամայն այլ պաշտաններում և այսորվա կուտանտեսական ու Հաջողությամբ կոլեկտիվացող գյուղի համար անպետք են և հնացած։ Ինքնին հասկանալի յէ, վոր այդ վերակառուցումը, աշխատանքի բովանդակության բարելավումը, ամբողջ քաղլուսաշխատանքի բարձրացումը չի կարող նախազգել խաղաղ կարինետներում, այլ Հաջողությամբ կարող ե կատարվել միմիայն կուսակցական, կոմյերիտական, աշխատավորների, կուլտուրական ֆրոնտի մարտիկների, կորոնուսային ակտիվի, ամբողջ խորհրդային հասարակայնության լայն մասսաների ոժանդակությամբ։ Դրա համար ել այդ հարցերը պետք ե մասսաների և ամենից առաջ կուտանտեսականների, ՄՏԿայանների ու խորհրդակառությունների բանվորների լայն քննության նյութ դարձնել։

Այդ խոչընք և չափազանց կարևոր աշխատանքի ոկտղբն արգեն դրված ե ՀԿ(ը)Կ Կենտկոմի 1933 թ. ապրիլի 1-ի Հայտնի վորոշումով՝ «Խորհիթ-ընթերցարանների վերակառուցման մասին»։ Այդ վորոշման կենսագործման առաջին խոկ ամիսները ցույց ավին այդ միջոցառման կենսունակությունը ճիշտ ու ժամանակին լինելը։ Այն շրջանները, վորոնց արդեն և բայց նիկորեն լծվել են այդ վորոշման կենսագործմանը, վկայում են մասսաների համակրանքի ու Խոչընք հետաքրքրության մասին դեպի գյուղի կյանքի կուլտուրական կյանքի նոր ոլախները։ Հենց այդ մասին ե, վոր պիտի խոսենք ստորև։

ՀԱՅԱԳԱՎԱՆ - ԼՈՒՍՎԱՐՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ-  
ՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ԳՅՈՒՂՈՒՄ - ԲԱՐ-ԼՈՒՍՎԱՐՄԱԿԱՆ ՀԻՄԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԻՍՏԵՄԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

«Ագիտացիան, պրոպագանդան և կուլտուրական աշխատանքը հանդիսանում են կուսակցության կարելորագույն լծակները մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և կուսակցության ու բանվոր գառակարգի խնդիրների շուրջը կազմակերպելու գործում»:

Պատիշել:

Քաղլուսցանցի վերակառուցման հիմքում պետք է դրված լինեն հետեւյալ հիմնական սկզբունքները\*):

ա) «Աշխատավորությանը լիովին ընդգրկել քաղլուսաշխատանքով, մաքսիմալ չափով զարգացնելով քաղլուսավորական հիմնարկությունների հասարակական (ամենից առաջ կոլտնտեսական) ցանցը»:

բ) «Երացնել քաղլուս ցանցի ծավալման գործում յեղած հավասարաբարական մոտեցումը, ապահովել սոցիալիստական չինարարության առաջատար ճակատամասերում զբաղված աշխատավորության-Առաջին հերթին արդյունաբերության, տրանսպորտի, խորհրդական գործունեությունների ու ՄՏԿ բանվորների և կոլտնտեսային ակտիվի ավելի բարձր չափի սպակումը»:

գ) «Ամրապնդել ու ընդարձակել քաղլուս հիմնարկությունների պետական ցանցը շրջանային ու դյուզական կենտ-

\*). Այս սկզբունքներն առաջադրվել են ԼԿԽինգրագի քաղլուսաշխատավորների բրիգադի կողմից և ընդունված են վորպես հիմք ՌՍՖՀԽՀ ԼԺԿ քաղլուսակտորի կողմից: Նույն սկզբունքը դրված են Յերկը. (մարզ.) Լուսաժինակը իրավաբանական խորհրդակցության բանաձեռի հիմքում և հաստատված են ՌՍՖՀԽՀ ԼԺԿ կողմից:

բոններում, այդ հիմնարկությունները գարձնել կուլտուրական հզոր կենտրոններ և գրանով խոկ նրանց գարձնել զիկավարության ու կազմակերպական-մեթոդական ողնության ինքնագործ (հասարակական) հիմնարկությունների իրական կենտրոններ (կորոնտեսական ակումբներ, կարմիր անկյուններ և այլն):

դ) Ստեղծել քաղյուս հիմնարկությունների այնպիսի նոր տիպեր, վորոնք բոլորում են ծավարիոզ ՄՏԿայանների, փայտամթերման և անտառահանման մասերի, ձկնորսարանների ու նոր կառուցումների արտադրակոն առանձնահատկություններից:

ե) Ծագալել քաղյուս հիմնարկությունների նոր շինարարությունը և քաղյուս աշխատանքն արվելի բարձր նյութական-առեխնիկական բազայի վրա գնել մասնավորապես այն բնագավառներում, ուր պահանջվում է մաքսիմալ չափերով ծագալել աշխատանքի շրջիկ ձեերը (ՄՏԿ, անտառ, ձկնորսարաններ և այլն):

զ) Պատրաստել քաղյուս աշխատավորների այնպիսի վորակյալ կադրեր, վորոնք կանգնած լինեն քաղյուս աշխատանքին առաջադրվող խնդիրների մակարդակի վրա, տիրապետական թիվն զործի տեխնիկային: Այդ նպատակով ստեղծել ուսումնական հասաւառությունների հատուկ ցանց, մարզակին կոմունիստական քաղյուսավորական ինստիտուտներ շրջանային ողակի աշխատավորների համար, կոմունիստական քաղյուս առեխնիկումներ՝ զյուղական ողակի աշխատավորների համար, մինչև հնգամյակի վերջը վերջնականագեն վերացնել կադրային կազմի կարճատե նախապատրաստությունը և կարճատե ցանց ծագալել կուլտ-ակտիվ նախապատրաստելու համար (հիմնարկության վարիչներ, խմբակների ղեկավարներ և այլն):

Ներկայումս (կամ ավելի ճիշտ՝ մինչև վերակառուցուցումը, այսինքն՝ մինչև 1933 թ. մայիսը) Հ. Խ. Ս. Հ.-ում գոյություն ուներ 358 խրճիթ-ընթերցարան: Յեթե չխօսենք նրանց աշխատանքի վորակի մասին, հենց խրճիթ-ընթերցարանների այդպիսի նոսր ցանցն ել միանդամայն անրավարար և Հայաստանի բոլոր գյուղերին ապասարկելու համար: Գյուղերի ճնշող մեծամասնությունը չունեն վոչ խրճիթ-ընթերցարաններ, վոչ գրադարաններ, վոչ ռադիո և վոչ ընդհանրապես վորեւ քաղյուս աշխատանքի շրջանակից:

Ենքնըստինքյան հասկանալի յեւ, վոր ժողովրդական-  
անստեսության պլանի կատարման համար մզվող պլայքարում  
ամենեւին եւ բավական չի բուսարանեւ, ագիտացիա մզեւ և  
Ֆագմակերպեւ դյուլացիության միայն մի մասը, այն եւ  
փոքր մասը: Միանգամայն ակնհարտ, և, վոր քաղլուսաշխա-  
տանքը վերակառուցելիս առաջին հերթին անհրաժեշտ ե  
միջոցներ վորոնել ընդդրկելու, առանց բացառության, բո-  
լոր դյուլերը, բոլոր բնակավայրերը: Այդ ի հարկեւ, չի նշա-  
նակում, թե պետովթյունն իր առաջ խնդիր պիտի դնի իր  
բյուջեյի միջոցներով խրճիթ-ընթերցարաններ ու ակումբ-  
ներ կառուցել բոլոր բնադավառներում, յեթե նույնիսկ նրանք  
չափազանց փոքր լինեն: Խոսքը վերաբերում ե նրան, վոր  
ամենից առաջ հարկավոր և լայնորեն ծավալել ինքնադործ  
Հասարակական կազմակերպությունների-կոլտնտեսային ա-  
կումբների, կարմիր անկյունների ցանցը և գործնականում  
ստեղծել կուլտ-կազմակերպիչների-բնթերցողների ինստի-  
տուտ, վորոնք կհանդիսանան յերկրորդ հնդամյակի հզոր  
կուլտ-մարտիկները: Պետք և քաղ-լուս աշխատանքի ծանրու-  
թյան կենտրոնը վճռականորեն մոտեցնել մասսաներին, ար-  
տադրության վճռական ու առաջատար բնադավառներին և  
առաջին հերթին ընդդրկել նրանց կարևորագույն ողակները:  
Այդ նշանակում ե, վոր պետք և հարժարվել նախկին  
խրճիթ-ընթերցարաններից, վորոնք սպասարկում եյին դի-  
մապարեկ կերպով անխտիր բոլոր դյուլացիներին, այն  
խրճիթ-ընթերցարաններից, վորոնք պարփակված եյին ի-  
րենց գյուղի սահմաններում և իրենց ամբողջ աշխատանքը  
սահմանափակում եյին բացառապես իրենց հատկացված շեն-  
քի պատերի ներսում: Հարկավոր և աշխատանքը շարժելնախ և  
առաջ դեպի կոլտնտեսության արտադրական բրիգադը, դե-  
պի ֆելան, դեպի մենատնտեսների «տասր տունը» կամ  
«քսան տունը» և ուշադրությունը կենտրոնացնել ամենից ա-  
ռաջ կոլտնտեսային ակտիվի սպասարկման վրա, ծավալել  
աշխատանքի ճկուն ու շրջիկ ձեւերը և քաղլուս աշխատանքի  
համապատասխան տեմպերը կոլտնտեսականներին դյու-  
ղատնտեսական բանվորներին ու մենատնտեսներին հենց ար-  
տադրության վայրում՝ դաշտում սպասարկելու համար  
(ագիտ-ավտոմոբիլներ, ագիտ-ֆուրգոններ, ագիտ-սայ-  
լակներ, շրջիկ կարմիր անկյուններ, գրադարաններ, շրջիկ  
կիսու և ուղիղ բրիգադային պատի թերթեր և այլն և ունենալ

նույնպիսի շաբժուն աղիտատորներ ու պրոպագանդիստներ՝ կուլտ-կազմակերպիչընթերցողներ, աղիտ-կարոնաներ, գեղարվեստական բրիդագներ և այլն):

Վոչ մի բոպե չմոռանալով մենատնտեսների-այդ վազվա կոլանունեսնկանների կուլտ-քաղաքական սպասարկման խնդիրները, չժուլացնելով աշխատանքը նրանց մեջ, այսուամենայնիվ աշխատանքը վերակառուցելիս պետք է հիշել, վոր հատկապես կոլտնտեսության ու խորհութեսության արտադրական բրիգադն է, վոր այժմ հանդիսանում է կուսակցության կողմից գյուղում տարփող տնտեսական ու քաղաքական աշխատանիկի կենտրոն:

Քաղուս-աշխատանքների ծանրության կենտրոնը մասաների մեջ փոխազբելու սկզբունքը նշանակում է ցանցի ընդարձակում ու ծավալում, աշխատանքի տուանց այն ել բազմաթիվ ձևերի եւ տվելի բազմացում, վորն անկառկած, բարձրացնում և այդ աշխատանքը զեկավարող որդանների պատասխանատվությունը, բարձրացնում և աշխատանքի կազմակերպման ու մեթոդական գեկալարությունը: Ակնհայտ է, վոր ցանցի այդպիսի ընդարձակումն ու աշխատանքի ձեվերի բազմացումն իր հետ պիտի բերի նաև զեկավարության ամբացում և նրա սիստեմի տյնպիսի փոփոխություն, վորը նույնպես մոտենա մասսայական ցանցին: Յեկի իրոք, կարո՞ղ է արդյոք հենց թեկուզ ներկայիս քաղ-լուս հիմնարկությունների ցանցը զեկավարել կազմակերպական ու մեթոդական զեկավարության ներկայիս սիստեմը, հանձին շրջանային կենտրոնում յեղած միակ քաղ-լուստեսչի (վորն, ի դեպ ասած, վոչ բոլոր ըրջաններում կա և շատ քիչ և պատահում, վոր յեղածն ել իր վորակով համապատասխանում է իր կոչմանը): Իրականությունը ցույց է տվել այդ սիստեմի իմակատար անպետքությունը, ըրջուսրաժնի անընդունակությունը՝ մանավանդ մեթոդական տեսակետից: Ներկայիս շրջանային քաղլուս ցանցը հաշվվում է 10-15 խրճիթ-ընթերցարան, մի քանի գրադարան, տասնյակներով լիիկայաններ, տասնյակներով ռադիո-կետեր, ստացիոնար-կինոներ և շրջիկ կինոներ, թատրոններ, ինքնազործ խմբակներ և այլն: Այսքանն ել արդեն բավական է հասկանալու համար, վոր անհրաժեշտ է այս աշխատանքների համար լուրջ, ամուր, ոպերատութիվ կազմակերպչական ու մեթոդական զեկավարություն ստեղծել: Իսկ յեթե սրան ավելացնենք կարմիր ան-


կյունների, կուրանտեսային ակումբների, հարյուրավոր կուրտ-կազմակերպիչների ու ընթերցողների, տասնյակներով ըրջիկ ագիո-խմբակների (սայլեր և այլն), ծավալուն ոտքիո, կինո և թատրոնական ցանցը, ագրոտեխնոլոգագունդայի լայն ճյուղավորմած սփոտեմն իր ագրո-կարինետներով, գյուղատնտեսական գանցը, գրատարությունը և այլն, —ապա ե՛լ ամենի տկների կլինի, վոր անհրաժեշտ և վերակառուցիլ զեկավարություն սիստեմը: Ամենից առաջինքնին ծառայությունը կազմական հաջող կերպով լուծվել է գետես 1930 թվին: Ամենից այլպիսի կեննարանն են Հանդիսանում սոցիալիստական կուրտերայի Տները: Անհրաժեշտ և մեզ մոտ փոխադրել այդ ինքն իրեն լիովին արդարացած փորձը: Սակայն սոցիալիստական կուրտերայի շրջանային Տունն ել, ինչպիսի մեծ հաստիք ու ապարատ ել ունենա, ի վիճակի չի լինի այնպիսի ամենորյա ու սպերատիվ զեկավարություն ցույց տալու ամբողջ շրջանային ցանցին, ինչպիսի զեկավարություն պահանջվում է այժմ: Դրա համար ել մեզ թվում և միանգամայն ճիշտ յենթաշրջանային զեկավար կենտրոններ ստեղծելու գաղափարը (խոշոր գյուղպետուրդներին կից), ինչպիսիք են սոց-կուլտուրայի գյուղական Տները, կամ ինչպիսի մենք անվանում ենք Հայաստանում—գյուղական ակումբները: Շատերը, ովքեր մինչեւ այժմ գեռ չեն հասկացել ներկայում քաղլուս ցանցում տեղի ունեցած վերակառուցման եյտթյունը, սկզբունքային տարրերություն չեն տեսնում նախկին խրճիթ-ընթերցարանների և ներկայիս գյուղական ակումբների միջև, կամ այդ առրերությունը տեսնում են մակերեսորեն, միայն արտաքուստ-րյուջերի աճումով, ավելի վորակյալ աշխատավորներով և այլն: Մինչդեռ գլխավոր տարրերությունն այն է, վոր բացի աշխատանքի վորակի բարձրացումից և ի տարրերություն խրճիթ-ընթերցարանների, վորոնք ինքնամփոփ միավորներ եյին, գյուղական ակումբը (կամ սոց-կուլտուրայի գյուղական տունը) զեկավարում է այն բոլոր կարմիր անկյունների, կուլտակազմակերպիչ-ընթերցարանների, ուղղիոնների, կինոների և այլնի ցանցը, վորոնք գտնվում են նախապես այդ ակումբի համար սուհմանված աղբեցության տարածման շրջանում:

Քաղլուսովարության հիմնաբնիքի շրջանային նոր սխալների կարելի յէ պատկերացնել Հետևյալ սխեմայով\*):

1. Ամեն մի շրջանային կենտրոնում պետք է ստեղծվի առց-կուլտուրայի ու տեխնիկայի շրջանային Ժուն:

2. Յենթաշրջանային խոշոր դյուզերում (դյուզխոր-

### Համաձայն այս սխեմայի՝



\* ) Մոռավորապես ալսողն և Լենինգրադի քաղլուսի սխեման:

Հուրդները) պետք է ստեղծվի սոց-կուլտուրայի և տեխնիկայի գյուղական ջուն:

3. ՄՏԿայաններում (վորոնք իրենց գործունեյությամբ պյուղխորհուրդների մի ամրող խումբ են ընդգրկում), ստեղծվում են կուլտ-բազաներ, վորոնք իրենց կազմում ունենում են ակումբ՝ ՄՏԿայանի բանվորների ու տվյալ վայրի կոլտնտեսականների համար և շրջիկ աշխատանքի բազտ: Յեթե ՄՏԿայանը գտնվում է շրջանային կենտրոնում կամ գյուղում, կուլտ-բազան կազմակերպվում է սոց կուլտուրայի ու անխնիկայի գյուղական կամ շրջանային Տանը կից:

4. Կոլտնտեսություններում ստեղծվում են կոլտնտեսային ակումբներ և կարմիր անկյուններ (նայած տվյալ կոլտրնտեսության մեծությանն և ուժեղությանը), վորոնք դանդում են կոլտնտեսային սիստեմի ղեկավարության տակ:

5. Կոլտնտեսային արտադրական բրիգադների թվի համարատասխան և, նայած անհրաժեշտության չափին, մենատնտեսներին սպասարկելու համար ընտրվում են բրիգադների կուլտկազմակերպիչներ և ընթերցողներ:

Ստորին ցանցի գեկավարության սիստեմի և մասնավորապես շրջանների ու ՄՏԿայանների քաղաքաֆինների փոխհարաբերության հարցերի ավելի պարզության համար տռավիս ենք մի քաղվածք ՌՍՖՀ Հյերկային ու մարզային լուսաւագարների 1933 թ. վետրվարի Խորհրդակցության բանաձեւից\*).

\*) Այս բանաձեւում դեռևս պահպած ե խրճիթ - ընթերցարան անունը Ալգ անունից մենք հայաստանում հրաժարվել ենք և վոչ առանց հիմքի: Առա թե ընկ. Թուրնովն ինչ ե գրում ալդ հարցի մասին՝ Համ.Կ(ը)կ Արևմտյան մարզկոմի քարտուղար ընկ. Ռամյանցին.

«Թրճիթ-ընթերցարան» անունը բավական վոչ հարկի և վերջին տարիներս իրեն բոլորովին վարկաբեկված անուն եւ գրա համար ել մենք չենք առարկում, վոր գյուղական «քաղղուս-աշխատանքի ալդ կենտրոնը» կոչվի գյուղական ակումբ, թեև ալդ անունը ևս մեզ չի կարող լիովին բավարարել: Ի հարկե խնդրի եյությունն անվան մնջ չե, ալլ եյականն այն ե, թե կոլտնտեսային գյուղում մասսայական քաղղուսաշխատանքն ինչ բնույթով, ինչպիսի թափով և ինչ բովանդակությամբ և կատարվում: Ինչպես հալտնի լե, ՌԽՍՖՀ-ում արդեն ընդունել են Սոցկուլտուրայի տուն, գյուղական և կոլտնտեսային ակումբ և ալլ անունները.

ո) «Նկատի անենալով, վոր ներկայումս զյուղի մտա-  
սոյական քաղ-լուս աշխատանքների զեկալարությունն ամ-  
բազնդելու գործում խոչըր գեր պիտի խաղան քաղ-բաժին-  
ները, ժողավրդական լուսավորության որդանները պարտա-  
վոր են կարծ ժամանակամիջոցում այնպես անել, վոր Լժե-ի  
և նրա տեղական որդանների քաղլուսհիմնարկությունների  
ամբաղջ ցանցն իրական զենք գտնան ՄՏԿ-ների և խորհ-  
ուրնտեսությունների քաղլրաժինների ձեռքում՝ մասամայ-  
կան քաղաքական լուսավորության գործում։ Խորհրդակցու-  
թյունը պարտավորեցնում է Յերկը. (մարզ) լուս բաժվար-  
ներին և շրջլուսորաժմարներին՝ մտասայտեան քաղլուս-ա-աշ-  
խատանքների ծավալման պրանները կազմել՝ յենելով այն  
ընդհանուր խնդիրներից, վոր Կենակոմի և ԿՎՀ-ի հունվար-  
յան պինումը գրել և ՄՏԿ-ների և խորհուրնտեսությունների  
քաղ-բաժինների սուաջ։ Յերկը. (մարզ.) Լուսրաժինների  
քաղլուսսեկտորների պլանները պիտք և համաձայնեցված լի-  
նեն Հողվարչությունների քաղ-սեկտորների հետ։

բ) Քաղլուսաշխատանքի ծանրության կենտրոնը վճռա-  
կանորեն պետք և փոխադրվի կորոնտեսային բրիգադ, կոլ-  
տրնտեսությին տկումը ու կարմիր անկյուն։ Մի ամսվա ընթաց  
քում պետք և յուրաքանչյուր կորանտեսային բրիգադի հա-  
մար առանձնացվի կուրտ-կազմակերպիչների կաղը, խոտորեն  
ընտրելով նրանց լավագույն հարվածային կոլտնտեսականնե-  
րից, այն պայմանով, վոր նրանց անպարման սիստեմատիկա-  
բար հրահանգներ տրվի և ամեն կերպ գործնական աջակցու-  
թյուն ցույց տրվի իրճիթ-ընթերցարանների կողմից, վորոնց  
աշխատանքն անհապաղ պետք և վերակառուցվի՝ հարմարեց-  
նելով այն կոլտնտեսային կարգերի առանձնահատկություններին գյուղում։

Ազորեջանում և Վրաստանում, հիմնականում ընդունելով քաղ-  
լուս աշխատանքի վերակառուցման վերոհիշյալ սկզբունքները, պարզ  
չեն, թե ինչու չեն հրաժարվի սարճիթ-ընթերցարան անունից։

Անդրկովկասում սոց-կուլտուրաի տուն անվանը խիստ զուսպ և  
վախով մոտեցան։ Շատերն այդ խիստ բարձրագոչ անուն են համա-  
բում։ Բոլորովին ի զուրությամենանիվ կոչումը պարտավորեցնում  
է, իսկ վախենալ արդ կոչումից, նշանակում և վախենալ աշխատանքի  
թափից, չափատակ իր ուժերին և նաև ինչպես կարելի յև սոցիալիստա-  
կան հասարակություն կառուցել՝ առանց աշխատանքի ուժեղ թափի։

գ) Քաղղուսաշխատանքի լավացման ընթացքում վերակառուցվող խրճիթ-ընթերցարանը, ցանքսի կամովանիայի կապակցությամբ ամենուրյա քաղաքական և հարահանդչական-մեթոդական զեկավարություն ե ցույց տալիս կարմիր անկյան աշխատաղներին և կուլտակազմակերպիչներին, աշխատանք ե տանում կուլտակատիվի հետ և կոլխոզներում ու մենատանտես-ների մեջ կազմակերպում և մասսայական քաղղուսվարու-թյան գործը:

դ) ՄՏԿ գործնեյության կենտրոնում ստեղծվում են քաղ-լուս բազաներ, վորոնք ժողովրդական կրթության որդաննե-րի հենակետերն են ՄՏԿ գործնեյության շրջանում, խրճիթ-ընթերցարանների, ակումբների ու կարմիր անկյունների զե-կավարության գործում:

Լուսրաժիններն իրենց ամբողջ քաղղուս աշխատանքը կազմակերպում են ՄՏԿ և Խորհանտեսությունների քաղաքա-ժինների հետ ամենասերտ կազ պահելու և տվյալ խնդիրները խառորդն նրանց համաձայնեցնելու հիմունքով:

յե) Յերկրամասներում, մարզերում ու շրջաններում անհրաժեշտ ե ծավալի յերկրային, մարզային և շրջանային քաղղուսկենտրոնները (քաղղուս բազաները), վորոնց նպատակն է ընդհանուր զեկավարություն և մեթոդական ոգնու-թյուն ցույց տալ բոլոր քաղղուս հիմնարկներին, տալով անդ հրաժեշտ ձեռնարկներ և սարքավորանք՝ մասսայական, քա-ղաքական, գեղարվեստական և խմբակային աշխատանքի համար:

Մենք միանգամայն նպատակահարմար ենք համարում կազմակերպել հանբապետական քաղղուսխորհուրդ, վորի մեջ պետք և մտնեն ներկայացուցիչներ կուսակցության ու կոմ-յերիտմիության կենտրոններից, Հողժողկոմատին կից՝ ՄՏԿ-ների քաղվարչությունից, Լուսժողկոմատից, Պազր-Ավիաբիմից, Փիզկուլտուրայի խորհրդից, ՀԱՄԽ-ից, Հայ-կինոյից, Ռադիո-կենտրոնից և Ռադիո-հաղորդումից, Պետ-հրատից, Կուսհրատից, Ադրուեխապատկանդի Հանրապե-տական կենտրոնից և այլ կազմակերպություններից, վորոնք գյուղում մասսայական քաղ-դաստիարակչական և կուլտու-րական աշխատանք են կատարում: Նույնպիսի խորհրդներ պիտի կազմակերպվեն շրջանային համապատասխան կազմա-կերպությունների ներկայացուցիչներից, —շրջանային կենտ-րոններում, սոցկուլտուրայի տներին կից և, մինչեւ նրանց

կազմակերպումը, ՄՏԿ քաղվարչություններին (այնուհետ, վորտեղ նրանք կան) կամ շրջուստաժիններին կից»:

ՌԽՖՍՀ յերկրային լուսրաժինների խորհրդակցության բանաձևից բերված այս հատվածն այնքան պարզ է, վոր մեկնարանությունների կարիք չի գումամ, ուստի մենք անհրաժեշտ ենք համարաժմ ընդգծել այդ հատվածի միայն մի կորբուրագույն կեար, այն և՝ քաղ-լուսրաժինների կազմակերպման հարցը։ Հայաստանում, Խորհրդային իշխանության առաջին տարիներում (1921, 1922 թ.թ.), Գյուղագյուղավարին կից գոյություն ուներ այդպիսի բազա։ Նույնիր բավական ուժեղ գրադարանային կոլլեկտոր, գեղարվեստագիտն, կերպարվեստական, թատերական և այլ սեկտորներ։ Այդ բազան իր ժամանակին զգալի գերխաղաց։ Հետագայում նույնութեան կրծառվեց և նրա հետ միասին զագարեցին աշխատանքի շարժական ձևերը։ Միայն 1928 թ. նոր փորձեր յեղան վերսեղծել այդ բազան, —կազմակերպվեց գյուղական շրջիկ թատրոն, վորը միանդամայն արդարացրեց իրեն (ի գեպ՝ այժմ նույնական և ԱԽՍՖՀ-ում)։ Կազմակերպվեցին շրջիկ գրադարաններ, մատգրություն կար ունենալ շրջիկ ուժիսասիր-հրահանգիչներ, ինքնազնործ գրամ խմբակներին ողնելու համար։ Մակայն հետագայում այդ գործն ես խսիանվեց։ Այժմ թե՛ կենտրոնական և թե՛ շրջանային քաղլուս-բազաների կազմակերպումն աշխատանքի վերակառուցման առնչությունը դառնում և բացարձակապես անհրաժեշտ և անխօսափելի։ Այդ բազաներում պիտի կենտրոնանա շրջիկ քաղլուսհիմնարկների (շրջիկ կենտրոններ, ուսդիոններ, թատրոններ, յերաժշտական լրիգագներ, եսարագայի խմբեր, ագիտամբառակներ, ագիտայլեր և այլն) ամրող ցանցը։ Աւելանայում կուսակցական պրոպագանդիստներին արգեն փոխադրվել են ՄՏԿ քաղրաժինները։ Մոտ ժամանակներս սրանց կհանձնավեն շրջիկ կենտրոններն և այլն։ Այսպիսով շրջաններում, քաղըրաժիններին կից կստեղծվեն քաղլուսբազաներ, և վորքան շուտ, այնքան յավ։ Մակայն այս բոլորսկին չի նշանակում, թե վորեւ չափով պիտի պակասի ժողովուսորգանների պատասխանատվությունը քաղրաժիններին աշխատանքի կազմակերպման գործում։ Ընդհակառակը, նրանց պատասխանատվությունը հսկայական չափով բարձրանում է։ Գործնական աշխատանքն ինքը ցույց կտա շրջուսրաժինների և ՄՏԿ ու խորհանտեսությունների քաղրաժինների աշխատանքի կազմակցման և համաձայնեցման լավագույն ձևերը։

Նախքան Հայաստանում քաղլուսցանցի վերակառուցման արդեն գոյություն ունեցող պրակտիկայի յուսարանման և նրա սկզբունքներին անցնելը՝ մենք խորհուրդ ենք տալիս մնթերցողին նախորոք ծանոթանալ գրքիս հավելվածի, — և նինդրագի քաղլուսաշխատողների նախազծի հետ («Քաղլուսէիմնարկների սխտեմն ու տիպերը շրջանային և գյուղական կենարոնում»): Այդ նախազծին հավանություն և տվել ՌԽՍՖՀ Հուսժողկոմատը և նա, բատ մեր ունեցած ավյալների, մի շարք վայրերում արգեն կենսագործված ե:

## ՔԱՂԼՈՒՍՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԸ ՀԽՄՀ-ՌԴՄ

Ներկայումս (1933 թվի ապրիլ-մայիս) Հայաստանում, ՀԱ(Բ)Կ կենտկամի 1933 թվի ապրիլի 1-ի վորոշման հիմունքով, տեղի յի անենում խրճիթ-ընթերցարանների ցանցի վերակառուցումը: Այդ վորոշման համաձայն, Հանրապետության խոչըրագույն գյուղերում պիտի կազմակերպվեն 120-ից մինչև 130 գյուղական (կամ կորտնահասային) ակումբներ, վոչ պակաս, քան 3000 ոռութիւն ծախքերի նախահաշվով: Ավելի խոչըր և կարևոր գյուղերում պիտի կազմակերպվեն 5-6 հազար ոռութու բյուջե ունեցող ակումբներ:

Շրջակա, ամելի փոքր գյուղերում կազմակերպվում են կարմիր անկյուններ, վորոնք պահպում են կոլտնտեսությունների և գյուղի այլ հասարակական կազմակերպությունների միջոցներով: Գյուղական ակումբները, լինելով կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների կուլտուրական սպասարկման կենարոններ (այն գյուղում, վորտեղ նրանք գտնվում են), միևնույն ժամանակ կազմակերպական-մեթոդական զեկավարություն և ոգնություն են ցույց տալիս քաղլուս հիմնարկների ամբողջ ցանցին (վորոնք գտնվում են յենթաշրջանի տեղբիշորիայում), կամ ամելի ճիշտ՝ այն գյուղերի կարմիր անկյուններին, կուլպրոպ կազմակերպիչներին-ընթերցողներին և այլն, վորոնք նրան կցված են Շրջգործ կոմի (շրջլուսբաժնի) վորոշմարք: Ամենանամանը գյուղերը, վորոնք ինչ-ինչ պատճառներով հնարավորություն չունեն կարմիր անկյունները պահելու, սպասարկվում են կուլտուրակազմակերպիչներով-ընթերցողներով: Կոլտնտեսության ու խորհանուեալության, Փերմայի կամ հողամասի յուրաքանչյուր արտադրական բրիգադին կցվում ե (կամ

ընտրվում և կորանաեւային ակտիլիցից) կութագմակերպիչը՝ վարը գանվում և ակումբի կամ կարմիք տնելյան տնմիջական զեկայտարության առկի: Մենաստնահաների 10 կամ 20 տներին կցվում են ընթերցողներ: Այսպիսով մենք այսաեղ տեսնում ենք հիմնականում վերակառուցման նույն սկզբունքը, վորոնդունված և ՌԽՍՖՀ-ում և այժմ կիրառվում է նաև Սպրե-ջանում ու Վրաստանում:

Սակայն այսական պակասում և սայրնական կետրոնը, — «Սոցիալիստական կութառայի և տեխնիկայի տունը»: Մեղանում վերակառուցմբ տարբերվում են նույն դյուզի քաղցուս ցանցը կապերը և աշխատանքը նյութական-տեխնիկական բազայով ամրապնդելու վոչ բավականաշափ թափով: Դա նախ և առաջ բացարձում և նրանով, վոր ՌԽՍՖՀ-ում վերակառուցմբ փաստարեն սկսվել է 1930 թվին և անցել է մի շաբաթ ետապներ, իսկ մենք սկսել ենք միայն 1933թ.-ապրիլին, յերբ արդեն չեր կարելի դուրս գալ սկսական ու տեղական հաստատված բյուջեների շրջանակից: Այժմ Հայստանում տեղի ունեցող այս աշխատանքի վերակառուցմբ պետք է համարել բացառապես իրեն սոսաջին ետապ, իրեն քաղցուս հիմնարկների ցանցի լայն ու լուրջ վերակառուցման սկզբը: Թե՛ ՀՍԽՀ Լուսժողկոմատի և թե՛ սայրների մոռակա խնդիրը պետք է լինի ամրապնդել այժմ կազմակերպված ակումբներն ու կարմիք անկյունները, ուժեղացնել նրանց կադրերով միջոցներով, համաձայն՝ ՀԿ(բ)կ կենտկոմի վորոշման, այնպես, վոր արդեն 1934 թվականին կազմակերպվել 20-25 ուսունական «Սոցիալիստական կութառայի տներ» և այն ծավարիի հաստրակական (կոլտնտեսային) ինքնազործունեցության ակումբների ու կարմիք անկյունների ցանցը, մոռավորապես այն ձեռով, ու վորով այդ կատարվում է ՌԽՍՖՀ տես հագելված 1-ին):

Իսկ այժմ, քանի վոր սահմանափակված են մեր բյուջետային հնարավորությունները, մենք ժամանակավորապես բավականանում ենք ավելի փոքր հաստիքներով և ծախսերի ավելի փոքր նախահաշվով, քան այդ հարկավոր և աշխատանքի լավագույն դրվածքի համար:

### ա) Գյուղական ակումբ

Գյուղական ակումբը պետք է ունենա առնվազն 4 սենյակ, ինչպես և զահլիճի կառուցման հնարավորություն:

Դիտենալով Հայաստանի գյուղի պայմանները, հարմար չենք ի կատարյալ բացակայությունը, մենք շատ լավ ենք զգում, թե տեղական աշխատողներն ինչպիսի անբարյացակամությամբ պիտի դիմավորեն այս առաջարկը։ Հե (բ) Կ կենտրոնի վորոշումն առաջարկում ե «Ծըծոռք կոմիսին և գյուղական բաներին՝ ակումբների և կարմիր անկյունների համար տրամադրել հարմար չենքներ, ապահովելով նրանց վերանորոգումը, սարքավորանքը և աշխատանքը նորմալ պայմանները։ Արգելել այդ չենքների ոգտագործումն ուրիշ նպատակներով, բացի քաղլունաշխատանքներից»։ Յերկար տարիներ դիտելով քաղյուս աշխատանքի պրակտիկան, մենք յեկանք այն հաստատ համոզման, վոր Լուսժողկոմատի որդուանները, յեթե չեն ուզում նորից յերկար տարիներ մնալ կոտրած տաշտակի առաջ, պետք ե այժմ յան վերակառուցման ժամանակ հայտնաբերեն բացառիկ հաստատակամություն և համառություն՝ ակումբները հարմար չենքերով ապահովելու համար։ Հարկավոր ե ջախճախնել այն անսեղի տրամադրությունները, վորոնք դժբախտաբար զարձել են մի շարք տեղական աշխատադիրների բնորոշ գիծը, մանավանդ կուլտուրական ֆրոնտի աշխատողների։ «Մի կերպ գործը յուր կզնա»—միև ու արյուն գարձած լոգունգով չի կարելի գյուղում կուլտուրական հեղափոխություն կատարել, չի կարելի հայդթահարել «գյուղական կյանքի իդեոտիզմը», վերացնել քաղաքի և գյուղի մեջ յեղած կուլտուրական «մկրատը»։ Սա համարաշախի վներաբերում և թե՛ չենքների հարցին, թե՛ կոտրերի բնարության և թե՛ քաղլուս աշխատանքի նյութական բազային։ Աւտի անհրաժեշտ է հաստատապես վորոշել, վոր այնուղղ, ուր ակմբային աշխատանքի համար չկա համապատասխան չենք, վոչ մի դեպքում չի կարելի ակումբ կազմակերպել։ Զպետք ե պետական միջոցները քամուն տալ։ Այդպիսի գյուղերում առայժմ հարկավոր ե բանալ կարմիր անկյուններ և նախապատրաստվել ակմբի բացման համար։ Մենք, սակայն, համոզված ենք, վոր յեթե գյուղի կուսակցական, կոմյերիտական, խորհրդային հասարակայնությունը չերմ ցանկություն ունենա բաց անելու իր իսկական կուլտուրական ոջախ, —լավ, որինակելի ակումբ, նա կկարողանա նաև չենք գտնել, թեկուզ և այդ լինի մյուս հիմնարկությունները խտացնելու գնով։ Բայց և այնպես, կրկնում ենք, այնուղղ, ուր այդ հնարավորությունները չկան, չպետք ե

ակումբը բանալ: Այստեղ միանգամայն տեղին և նաև մուռնանչել, վոր Հայաստանը գյուղի քաղլուս հիմնացկների Համար շնչել կառուցելու տեսակետից հետ և մնացել Խորհրդացին Միության բոլոր հանրապետություններից ու յիրկամասերից: Մեզ թվում ե, թե վազուց արգեն ժամանակն է սկսել գյուղի կուլտուրական հիմնարկների շնչերի կառուցումը:

Ակումբի սենյակներից մեկը պետք է հատկացվի միմիայն ագրո-տեխնիկական կարբնետին, ագրոտեխնիկական ուսուցման համար (խմբակներ, գպրոցական-գասարներուցային պարագմունքներ, գյուղատնտեսական ցուցահանդես և այլն). Ժի այլ սենյակ պետք է սարքավորվի հատկապես հանգստի համար, նու պիտի ունենա ուսդիր, խոզի պարագաներ (շաշկի, շախմատ, գոմինո, տամա և այլն): Յերրորդ սենյակում տեղավորվում ե գրադարան-ընթերցարունք և վերջապես, 4-րդ սենյակը պիտի հատկացվի բուլոր մնացած խմբակներին, կարբնետներին և անկյուններին (վորոնք պիտի հերթով աշխատեն), —քաղուսուցում, հակակրոնական և սազմական պրոպագանդա, ֆիզկուլտուրա, կուրուրանակուցինների անկյուն, կերպարավեստի, յերաժշտական ու դրամատիկական խմբակներ (յեթե չկա հատուկ թատերական գոհելիք), և այլն: Այսպիսի շնչերում իհարկե նեղվածք կլինի, ուսումնական ակումբը պետք է իր աշխատանքի շատ մասներ կատարի ակմբի պատերից դուրս (մենք ել չենք խոսում դաշտային աշխատանքների ժամանակիվ մասին, յերբ ակումբն իր աշխատանքի գլխավոր մասը պետք է տեղափոխի դաշտերը):

Մշտական աշխատողների մինիմալ քանակությունը, վորն անհրաժեշտ և ակմբի աշխատանքները ծավալելու համար, —4 հոդի յի. — 1) ակմբի վարիչ, 2) գրադարան-ընթերցարնի և շրջիկ Փոնդի (շրջիկ կինո, գրադարան, ուղիո) վարիչ, 3) հրահանդիչ, 4) պահապան-հավաքարար:

Այս 1933 թվականի բյուջեն նախատեսել և միայն ակմբի վարչի աշխատավարձը: Պարզ ե վոր մնացած աշխատողները հաստիքի մեջ պիտի առնվեն յեկող տարվանից: Հետեւ վապես, մնացած աշխատողներին պահելու համար ակումբը կամ պետք է միջոցներ գտնի տեղում, հասարակական կազմակերպություններից շեֆերից, գյուղխորհրդներից և այլն, կամ պետք է սոցիալիստական համատեղելիության կազմով կուլտակտիվի լավագույն ուժերը ներգրավել աշխատանքին:

Այդ սոցհամատեղելիությունը պետք է պաշտոնապես ձեվակերպվի գյուղխորհրդում և չըլլուսբաժնում։ Սոցհամատեղելիություն ստանձնողն աշխատում է հասարակական բեռնավածության կարգով, իսայց հանդիսանում է պաշտոնատարմի անձնավորություն, վորը պատասխանատու յե իրեն հանձնարարված աշխատանքի համար, վորպես պետական ծառայող։ Սոցհամատեղելիություն ստանձնած անձն առանց չըլլուսբաժնի գիտության ու թույլտվության չի կարող ազատվել աշխատանքից կամ փոխարինվել մեկ ուրիշով։ Ինչ վերաբերում է ակմբի վարիչն, ապա, համաձայն ՀԿ(Բ)կ կենտկոմի վորոշման, նա հաշվի յե առնվում կենտրոնական կազմակերպություններում և առանց Լուսիողկոմատի գիտության ու համաձայնության չի կարող հեռացվել կամ բեռնվել մի վորեե կողմնակի աշխատանքով։ Իդեպ, պիտի ասել, վոր չի կարելի համատեղելիության կարգով ակմբի վարիչ լինել, իսկ այդ կարգով կարմիր անկյան վարիչ լինել կարելի յե և այդ նույնիսկ հանձնարարելի յե (մեր իրականության մեջ կարմիր անկյունների վարիչներ և կուլտ-կազմակերպիչներ հավանորեն կլինեն կուսակցական կամ կոմյերիտական բջիջների քարտուղարները, լավագույն դպրոցական ուսուցիչները, —և այդ լավ ե, նրանք կկարողանան ավելի լավ կապակցել քաղ-լուս աշխատանքը գյուղի, կուտնաբեսության տնտեսական կյանքին)։

Այստեղ, վորտեղ չի հաջողվի հաստիքի մեջ հրահանդիչ մտցնել, նրա ֆունկցիան պետք է իր վրա առնի ինքը, ակմբի վարիչը, վորը գյուղերում շրջելու ժամանակ (կարմիր անկյուններին հրահանդներ տալու համար) իրեն տեղակալ ե թողնում դրադարանապետին։ Այս պատճառով դրադարանապետը պիտի լինի վորակյալ, քաղաքականապես և կուլտուրապես միանգամայն զարգացած մարդ։ Ինքը, առամբի վարիչը պետք է ունենա «վոչ պակաս, քան մանկութեխնիկումի ծավալով կրթութուն» (ՀԿ(Բ)կ կենտկոմի վորոշություն)։

Կան չըջաններ (լենինական), վորոնք ակումբների վարիչներ են առաջ քաշում բարձրագույն կրթությունն ավարտած մարդկանց և միանգամայն ճիշտ են վարպետ։ ՀԿ(Բ)կ կենտկոմն այժմ գյուղ կուղարկում (ակմբային աշխատանքի համար) կուլտուրապետ և քաղաքականապես լավ պատրաստ

ված 40 կուսակցականներ ու կոմյերիտականներ։ Թէ կուսակցության կենտկոմն այդ գործին ինչպիսի կարեւոր նշանակություն և տալիս, այդ յերեսում և նրանից, վոր գյուղ ուղարկվող քաղլուս աշխատողների ընտրությունը և ստուգումը հանձնաբարիված և անմիջականորեն կենտկոմի քարտուղարին։ Յեկ այդ ճիշտ և շատ պատճառներով, —նախայիժմ ամեն յերեք պահանջվում և դասակարգային, հեղափոխական զգոնություն իդեոլոգիական ֆրոնտի, մասնավանդ, գյուղի կաղքերի ընտրության գործում, վորոնց մեջ այժմ ամեն կերպ աշխատում և խցկվել գասակարգային թշնամին։ յերկրորդ, այն մեծ կուլտուրական հեղափոխությունը, վորը մենք պիտի կատարենք գյուղում, յերկրորդ հնդամյակում, չի կարելի իրադործել կիսագրագետ ու տգետ, մեր նաև կին խրճիթվարների տիզի մարզկանց ձեռքով։ Այժմ գյուղին պիտի տալ քաղաքի ամենակուլտուրական, ամենակրթված մարդկանց։ Գյուղի համար պիտի ընտրել անձնուրաց գաղափարական մարտիկներ, կուլտուրական հեղափոխության ենտուղիաստներ։ Հարկավոր և կոփելու ստեղծել յերկրորդ կուլտուրական հնդամյակի մարտիկի տիպը, հողեալես բարձր դեմք և մեծ թափ ունեցող մարդկանց, —նոր, սոցիալիստական կուլտուրայի ստեղծողներին։

Միենույն ժամանակ կուսակցության կենտկոմը պահանջում է շրջանային կազմակերպություններից և մատակարարման որդաններից այդ կաղքերի համար ստեղծել նյութական-կենցաղային վայելուչ պայմաններ (բնակարան, մատակարարում)։ Բյուջեյում ակմբի վարիչի աշխատավարձը նախատեսվում է ամսական 180 ռուբլուց վոչ պակաս ԱԽՍՀ-ում և ՎԽՍՀ-ում—200—250 ռուբլի)։

Հարկավոր է ջրել ամեն տեսակ անհեթեթ ու անետղի առարկությունները քաղլուսաշխատողների աշխատավարձի բարձրացման դեմ, հարկավոր է վճռականապես ջախջախել գեղի նրանց արհամարտական-անտարբեր վերաբերմունքի տրադիցիան, վորի հետևանքով խրճիթ-վարները, վորոնք պիտի լինեյին գյուղացիների ամենահեղնիակավոր խորհրդատուններն ու ոգնականները, վերջի վերջո ծաղրի առարակայն դարձել։

Թէ ինչպես պիտի կազմել գյուղական ակումբի ծախսերի նախահաշխվը. այդ կարելի յե պատկերացնել միայն մոտավորապես, վորովհետև տարբեր ակումբներ կունենան

յեկամուտների տարրեր լրացուցիչ աղբյուրներ և այդ յեկամուտների չափը դժվար ե այժմ, առանց պրակտիկայի հաշվի առնել նույնիսկ մոտավորապես։ Հե(ր)կ կենտկոմի վորոշման մեջ ասկած ե, վոր ակումբի վարչա-տնտեսական ծախքերի մի մասը պետք ե դրվի կոլտնտեսությունների և դյուդի հասարակական կազմակերպությունների վրա։

Լենինականի ու Դիլիջանի շրջաններում կուռ շրջկոմները վորոշել են ակումբի վարիչի մինիմալ աշխատավարձը սահմանել 200 ոռորդի, իսկ մի քանի կարևորագույն կետերի ակմբի վարիչներին վճարել 250 ոռորդուց վոչ պակաս։ Մենք հատկապես այն կարծիքին ենք, վոր ավելի լավ և ունենալ քիչ ակումբներ մեծ բյուջեյով և ակումբի վարիչի ավելի բարձր վարձատրությամբ, քան ունենալ ակումբների լայն ցանց՝ փոքրիկ բյուջեյով։ Յածը աշխատավարձի դեպքում դժվար կլինի արմատախիլ անել կաղքերի հոսունությունը, արմատախիլ անել համատեղելիությամբ կատարվող աշխատանքը և դյուդում բարձր վորակի կաղքեր ունենալ։

Ահա թե ինչու ճիշտ վարվեցին կուսակցության լենինականի Քաղկոմն և Դիլիջանի շրջկոմը, վորոնք կընատեցին ակումբների ցանցը և և ակումբի բյուջեն ավելացրին մինչև 3750—4000 ոռորդի։ Մենք կարծում ենք, վոր նրանցից որինակ կիեցնեն նաև մյուս շրջանները և ակումբների վերակառուցմանը ցանցը վաղորոք չեն մատնի աշխատանքի ցածը վրակին։

Գյուղական ակմբի մոտավոր նախահաշիվը պիտի լինի այսպես։

1) Գյուղակմբի վարիչի աշխատավարձն ամսական 200 ոռորդի, տարեկան 2400 ռ.։

2) Սոցապի հատկացումներ, տեղկոմին և այլն—10 %—տարեկան 240 ռ.։

3) Ոպերացիոն ծախքեր։

ա) Լրագրերի ու ժուռնալների բաժանորդագրություն—300 ռ.։

բ) Գրքեր գրադարանի համար—500 ռ.։

գ) Ռադիոյի (մարտկոց, լապտերներ, ընթացիկ վերանորոգություն)—60 ռուբ.։

դ) Պահանջման արդարացումներ, լողունդներ և այլն—50 ռ.։

է) Վարչական-տնտեսական ծախքեր (վառելիք, լուսա-

գորություն, սարքավորանքի վերանորոգություն և այլն—  
200 ո.:

Ընդամենը 3750 ո.:

Այստեղ յենթադրվում է, զոր պակասող ինվենտարի, —  
սեղանների, աթոռների, գրքերի պահարանների, գրադարա-  
նի քարտերի գնումները, ինչպես նաև ակմբի մաքրության  
պահպանումը, — հավաքարարների վարձատրությունն և այլ  
ծախոերն ամբողջովին կընկնեն դյուզական կազմակերպու-  
թյունների վրա: Յեզ այնուամենայնիվ ակումբն այդպիսի  
բյուջեյով քիչ կտարբերվեր խրճիթ-ընթերցարանից և չեր  
կարողանա իրազործել շրջակա դյուզական սպասարկելու  
ինդիրը, յեթե բացի այդ միջոցներից, նաև չունենար նաև  
ուրիշ յեկամուտներ: Ինքնըսափեքյան հասկանալի յե, վոր  
դեկորացիաների, գրիմի, բուտաֆուրիայի և թատերական  
գործի այլ պիտույքների ծախքերն ակումբը պետք և կատա-  
րի հենց թատրոնի մուտքից: Բայց այնպիսի, բացարձակա-  
ռես անհրաժեշտ, բոլորովին անխուսափելի ծախքերը, ինչ-  
պիսին են զանազան խմբակների համար անկյունների սար-  
քավորումը, որինակ, դյուզատնտեսական ցուցահանդեսի  
կամ անկյան սարքավորումը, մողելների, եքսպոնատների,  
հերթարիումների ձեռք բերումը, կամ ռադշական, — Պաշը-  
լիկիտքիմի անկյան սարքավորումը (հացաններ, հակագա-  
զեր և այլն), կամ յերաժշտական դործիքներ ու պատեփոն  
ձեռք բերելու, — առանց վորոնց ակումբը կդառնա բոլորովին  
մռայլ և ձանձրալի մի վայր, — այդ ծախսերը, կրկնում ենք,  
պետք և կատարվեն ի հաշիվ ակումբի սեփական մուտքերի  
(մի քանի ծախքեր—մանավանդ, մի քանիսն ել մշտական),  
կողոպերացիայի, կոլտնտեսությունների, չեփերի, դյուզ-  
խորհրդի տալիք դուտացիաների:

Վերև բերված ծախքերի նախահաշվում՝ գրադարանի  
համար նախատեսվում է պարզապես չնչին մի դումար: Այդ  
միջոցները բավական կլինեյին, յեթե ակումբն սպասարկեր  
միայն մի դյուզ և չպահեր շրջիկ գրադարաններ՝ իրեն կըց-  
յած դյուզերին սպասարկելու համար, վորտեղ չկան մշտա-  
կան գրադարաններ, մանավանդ կարմիր անկյուններ:

Գրքերը, մանավանդ գեղարվեստական, այժմ եժան չեն  
և այդ դրամը չեր բավականանա թե՛ քաղաքական, թե՛ գի-  
տական և թե՛ գեղարվեստական գրականություն զնելու հա-  
մար: Հետեապես գրադարանի համար ևս պետք և գտնել

գոնե այնքան դրամ, վորքան վոր բաց և թողնվում բյուջեցով:

Երջլուսրաժինն ակմբի վարիչի հետ միասին պետք են ախապես հաշվի առնեն բոլոր հնարավոր մուտքերը, կայուն պայմանագրեր կնքեն այն բոլոր կազմակերպությունների հետ, վորոնք յենթադրում են կամ պարտավոր են միջոցներ տալ ակմբային աշխատանքի համար, հաշվի առնել սեփական հնարավոր յեկամուտները և կազմել ծախքերի շատ թե քիչ հաստատումն նախահաշիվ: Յուրաքանչյուր ակմբի վարիչ պետք ե լավ գիտենա իր ակմբի բյուջեն և խստորեն պատասխանատու լինի նրա ճիշտ ծախսման համար: Բյուջետային դիրքիպիննան խախտելու, ակմբի չահերն անտեսելու, աշխատավարձի ուշացման և այլ բոլոր գեպքերի մասին առկում բների վարիչները պարտավոր են անմիջապես հայտնել լուսժողկոմատին:

### Բ) կարմիր անկյուններ

Կարմիր անկյունները, վորոնք ամբողջութին պահվում են կոլտնտեսությունների, գյուղխորհուրդների և տեղական անտեսական ու հասարակական կազմակերպությունների (կոպերացիա, շեֆեր և այլն) միջոցներով, պետք ե նյունապես ունենան իրենց ծախքերի միանդամայն վորոշակի և հաստատուն նախահաշիվը: Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր կարմիր անկյունները կախումն ունենան պատահականություններից և առանձին կազմակերպությունների կամքից, վոր նրանք Փինանսավորվեն ընդհատումներով և նյութական դժվարությունների հանդիպեն: Յեկ հենց այդ բոլորից խուսափելու համար Հայաստանի կ(բ)կ կենտրոն առաջարկեց Լուսժողկոմատի որդաններին հատուկ պայմանագրեր կնքել վերև հիշված կազմակերպությունների հետ: Այս պայմանագրերում պետք ե վորոշակի կերպով հիշված լինեն այն բոլոր պարտավորությունները, վորոնք ըստանձնում են այդ կազմակերպությունները կարմիր անկյունների վերաբերմամբ: Այնտեղ վորտեղ ինչ-ինչ պատճառներով անկարելի յե կարմիր անկյան համար ապահովել տանելի բյուջեն, այդպիսի անկյունները չպետք ե հաշվի առնել և մտցնել լուսժողկոմատի հիմնարկների ցանցը: Սա, իհարկե, չի նշանակում, թե պետք ե գնալ ամենափոքր դիմադրության գծով և կարմիր անկյուններ կազմակերպել միայն

այնտեղ, վորաեղ այդ ուղղում են: Հարկավոր և գիտենալ,  
վոր կուլակային տարրերը պետք ե ամեն կերպ զիմաղբեն  
այս գործին և փորձեն ինչ կերպ ել լինի, վիժեցնել կարմիր  
անկյունների կազմակերպումը: Ահա թե ինչու կարմիր ան-  
կյունների կազմակերպմանը պետք ե նախորդել լուրջ, մանրա  
կրկիտ աղիտացիոն նախապատրաստությունը: Հարկավոր և  
կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին հա-  
մոզել, վոր անհրաժեշտ և ուղտակար ե այդ հիմնարկը: Մեզ  
թվում ե, վոր կարիք չկա մի անպամից բաց անելու կարմիր  
անկյունների խիստ մեծ ցանց: Ավելի լավ ե սկզբնական շըբ-  
ջանում ավելի քիչ քանակությամբ կարմիր անկյուններ բաց  
անել, ամբողջ ուշադրությունն և ուժերը կենտրոնացնել նր-  
բանց վրա, նրանց աշխատանքն որինակելի գարձնել և հենց  
դրանով, որինակ ցույց տալով, պարարտ հող պատրաստել  
նրանց տարածման համար:

Բոլոր վերեւ ասվածներից գժվար չե յեղբակացնել, վոր  
կարմիր անկյուններն ունեն նույնպիսի կարեռը խնդիրներ,  
ինչպես և ակումբները, հետեազես նրանց համար ևս պիտի  
գտնվեն միջոցներ և վոչ պակաս, քան նախկին խրճիթ-ըն-  
թերցարանների ունեցած միջոցները:

Այժմ չունենալով, տվյալներ մեր գյուղերի պրակտիկա-  
յից, շատ դժվար ե խոսել կարմիր անկյան ծախսերի կարևո-  
րագույն բաժնի, —անկյան վարիչի աշխատավարձի մասին: Նրա  
աշխատավարձը պետք ե վարձատրվի ինչ կերպ ել լինի: Մի  
քանի զեղքերում հնարավոր ե գյուղական վորակյալ  
ուսուչիցների աշխատանքը համատեղելիության կարգով,  
վորպես կարմիր անկյունների վարիչների: Այս դեպքում  
դյուղուսուցիչը պետք ե ստանա լրացուցիչ աշխատավարձ:  
Կարմիր անկյան վարիչի աշխատավարձը սահմանելիս նախ  
և առաջ պետք ե յելակետ ունենալ կոլտնտեսության հնարա-  
վորությունները: Հիշենք Հայաստանի մեր այցելած շրջան-  
ների մի քանի գյուղերի պրակտիկան: Այստեղ մի շաբաթ կու-  
տնտեսություններ սիրով ընդառաջել են գործին կարմիր անկ-  
յան վարիչի համար վորոշելով 60-ից մինչև 150 ուրեմ. աշխա-  
տավարձ. ուրիշ կոլտնտեսություններ, վորոնք պետք լավ  
են ամրապնդվել և ավելի ուժեղ են, կարմիր անկյան վարի-  
չին տվել են ամսական միջին հաշվով 12-ից մինչև 15 աշ-  
խար, —մանավանդ այն դեպքերում, որի իր կարմիր անկ-  
յան վարիչ, առաջ ե քաշվել հենց նույն կոլտնտեսության

ակտիվիստ կոլտնտեսականը: Այն առարկությունները, թե  
չի կարելի կարմիր անկյան վարիչին աշխորեք տալ, վորով-  
հետև իբր թե կավելանան կոլտնտեսության վարչական տըն-  
տեսական ծախքերը,—ոխալ են: Անհրաժեշտ ե պարզաբանել,  
վոր կարմիր անկյան վարիչը վոչ մի դեպքում չի կարող  
պատկանել վարչական ապարատին և կոլտնտեսականների  
կուլտուրական կարիքների համար կատարվող ծախքերն ո-  
պերատիվ ծախքեր են:

Բացի վարիչի աշխատավարձից, կարմիր անկյան մնա-  
ցած ծախքերի մոտավոր նախահաշխումն սկզբնական շրջանի  
համար մենք պատկերացնում ենք այսպես.—

1) Լրագրեր և ժուրնալներ ձեռք բերելու համար տարե-  
կան. 300 ռ.:

2) Մասսայական, վոչ պարբերական գրականություն  
(բրոցյուրներ, պլակատներ և այլն) տարեկան 200 ռ.:

3) Ռուողիու տարեկան 60 ռ.:

4) Վարչա—տնտեսական ծախքերը (դրասենյակային,  
լուսավորություն, վառելիք, վերանորոգություն և ինվեն-  
տարի գնում, տարկան 440 ռ.:

Ընդամենը տարեկան 1000 ռուբլի:

Այսուեղ մենք վարչական—տնտեսական ծախքերը մի  
փոքր ավելի յենք հաշվում, քան ակումբների նախահաշվում,  
այն պարզ պատճառով, վոր այնտեղ սպասվում է զոտացիա  
հասարակական կազմակերպություններից, իսկ այսուեղ նա-  
խատեսվում են զրեթե բոլոր մուտքերը, ուստի և մենք ծախ-  
քերի այդ հողվածում մտցնում ենք նաև ինվենտարի գնու-  
մը, վորը չկար նախորդ նախահաշվում:

Յեթ, վերջապես, այն գյուղերի ծախսերը, վորուեղ չկա  
կարմիր անկյուն և վորուեղ քաղլուսաշխատանքը կատարում  
են կուլտ կազմակերպիչը (վորն եյապես հանդիսանում է կար-  
միր ընթերցողների ավագը և համախմբում են նրանց) և կար-  
միր ընթերցողները: Վորպեսզի այս վերջինները քաղլուսա-  
վորական աշխատանք կատարեն, նրանք պետք են իրենց տրա-  
մադրության տակ ունենան գոնե լրագրեր ու ժուրնալներ,  
թուղթ պատի լրագրերի համար, պլակատներ և այլն: Այդ  
բոլորի համար շատ փող հարկավոր չեն: Գյուղխորհուրդը  
պետք ե հոգս քաշի ընթերցողներին ագիտացիայի անհրա-  
ժեշտ միջոցներ տրամադրելու մասին: Յեկ այդ ըստ յերե-  
պույթին դժվար չեն: Ուկրաինայում և ՌԽՍՖՀ-ում մի քանի

գյուղերի կոմյերիտականները միջոցներ եյին հավաքում Հասարակական ընթերցարանների և կարմիր անկյունների համար լրագրեր գնելու, —նրանք այդ նպատակով շաբաթորյակներ եյին կազմակերպում կամ կամավոր նվերներ հավաքում: Այդպիսի նվիրատվություններին վոչ մի դեպքում չի կարելի ինքնահարկման բնույթ տալ: Ահա մի քանի գյուղերի փորձը վորը լուսարանված և «Զակոմունիստիչեկոյէ Պրոսվիշենիյե» լրագրում: —կոմյերիտականներն ու պիոններները հավաքեցին գլուխով նվիրատվություններ, վոր միանդամայն թույլատրելի և եֆֆեկտավոր և: Այդ գյուղերում գյուղացիները հոգուտ լրագրերի ֆոնդի տվին մեկական գդալ ցորեն կամ հաճար: Մյուս գյուղերում — յուրաքանչյուր տնտեսությունից մեկ համի ձու: Այդ նվերները ռեալիզացիայի յերթարկվեցին և ապահովում եյին լրագրերի տարեկան բաժանորդագրությունը:

ՀԿ(թ)Կ Կենտկոմը վոչ պակաս ուշադրություն և դարձնում նաև կարմիր անկյունների համար կաղըրեր, կուլտկազմակերպիչներ, կարմիր ընթերցողներ ընտրելու հարցին:

«Նախազգուշացնել շրջկոմներին, վոր ՀԿ(թ)Կ Կենտկոմը մի առանձին քաղաքական նշանակություն և տալիս կարմիր անկյունների, կուլտկազմակերպիչների, ընթերցողների աշխատանքին, նրանց վրա պատասխանատվություն զնելով կուսակցության ու կառավարության վորոշումները մասսաներին հասցնելու և նրանց մեջ կուլտուր-քաղաքական աշխատանք կատարելու համար: Առաջարկել կուսակցության բոլոր շրջկոմներին՝ պատշաճ ուշադրություն դարձնել կուլտկազմակերպիչների ընթերցողների կաղըրերի ընտրության»: Ամենամեծ սխալը կլիներ սահմանափակվել միայն ուժեղ կաղըրերի, —գյուղական ակումբների վարիչների ընտրությամբ և ավելի քիչ ուշադրություն և հոգատարություն ցույց տալ կարմիր անկյունների վարիչների, կուլտկազմակերպիչների և կարմիր ընթերցողների կաղըրերի ընտրության: Այդ բոլոր աշխատողների խնդիրները բոլորովին միանույնն են և նույնիսկ նրանց աշխատանքի ծավալը միատեսակ ե: Յեզ, քանի վոր կարմիր անկյունների աշխատողները, կուլտկազմակերպիչներն ու կարմիր ընթերցողները, շնորհիվ մեր միջոցների սահմանափակության, չեն կարող ոգովել այն բոլոր նյութական հնարավորություններով, վորոնք ունենալու յեն գյուղական ակումբները, չեն կարող լայն չա-

մուվ ոգտագործել քաղլուսաշխատանքի շատ և շատ միջոցներն ու ձևերը, ինչպես ակումբները, ուստի նրանց վրա դրված խնդիրների կատարումն ավելի դժվար կլինի, կտահնազի մեծ լարվածություն և եներգիա, մեծ հնարագիտություն և ճկունություն և ուրեմն վոչ պակաս բարձր անձնական հատկություններ կուլտուրականության և քաղաքական պատրաստականության տեսակետից, քան ակմբային աշխատողները:

Իհարկե սա չի նշանակում, վոր մենք հենց այժմ անմիջապես կկարողանանք այդ աշխատանքի համար նշանակել նյունպիսի բարձր վորակ ունեցող աշխատողներ, ինչ վոր տալիս ենք ակումբներին: Սակայն այդ բարձր պահանջները դեպի քաղլուս աշխատանքի ստորին ողակները, —վորոնք ավելի սերտ են կապված մասսաների հետ, վորոնք անմիջականորեն մասսաներին են տալիս կուսակցության ու կառավարության կամքը, —այդ բարձր պահանջները պարտավորեցնում են մեզ արժանի բարձրության վրա դնել նրանց դեկավարման, նրանց մշտական հրահանգման գործը:

Կարմիր ընթերցողի բարձր ու պարտավոր կոչումը, նրա բարձր ու պատասխանատու քաղաքական պարտավորություններն արդեն դարձել են դասակարգային թշնամու վոտընձությունների առարկա: Ընթացիկ տարվա մարտ ամսին, յերբ ՀԿ(թ)Կ կենտկոմի կուլտ պրոպագանիստ շրջանները բոլոր շրջանները մեկնեցին կուսակցական պատասխանատու աշխատողներ, կարմիր ընթերցողների կադրեր ստեղծելու և նրանց կողմից գարնանացանի սպասարկումը կազմակերպելու համար, նրանք շատ գյուղերում տեսան, թե ինչպես կուսակային տարրերը փորձում են գրավել ընթերցողի պաշտօնը: Նրանք մեծ սիրով առաջարկում են իրենց ծառայությունն այդ դժվար և անվարձատրելի աշխատանքի համար, վորից հաճախ խուսափում են մեր մի քանի ընկերները, վորոնք սակավ արթում են և դեռ չեն գիտակցել գյուղական կարմիր ընթերցողի հսկայական քաղաքական ամբողջ դերը:

Հիրավի, դասակարգային թշնամու համար իդեոլոգիական Փրոնտում ել ի՞նչ ավելի հարմար ու ցանկալի դեղք կարող ել լինել, քան խորհրդային ընթերցողի անվան տակ իրավունք ստանալ իր ուզածի պես, կուսակավարի «բացառել ժողովրդին» Առհրդային դեկրետները, կուսակցության

միջոցառումները և կուլտակային «կուլտուր-դաստիրակչության» աշխատանք կատարել:

Ցեվ հենց այսուղի, կուլտ-կազմակերպիչ և կարմիր ընթերցող ընտրելիս անհրաժեշտ ե լինել չափազանց զգույշ: Կարմիր ընթերցողների թեկնածությունը պետք ե բազմակողմանի ուսումնասիրության յենթարկվի: Նա պետք ե լինի դասակարգայնորեն ու սոցիալազմես ստուգված, կայուն, կուսակցությանն ու Խորհրդային իշխանությանը հավատարիմ, զարգացած և կուլտուրական մի ընկեր: Նրա թեկնածությունը պիտի հաստատի կուսակցության շրջկոմը:

## ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

«Կուսակցությունը պետք ե ամեն կերպ աշխացի այնպիսի պայմանների ստեղծման, վորոնց մեջ քաղյուսները, առանց միջոցների ու աշխատողների պակաս զգալու, կարողանան դյուզի աշխատանքը ծավալել այն չափերով, վորոնք հրամայողաբար թերագրումում են ժամանակակից ամբողջ դրությամբ» (Խեկ (բ) XIII համագումար):

Քաղլուսաշխատանքի նյութական բազան պետք ե վըճռականապես ամրապնդել հետեւյալ միջոցներով:

Խոշոր չափով ավելացնել բյուջետային հատկացումները, —

Այդ հատկացումները կենտրոնացնել աշխատանքի վըճռական ճակատամասերում, —

Գլխավորը, — հասարակական միջոցներն և ուժերը ներդրավել այդ գործին:

ՌԽՍՖՀ շատ մարզերի ու յերկրամասերի հարուստ փորձը մեզ զույց ե տալիս, վոր գործը հմտությամբ դնելով, ծախսերի ծանրության կենտրոնը կարելի յե փոխադրել հենց այդ բնագավառը, — մի չարք քաղյուսհիմնարկներ (կինո, թատրոն) անցկացնել տնտեսական հաշվարկի, աշխատել, վոր նրաք վոչ միայն հանեն իրենց ծախսերը, այլ և յեկամուտ տան. այնուհետև աշխատել, վոր կուլտուրշխատանքի համար ոգտագործվեն կոլտնտեսությունների, կոռոպերացիա յի, չեֆերի, գյուղխորհրդի միջոցները, վերջապես, յեկամուտներ ստանալ փորձնական դաշտերից, շաբաթորյակներից: Ե այլ ձեռնարկումներից:

Լենինգրադի մարզում քիչ չեն այնպիսի սոցկուլտուրայի աններն ու գյուղական ակումբները, վորոնք լիովին հանում են իրենց ծախոր և իրենց համար ստեղծել են մի քանի տասնյակ հաղարանոց ըյուղեւ: Սակայն յեթե նույնիսկ այսքան հեռավոր որինակները չբերենք, բավական ե հիշենք Լենինականի շրջանի մի շաբք գյուղերի փորձը, վորը միանդամայն հաստատում ե, թե ճիշտ ե յեղել հասարակական միջոցները քաղլուս աշխատանքին ներգրավելու վորոշումը:

«Դուզբյանդի կոլտնտեսային ակումբն սպասարկում ե 3 դուզի, վորտեղ նա կազմակերպել ե կարմիր անկյուններ: Ակումբի նյութականն ուժեղացնելու համար կոլտնտեսությունը ամեն ե 75 ոռորդի, իսկ գյուղխորհուրդը՝ 200 ոռորդի: Կոլտնտեսությունը ծրագրում ե նաև ակումբի համար շանել 21/2 հեկտար մի հողամաս և բացի դրանից, խոստացել ե դուրս գրել լրագրեր ու ժուրնալներ: Ակումբն իր շուրջն ե համախմբել գյուղի կոլտուրական ակտիվիտիտ: Ակտիվի կաղմակերպած մրցության շնորհիվ, ակմբի գրադարանի համար հավաքված ե 320 որինակ նոր գրքեր: Գյուղի թաղային ժողովներում քննվել ե ակումբն ուժեղացնելու հարցը և հոգուտ ակմբի հավաքվել ե 800 ոռորդի: Գյուղի շեֆ միջմիութենական ակումբը հոգուտ Դուզբյանդի ակմբի կազմակերպել եր ներկայացում, վորը տվեց 45 ոռորդի զուտ արտօնությանը: Ակմբին կից աշխատում են մի քանի խմբակներ, կոնսուլտացիոն բյուրո: Դուզբյանդի ակումբը մրցման հրավիրեց Փ. Ղարաքիլիսա, Զաջուռ և Նալբանդ գյուղերի ակումբներին» («Բանակոր», № 79, 14 IV—33թ.): Փ. Ղարաքիլիսայում ակումբ կազմակերպելու հենց առաջին որերից նրա ուգուին հավաքվեց 150 ու: Ակմբի շեֆերը, Լենինականի Հուսաչսի տունը ե «Հոկտեմբեր» կինոն ոգնում են նրան դրերով, պլակատներով, լոգոտնդներով: Զաջուռի ակումբը յերկու ներկայացումներից ստացավ 360 ոռորդ, վորը ծախսեց ընթերցարանը սարքավորելու վրա: Կարմիր բանակի տունը յենթաքիլիսա գյուղի կարմիր անկյանը նվիրեց 25 աթոռ, 2 մեծ սեղան, 6 հատ մեծ հեղափոխական պատկերներ՝ շքեղ շրջանակներով և 1500 ոռորդի արժեքով, 3 իլիովիկա, 2 ռադիո—ընդունարան և 200 ոռորդու գրքեր:

Ակումբներին նութական լուրջ ոգնություն են հացնում նաև Ղամարլիի շրջանի կոլտնտեսությունները:

Այս բոլորը ձեռք ե բերվել քաղլուսցանցի վերակառուց՝

ման առաջին 10 որում և կասկած չկա, վոր հետազայում, այն չափով, ինչ չափով վոր կծավալի պրոպագանդի ակմբի համար և կցուցաղը վերջինիս հասարակականութեն ոգտակար աշխատանքի նմուշները, կաճի նրա ժողովրդականությունը և դրա հետ միասին կաճի ուշադրությունն ու նյութական ոգնությունն ակումբին:

Մեր կոլտնտեսությունները զեռ այնքան չեն ամրապնդվել, վորպեսզի նրանց լուրջ պահանջներ առաջադրենք խոշոր չափով կուլտ-ֆոնդեր հատկացնելու վերաբերյալ, սակայն բացարձակապես անհրաժեշտ և նրանց սովորեցնել կուլտ-ֆոնդեր հատկացնելու այդ սիստեմին: Հարկավոր և հենց այժմ վերացնել այն տրամադրությունները, վորոնց համաձայն իրք թե կուլտ-աշխատանքի ֆինանսավորումը պետության մշտական պարտավորությունն եւ: Տեղենչուկի կուլտընտեսություններն իրենց միջոցներով պահում են վոչ միայն ակումբներն ու կարմիր անկյունները, այլև դպրոցներ, հիմնականոցներ, մանկապարտեզներ և այլն: Մեր ամրապնդված կոլտնտեսությունները պետք եւ հետեւն Միության առաջավոր կոլտնտեսությունների այդ որինակին: Կոլտնտեսությունները պետք եւ գիտակցեն, վոր կոլտնտեսականների կուլտուրական պահանջների վերաբերյալ հոգատարությունը վոչ պակաս կարեւոր խնդիր եւ, քան կոլտնտեսության մյուս, ոպերատիվ, կազմակերպչական-տնտեսական խնդիրները: Նրանք պետք եւ գիտենան, վոր իրենց տնտեսական ամրապնդման, բերքատվության բարձրացման աշխատանքի բարձր արտադրողականության, հասարակական գիտակցական դիսցիլինայի դործում հաջողությունները կախված են գլխավորապես կոլտնտեսականների կուլտուրական մակարդակի բարձրացումից, նրանց քաղաքական ու տեխնիկական գրագիտությունից:

Սակայն միայն կոլտնտեսային կուլտ-ֆոնդերը չեն, վոր պիտի ոգտագործվեն քաղլուսցանցի պահպանության համար: Սպառողական կոոպերացիան իր ծագման սկզբից ունի կուլտ-ֆոնդեր առանձնացնելու տրադիցիս: Նախորդ տարիներում սպառուկոպերացիան այդ միջոցներով հսկայական կուլտ-դաստիարակչական աշխատանք եր կատարում: Նա հրատարակում եր մասսայական-մատչելի գրականություն, իր միջոցներով պահում եր գրադարաններ, շրջիկ կինոների խիտ ցանց, խրճիթ-ընթերցարաններում անկյուններ և այլն:

Սպառողական կոռպերացիան այժմ ել ունի հսկայական միջոցներ այդ կուլտ-ֆոնդերում, ուսկայն նա հիշյալ մասսայական ձեռնարկումները մի քանի տարի յե, վոր չի իրագործում: Ո՞ւր են գնում սպառոպերացիայի կուլտֆոնդերը: Դիլիջանի շրջ-սպառմիությունը մեզ հայտնեց, վոր 1932 թ. ընթացքում Հայկոպը նրա կուլտ-ֆոնդերից վերցրել ե 9000 ուռութիւն և շրջանում վոչ մի կոպեկի կուլտուրական միջոցառում չի իրագործել: Բանից դուքս ե գալիս, վոր Հայկոպն այդ միջոցները ծախսում ե կադրերի պատրաստության վրա (կոռպերատիվ տեխնիկումնի մեջ և կոռպերատիվ ինստիտուտի պահումը) և ո՞վ դիտե ել ինչ նպատակներով, բայց համենայն դեպս վոչ ուղղակի նպատակով: Մինչդեռ վաղուց հայտնի յե, վոր կուլտֆոնդերը չեն կարող ծախսվել տեխնիկումների և այլ միջոցառումների վրա: Դրանք պետք ե պահպան կոռպերացիայի ոպերատիվ միջոցներից հատկացված վորոշ գումարներով: Այսպես թե այնպես, սպառողական կոռպերացիան պետք ե (և կարող ե) քաղլուսաշխատանքին հատկացնի իր, բավական դղալի միջոցները:

Եեֆերը քիչ փող չեն ծախսում իրենց յենթաշեֆ դյուզերի կուլտ-կրթական սպասարկման համար: Սակայն նրանք այդ միջոցները ծախսում են այնքան անկազմակերպ, անողըլան, վոր արտադրանքը լինում ե բոլորովին չնչին, մինչդեռ հարկավոր ե պայմանավորվել շրջուսրաժինների և համապատասխան ակումբների հետ, վորպեսզի այդ շեֆական միջոցներն ոգտագործվեն ավելի նպատակահարմար և տեղին: Փոխանակ այդ միջոցները դեռ ու դեն ցրելու, շեֆերն, որինակ, կարող ելին հենց իրենց վրա վերցնել քաղլուսաշխատանքի մի վորմեծ մասի սպասարկումը, լիներ այդ դրքերի մատակարարում գրադարանին, կամ լրագրերի բաժանորդագրություն ընթերցարանի համար, ուղիղոյի ծախս, սպարատների գնում: Եեթե շրջիկ կինոյի գնումը մեկ շեֆի ուժերից վեր ե, ապա մոտակա գյուղերի մի քանի շեֆեր կարող են այդ անել միացյալ ուժերով:

Մենք բոլորովին կողմնակից չենք, վոր շեֆերը մեծ միջոցներ ծախսեն իրենց յենթաշեֆ գյուղերի այս կամ այն կարիքների համար: Ընդհակառակը, դա վնասակար ե, դա յենթաշեֆերին խնամակալություն ե սովորեցնում: Սակայն այսպես թե այնպես, վորմեծ ծախս անխուսափելիորեն կատարվում ե և վորքան ել փոքր լինեն այդ միջոցները, նպատա-

կահարմար ե նրանց մտցնել ակումբի կամ կարմիր անկյունի  
ծախսերի բյուջեյի մեջ: Ավելի կարևոր և արժեքավոր ե շե-  
ֆերի ողնությունը վոչ թե գրամով և ընդհանրապես նյութա-  
կան միջոցներով, այլ կուլտուրական ույժերով: Շեֆերը  
կարող են և պետք ե գյուղ ուղղարկեն ողբովագանդիսաներ, ա  
զիտատորներ, ազրուլրուպազանդիսաներ (գյուղատնտեսներ  
և գոռտեխնիկներ), ռադիո-տեխնիկներ, ակրային, գրադա-  
րանային, թատերական հարցերի հարահանդիչներ և այլն:  
Սակայն ամեն մի այսպիսի ողնություն չպիտի լինի պատա-  
հական, նա պետք ե վաղորոք հաշվի առնվի, նախատեսվի  
պլանում, այլապես ակումբին չի հաջողվի խնայողաբար ու  
նպատակահարմար բաշխել իր միջոցները, իր բոլոր կարիք-  
ները հոգալու համար:

Մենք տեղին ենք համարում, ընդդեմով պրոլետարական  
քաղաքի կուլտուրական շեֆության (գյուղի վրա) աճող  
գերը, մատնանշել յերեխու կարևոր թերություններ շեֆու-  
թյան ժամանակակից պրակտիկայում: Այդ նախ և առաջ  
այն ե, վոր պրոլետարական կենտրոններից ու խոշոր քաղաք-  
ներից հեռու գտնվող շրջաններն ու գյուղերն ընդհանրապես  
զրկված են խոշոր ձեռնարկությունների և կենտրոնական  
հիմնարկների ողնությունից և թողնված են «տեղական»  
թույլ շեֆերի խնամքին: Դուրս ե գալիս, վոր կենտրոնական  
հիմնարկություններն ու ձեռնարկությունները շեֆություն  
են վերցնում մոտիկ գտնվող գյուղերի վրա, մինչդեռ հենց  
այդ մոտիկությունը կենտրոնին՝ ինքն ըստինքյան նպաս-  
տում ե քաղաքի կուլտուրական մեծ ազդեցության, մեծ կապ  
ե տեղծվում քաղաքի հետ: Մեզ թվում ե, վոր յենթաշեֆ  
գյուղեր ընտրելիս չպետք ե յելակետ ունենալ միայն շեֆի  
հարմարությունը, այլ պետք ե յելակետ ունենալ քաղաքա-  
կան, գործնական նպատակահարմարությունը: Այս տեսա-  
կետից ըստ յերեսույթին թե՛ հնարավոր և թե՛ նպատակահար  
մար կլիներ այն գլխավոր, խոշորագույն գյուղեր, վորտեղ  
այժմ ակումբներ են կազմակերպվում, ապահովել յերկրի  
պրոլետարական կենտրոնների, — Եթե անի ու կենինականի  
շեֆությամբ:

Եերկրորդ թերությունն այն ե, վոր շեֆերը միանդա-  
մայն ճիշտ վարվելով, — իրենց ուշագրությունը կենտրոնաց-  
նելով յենթաշեֆ կուլտուրասությունների կազմակերպչական-  
անտեսական ամրապնդման վրա, չափազանց քիչ ուշագրու-

Թյուն են զարձնում նրանց կուլտուրական, կենցաղային սպասարկման հարցերին, կամ այդ սպասարկումը սահմանափակում են նրանով, վոր կամ հավաքում և ուղարկում են բոլորովին անպետք գրքեր, կամ գյուղում խալտուրային ներկայացումներ են տալիս: Մինչդեռ պրոլետարական շեֆը, վորի անելիքն և առաջնորդել մասսաներին «գեղակի տնտեսական նոր շինարարության ճանապարհ»ը, դեպի հասարակական նոր կապ, նոր աշխատանքային դիսցիլինա, աշխատանքի նոր կաղմակերպում, վորը գիտության ու տեխնիկայի վերջին խոսքը միացնում և սոցիալիստական խոչոր արտադրություն ստեղծող գիտակից աշխատողների մասսայական համախըմման հետ» (Աենին), —պարտավոր և առաջին հերթին հոգ տանել իր յենթաշեֆի կուլտուրական մակարդակի, քաղաքական գիտության և ազրոտեխնիկական կրթության մասին:

### Ակումբի և կարմիր անկյան սարքավորումը

Ժողովրդական լուսավորության որդանները, գյուղի ամբողջ կուսակցական, կոմյերիտական և կոլտնտեսային հասարակայնությունը, շեֆերը, ակումբի ու կարմիր անկյան ղեկավարությունն առաջին հերթին պետք ե այնպես անեն, վոր գյուղի այդ կարևորագույն կուլտուրական ոջախները միանգամայն կուլտուրապես սարքավորվեն: Այս գեղջում ևս չպետք ե հաշվել «մի կերպ յոլա գնալու» և գյուղի հետամնաց պայմաններին հարմարվելու տենդենցիների հետ: Ակումբը հենց նրա համար ե կաղմակերպվում, վոր իր ամրողջ եյությամբ հաղթահարի գյուղական հետամնացությունը: Հենց ակումբի սարքավորումը, նրա կահ-կարասին, ինվենտարը, ամբողջ կահավորանքը պետք ե ինքնըստինքյան մտցնեն մեր հետամնաց գյուղում քաղաքային կուլտուրայի և նոր կենցաղի տարրերը: Դրա համար հարկավոր չե, վոր ակումբն ունենա շքեղ կահ-կարասի, բայց անհրաժեշտ ե, վոր նա ունենա վոչ թե մի կերպ սարքած, կոպիտ ու խախուտ նստարաններ, ջարդվող սեղաններ, այլ միանգամայն վայելուչ, հղկած, ներկած, ամուր սեղաններ ու աթոռներ, պահարաններ, դարակներ, կախարաններ թե գրադարան-բներցարանի, հանգստի սենյակի և թե կարինեաների համար: Դժվար չե յուրաքանչյուր առանձին գեղջում

Հաշվել անհրաժեշտ կահկարասիքի քանակությունը։ Հարկավոր ե միայն հաշվի առնել, վոր բոլոր դրֆերը պետք ե տեղափորվեն պահարաններում և գարակներում, և չպետք ելինի այնպիսի դեպք, վոր գրքերը թափվեն սեղանների, լուսամուտների ու հատակի վրա։ Զի կարելի նաև թույլ տալ, վոր աթոռների պահառության պատճառով ընթերցարանի ու կարինետների հաճախորդները վոտքի վրա կանգնեն կամ հեռանան։ Ակումբի աշխատողները պետք ե ուշադրություն դարձնեն ակումբը խնամքով զարդարելու վրա։ Հանգստի սենյակը պիտի կահավորել մի առանձին ճաշակով և հարմարություններով։ Այստեղ խնդիրը վոչ այնքան այն ե, վոր միջոցները շատ լինեն, վորքան այն, վոր ակումբի վարիչը, նրա կուլտուրական ակտիվը սիրով վերբերվեն դեպի ակումբը, գեպի նրա բոլոր մանր խնդիրները։ Լավ ընտրված պլակատները, հեղափոխական գործիքների լուսանկարները, կիսանդրիները, գեղարվեստորեն նկարված պատկերները, դուռնեղ, գեղարվեստորեն ձևավորված անկյունները, ցուցահանդեսները, պատի լրագրերը, կարմիր կտորի վրա դրված լոզունդները, լուսե-լոզունդները, վերջապես, ծաղիկները և այլն, կարող են և պետք ե ակումբը դարձնեն հանգստի և ուսուցման հարմար, դրավիչ մի վայր։ Խոկ հարմարությունն և գրավչությունը հաճախ վճռում են քաղլուս աշխատանքի հաջողությունը։

Հետեյալ մոմենտը, վորը կարեոր ե շեշտել, այդ ակումբը յերաժշտական գործիքներով ապահովելն ե։ Ակումբը պետք ե ունենա ժողովրդական յերաժշտական գործիքների կոմպլեկտ, —թառ, քյամանչա, դհոլ, մանդալիններ, կիթառ, գարմոն։ Աղմկոտ գործիքներ, ինչպիսին են զուտանու գուղուկը, չպետք ե ունենալ ակումբում։

Պարզապես վատ ե այն ակումբը, վորը չի ձգում դաշնամուր ձեռք բերել։ Պետք ե աշխատել, վոր մոտակա տարիներում մեր գյուղական ակումբները ձեռք բերեն նաև յեղուպական յերաժշտական գործիքներ, —ջութակներ, ֆլեյտաններ, կլատոններ։ Այժմ վոչ միայն ակումբներին, այլ և կարմիր անկյուններին միանդամայն մատչելի յե պատեֆոնի գնումը։ Առանց լավ ընտրված թիթեղների կոմպլեկտ ունեցող պատեֆոնի դժվար ե նույնիսկ պատկերացնել շատ թեքիչ տանելի ակումբ։ Թաղիո-ընդունարանը կոլեկտիվ ունկնդրության համար հանդիսանում և ակումբի պարտադիր

պարագան։ Ակումբն առանց ռադիոյի, այդ միենույն ե, թե  
ընթերցարաննն առանց լրագրերի։ Ռադիոն այժմ լավա-  
գույն ազիտատորն ե, սղողազանդիստը, ուսուցիչն և ին-  
ֆորմատորը, ազգովրապազմնդիստն ու մասսաների գեղար-  
վեստուկան դաստիարակության կտզմակերպիչը։ Ակումբը  
պետք ե լիովին պատաժանատու լինի իր սղասարկած տեր-  
ըիտորիայի, մանավանդ կարմիր անկյունների բոլոր ռադիո-  
առարատների ամբողջականության և անընդհատ աշխատ-  
տանքի համար։ Առանձնահատուկ ուշադրություն պետք ե  
դարձի աղբոտեխնիկական կարինետի և ակումբային այլ կա-  
րինետների և դադմական, հակակրոնական, սանիտարական,  
մոր և մանկան և այլ անկյունների սարքավորանքի վրա։  
Նրանցից մի քանիսը, —աղբոտեխնիկականը, և ուղմակա-  
նը, —պիտի լինեն մշտական։ մյուսները կարող են հերթա-  
փոխվել յեթե չկան չենքեր նրանց մշտական տեղ հատկաց-  
նելու համար։ Այս դեպքում նրանք աշխատում են հերթով,  
ակումբի որացուցային պլանով նրանց համար վորոշված  
որերում։ Ավելի լավ ե բոլորովին համաժարվել այս կամ այն  
անկյուններ կազմակերպելուց, քան թե ունենալ խղճուկ, վատ  
կահավորված անկյուններ։ Անկյունները պետք ե ունենան  
անհրաժեշտ մատչելի ձեռնարկներ, գործիքներ, պարագա-  
ներ, եքսպոնատներ, պլակատներ, սխեմաներ, դիագրամներ,  
գրականություն։ Ակմբի ագրոտեխնիկական կարինետը պետք  
ե ունենա այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե կոլտնտեսա-  
կաններին ագրոնոմիական գիտություն և տեխնիկա սովորե-  
լու համար։ Իհարկե այս բոլորը մի անգամից չի լինի, շատ  
բան ձեռք ե բերվում առողջանարար։ Սակայն պետք ե ունե-  
նալ ակումբի սարքավորման ճիշտ պլան և վերջինու կատարել  
Համառությամբ։

Ակմբի սարքավորման մասին իրակատար պատկերացում  
ունենալու համար նրա վարիչը պետք ե ծանոթանա ակմբային  
հատուկ գրականության հետ, առաջավոր, որինակելի ա-  
կումբների, փորձի ինչպես նաև յուրաքանչյուր կարինետի և  
անկյան կարիքների հետ։ Այս հարցերի չուրջը գոյություն  
ունի բավական հարուստ գրականություն։

Ակմբի և կարմիր անկյան զեկավար որգանները

ինչպես վերեռում ասվեց, գյուղական ակումբները զե-  
կավարում են իրենց կցված մի շարք կարմիր անկյունները ։

կուլտկազմակերպիչների: Ղեկավարողն ինքը, ակմբի վարիչն ե կսմ նրա ոգնականը: Այստեղ պետք ե խուսափել վորևե խնամակալությունից, վորը կարող ե վորեւ չափով սահմանադաշտը կարմիր անկյան ստեղծարար ինքնազորժունեցությունը: Քաղաքական, հրահանգչական, մեթոդական դեկավարությունը չպետք ե փոխարինվի հրամաններով: Այդ զեկավարության բյուրոկրատացումից, դրական քաշքառութից խուսափելու համար, անհրաժեշտ ե նույնիսկ արդելել առկումբներին վորևե գրավոր հրահանգներ ուղարկել կարմիր անկյուններին, կուլտկազմակերպիչներին և ընթերցողներին: Հարցավոր ե հրահանգել անձամբ, տեղերը մեկնելով, խորհրդակցություններ հրավիրելով և այլն: Կարմիր անկյուններն ու կուլտկազմակերպիչները պետք ե պահեն որպարզեր, վորտեղ վարիչը յուրաքանչյուր անդամ այցելելիս պարտավոր ե համառոր գրել իր աված ցուցմունքները: Հեռելյալ անդամ այցելելով, նա պետք ե ստուգի այդ ցուցմունքների կատարումը և համապատասխան նշումներ անի կատարման, ինչպես և նրա վորակի մասին: Քալուստեսուչը պետք ե սիստեմատիկարար ստուգի այդ որագրերը և նշանակի ստուգման ամսաթիվը:

Տնտեսական-քաղաքական կարևորագույն կամպանիաների (գարնանացան, մշակում, քաղաքն, բերքահավաք, դ.մ.մթերումներ, հարկային կամպանիա, փոխառություններ, հեղափոխական տոններ և այլն) նախորյակին գյուղական ակումբը հրավիրում ե կարմիր անկյունների վարիչների, կուլտկազմակերպիչների ու ընթերցողների հավաքներ: Սակայն այդպիսի հավաքներն ոգտակար ե գումարել վոչմիայն կամպանիաների առթիվ, այլ և աշխատանքի յեռամույակին ու ամսական պլանները քննելու, այս կամ այն մասսայական միջոցառումների հանրապետարքները տալու, միորմիջության աշխատանքի նոր մեթոդները քննելու համար:

Այդ հավաքներին ակմբի վարիչը տալիս ե ցուցմունքներ, կազմակերպում է յուրատեսակ կուրս-կոնֆերենցիաներ: Այստեղ, սակայն, հարկավոր ե լավ հիշել, վոր այդպիսի հավաքների տեսողությունը պետք ե լինի մինիմալ: պարագամունքները համար վորոշված ժամերին կարմիր անկյունների

բոլոր վարիչները, ընթերցողներն ու կուլտկազմակերպիչները պետք ե լինեն իրենց տեղերում : )

Այսուամենայնիվ ստորին ցանցի ղեկավարման հիմնական մեթոդը հանդիսանում է հրահանգչի կամ ակումբի վարիչի մեկնումը տեղերը, կենդանի հրահանգման, աշխատանքի որինակների ցուցադրման, կազմակերպություններին ողնեռու և այս կամ այն կոնկրետ միջոցառումը (կամպանիա, յերեկոներ, զեկուցումներ, և այլն) կիրառելու համար : Առ կումբը ղեկավարում է վոչ միայն կարմիր անկյուններն ու կուլտ-կազմակերպիչներին և ընթերցողներին, այլ և իր սպասարկած տերը բարեհաջայի բոլոր քաղլուսհիմնարկները, — կինո, սադիո, թատրոններ, լիկեայաններ և այլն, ում ել վոր նրանք պատկանեն : Քաղլուսաշխատանքի բնագավառում ակումբը հանդիսանում է շրջլուսբաժնի լիազոր ներկայացուցիչը յենթաշրջանում : Այստեղից բղիում են նրա իրավունքներն ու պարտականությունները :

### ա) Ակմբի վարչություն

Ակմբի աշխատանքը ղեկավարելու համար նրա լավագույն ակտիվիստներից ընտրվում է վարչություն : Ընտրությունները տեղի յեն ունենում գյուղխորհրդների կուլտսեկցիայի ղեկավարությամբ, գյուղական ընդհանուր ժողովներում : Ակմբի վարիչն, ըստ կանոնների, միենույն ժամանակ հանդիսանում է ակմբի վարչության նախագահը : Նպատա

1) Շրջլուսբաժնը պաշտոնական վորոշմամբ պետք ե սահմանի ակումբների, կարմիր անկյունների, կուլտկազմակերպիչների, աշխատանքի ժամերը, Վորոշված ժամերին ակումբներն ու կարմիր անկյուններն ինչ կերպ ել լինի, պետք ե բաց լինեն վոչ պաշտոնական գործուղումները, վոչ ակմբի վարիչի կամ կարմիր անկյան աշխատողի մասնակցությունը նրանք իսկապես անհրաժեշտ է ակմբը ու կարմիր անկյան վարիչների, կուլտկազմակերպչի բացակայությունը նրանց պետք է փոխարինեն վաղորոք նշանակված և գյուղխորհրդի կուլտսեկցիայի կողմից հաստատված մարդիկ : Այս կանոնի ճշորիկ պահպանման, այլ և ակումբների ու կարմիր անկյունների ամենորլա գործներության համար ամբողջովին և խստորեն պատասխանառու յեն գյուղիորհրդները :

կահարմար և ակմբի վարչության մեջ մտցնել գյուղխորհրդի կուլտսեկցիայի նախագահակին, կուսակցական ու կոմյերիտական բնիշների ներկայացուցիչներին, կուսապրոպաղանդիսաներին, կոլտնտեսության վարչության անդամին, վորը զեկուվարում և կուլտաշխատանքը, կինոկազմակերպչին, յեմեն կու չ բուզում, գյուղատնտեսին, բժշկին, ուսուցչության ակտիվ ներկայացուցչին և անպայման ամենաակտիվ կոչոնտեսականներին:

Կոլտնտեսության վարչությունը կարող է բարդկանալ 7-11 հոգուց: Յանկալի յեւ վարչության մեջ մտցնել խմբակների բարձրագույն ղեկավարներին, գրադարանապետին, կուլտակազմակերպչին և այլն: Եթե այս գեղքում վարչության կազմը մի փոքր կլայնանա, ասնենք թե հՀասնի մինչեւ 15 հոգու, դա այնքան ել վատ չե: Միայն թե այս գեղքում հարկավոր կլինի առանձնացնել լիազոր միջուկ, 5 հոգուց բարկացած (վարչության նախադահություն), վորպեսդի շտապ հարցերը չհետաձգվեն մինչեւ ամբողջ վարչության հավաքվելը: Վարչությունը պետք է հավաքվի ամսական մեկ անգամից վոչ ուչ: Նա պետք է քննի աշխատանքի ամսական պլանը, հաստատի կամպանիաների անցկացման պլանները, քննի շինարարության, սարքավորանքի և ակմբի այլ կազմակերպչական-տնտեսական հարցերը: Ակումբը և վոչ մի վերաքննիչ հանձնաժողով չպիտի ունենա: Նրա աշխատանքի մերաքննությունը, նրա հաշվետվությունների քննությունը, նաևսերի ստուգումն և այլն, պարտավոր և կատարել գյուղխորհրդի կուլտսեկցիան, իսկ յեթե ակումբը կոլտնտեսային և ամբողջովին պահպան և կոլտնտեսության բյուջեյով, —ապա կոլտնտեսության վերաստուգիչ հանձնաժողովը:

Այն հարցերը, վորոնք վերաբերում են աշխատանքի ձևերին ու մեթոդներին, ինչպես նաև կազմակերպչական կարեռագույն միջոցառումները, պետք և քննարկվեն ակմբի լայն ակտիվում: Վարչության նիստերին անպաման պիտի ներգրավել բոլոր կուլտկազմակերպիչներին, և ընթերցուներին: Ոգտակար նիստերին կանչել ամենամուտիկ գյուղերի կարմիր անկյունների վարիչներին:

բ) Կարմիր անկյան խորհուրդ

Ճիշտ նույն սկզբունքով, ինչպես և ակմբի վարչությունը, ընտրվում ե կարմիր անկյան խորհուրդ: Յեթե կարմիր անկյունն սպասարկում ե առանձին գյուղխորհուրդ ուստի նեցող գյուղ, ապա նա եւ հաշվետու յե իր գյուղխորհուրդի կուլտեկցիային: Կարմիր անկյան խորհուրդի մեջ պետք ե անպարհան մտցնել բրիգադների կուլտկազմակերպիչներին և բոլոր կարմիր ընթերցողներին: Խորհրդի մեջ կարող են մտնել 11-15 մարդ: Թե՛ ակմբի վարչությունը և թե՛ խորհուրդը պետք ե ընտրել վոչ թե ակումբը և կարմիր անկյունը կազմակերպելիս, այլ միայն այն ժամանակ, յերբ յերեան իդա ահտիվը, յերբ ինքը, ակմբի ու կարմիր անկյան վարիչը կծանոթանան շրջապատին, կծանոթանան հասարակական կաղմակերպությունների աշխատանքի, կոլտնտեսային ակտիվի հետ և այլն:

Ակմբի վարչության կամ կարմիր անկյան խորհրդի յուրաքանչյուր անդամ հենց առաջին նիստում պետք ե ստունաշ աշխատանքի կոնկրետ ճակատամաս, հետադայում, անկյան խորհրդի նիստներում հաշվետվություն տա իր կատարած աշխատանքի մասին: Խորհրդում չպիտի լինի և վոչ մի անդամ, վորր չունենա վորոշ բեռնվածություն: Վոչ վոք չպետք ե պատմի համար բնարսի խորհրդի մեջ: Խորհրդի անդամների միջև պարտականությունները բաշխելիս պետք ե իհարկե աչքի առաջ ունենալ յուրաքանչյուր ընկերոջ ընդունակությունները, հակումներն ու ցանկությունները: Հոմանք խմբակներն են զեկավարում, մյուսները—հանդսատի կաղմակերպումը, յերրորդը՝ պատասխանատու յե ռատիֆիցի համար, չորրորդը—կարմիր անկյան սանտիարական դրության, լուսավորության ու վանելիքի, կանանց և յերիտասարդության մեջ՝ կատարվող աշխատանքի համար և այլն:

Ակումբի և կարմիր անկյան աշխատանքի ալանը

Գյուղական ակումբն ու կարմիր սնկյունը պետք ե աշխատեն պլանով: Նրանք պետք ե ունենան ամենորյա աշխատանքի կոնկրետ, ոպերատիվ պլան: Վերջինս կարող է կազմակերպումը, յերրորդը՝ պատասխանատու յե ռատիֆիցի համար, չորրորդը—կարմիր անկյան սանտիարական դրության, լուսավորության ու վանելիքի, կանանց և յերիտասարդության մեջ՝ կատարվող աշխատանքի համար և այլն:

տանքի այդպիսի պլան կազմելը պետք է անպայման ունենալ  
աշխատանքների տարեկան մոտավոր պլանը։ Հակառակ դեպ-  
քում ակումբը կտարպի ընթացիկ կամպանիաներով և կմուա-  
նա իր խնդիրները, — խորացնել քաղցածատիարակչական  
և կուլտուրական աշխատանքը։ Պլանի կազմելուն պետք է  
վերաբերվի լուրջ, մտածված։ Պլանը վորոշում և ակմբի  
դիրքը, նրա գործունեյության ամբողջ ներքին բովանդակու-  
թյունը։ Ընդունված պլանը պիտի կատարվի ինչ կերպ ել  
լինի։ Ուրեմն պետք է ընդունել ոեալ, իրազործելի, ույժե-  
րին համապատասխան պլան։ Սա բոլորովին չի նշանակում,  
թե պետք է գիտակցարար ընդունել փոքրիկ, խղճուկ պլան-  
ներ, մի կողմ թողնել կարեսը խնդիրները և այլն։ Վոչ մի  
դեպքում այդ չի կարելի անել։ Պլանը պետք է ընդգրկի այն  
բոլոր կարեսը խնդիրները, վորոնց առաջադրում և ակումբին  
կյանքը, գործնական անհրաժեշտությունը։ Պլանի ոեալ լի-  
նելու, կենսունակության լավագույն յերաշխիքն ակմբի ամ-  
բողջ կուլտուրական ակտիվի մասնակցությունն և նրա կաղ-  
մելուն։

Կարեսը և հիշել նաև մի սկզբունք. — պլանը պիտի լինի  
ճկուն, պիտի հեշտությամբ վերակառուցվի։ Պլանը գոյու-  
թյուն ունի նրա համար, վորպեսզի աշխատանքի մեջ ըլինի-  
սիստեմի բացակայություն, ցրվածություն, գործամոլու-  
թյուն և ապարդյուն աղմուկ։ Առանց պլանի աշխատել բո-  
լորովին անհնարին ե։ Սակայն պլանը քաղլուս աշխատողի  
համար չպիտի լինի մի ծանր բեռ, շղթա։ Յեթե կյանքն առա-  
ջադրում է նոր, կարեսը խնդիրներ, ապա պլանը պետք է վե-  
րակառուցվի, նրա մեջ պետք է մտցվեն այդ խնդիրները։ Յերբեմն հարկավոր ե լինում լուրջ փոփոխության յենթար-  
կել պլանը և դրանից բոլորովին չպիտի վախենալ։ Տարեկան  
պլանը միայն ընդհանուր ուղիներն են նշում։ Ակմբի պլանը  
վորքան շատ կապված լինի կոլտնտեսության, գյուղակոր-  
հըրդի, կուրքջինի կոմյերի կության և գյուղի այլ հա-  
սարակական կազմակերպությունների աշխատանքի պլանի  
հետ, այնքան նա կենսունակ, ողտակար, արժեքավոր կլինի։  
Նախքան պլանը շրջլուրաժնի, ՄՏԿ քաղբաժնի հաս-  
տատման ուղարկելը, նա պետք է ընդունվի ակմբի վարչու-  
թյան կողմից, պիտի քննարկվի կոմբջիջում, գյուղխոր-  
հըրդում, կոլտնտեսություններում։

Պլանի կարեսը գործույն բաղկացուցիչ մասը հանդիսանում

Ե կատարված աշխատանքի սիստեմատիկ հաշվառքը և պլանի  
ու նրա առանձին առաջարությունների կատարման սիստե-  
մատիկ ստուգումը։ Ակմբի տարեկան, մոտավոր պլանը  
կազմվում է բոլոր խմբակների, կարինետների, սեկցիաների  
պլանների հիման վրա։ Միացնելով այդ պլաններն և կազմե-  
լով մեկ ընդհանուր պլան, ակմբի վարիչն առանձնացնում է  
ամբողջ ակմբի համար ընդհանուր փոնդիրները, ճշտում ե  
խմբակների պրանների ժամկետները և ապա այդ միացյալ  
պլանը գնաւմ է ակմբի ակտիվի քննարկման։

Յենթագրենք ակումբային աշխատանքի ամենահիմանու-  
կան տեսակների հետեւյալ կոպիտ սիստեմներ։

### I Քաղաքական պրոպագանդա

- 1) Քաղաքական խմբակներ։
  - ա) Լենինյան խմբակ։
  - բ) Բնթացիկ քաղաքականության խմբակներ։
- 2) Կարճատե (3-5 որ) դասընթացքներ կուտեսային  
ակտիվի քաղուսուցման համար։
- 3) Հեռակա քաղուսուցում։
- 4) Թեորետիկ դասախոսություններ ու զեկուցումներ։
- 5) Քաղմարտեր։
- 6) Մարքս-լենինյան ուսման այլ տեսակներ։

### II Մասսայական քաղաքական ագիտացիա

- 1) Կուսակցության ու կառավարության վորոշումների  
մասսայականացում։
- 2) Կուսակցության համագումարների, կոնֆերենցիա-  
ների, կուսակցության որդանների պլենումների, խորհրդակների  
համագումարների և կենտրոնակոմի նստաշրջանների վորո-  
շումների մասսայականացում։
- 3) Հեղափոխական որեր, տոներ, հորելյաններ։
  - ա) Լենինյան որեր։
  - բ) Փարիզի կոմունա։
  - գ) Մայիս մեկ։
  - դ) Սահմանադրության որք։
  - ե) Հոկտեմբերի տարեդարձ։
  - զ) Հայաստանի խորհրդայնացման տարեդարձ։
  - ե) Անդրֆեդերացիայի տարեդարձ։

Ա. ը) Մարտի Տ-ը:

թ) Միջյերիո որ:

4) Քաղաքական կարևորագույն դեպքեր արտասահմանում և ԽՍՀՄ-ում:

5) Սոցիալիստական շինարարությունը ԽՍՀՄ-ում և ԱԽՍՖՀ-ում:

6) Կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաներ:

1) Գյուղղատնտեսական: —

ա) Գարնանացան:

բ) Ցանքերի մշակում և քաղհան:

շ) Բերքահամար:

դ) Աշնանացան:

յի) Զմեռային գ.տ. աշխատանքներ, մամեռային առաթ (Պ), հերկ և այլն:

2) Կոլտնտեսության յեկամուտների հաշվառք և բաշխում:

3) Գյուղատնտեսական մթերումներ: —

ա) Հացի պարբռադիր հանձնումը պետության:

բ) Կաթնամթերքների մթերում:

դ) Մասմթերումներ:

շ) Կաշու, բրդի և այլ հրւմքի մթերումներ:

յի) Բամբակի (ծխախոտի) հանձնում:

զ) Ուրիշ մթերումներ:

4) Հարեի կամպանիաներ: —

ա) Գյուղմիասհարկ:

բ) Ինքնահարկում:

դ) Լուրս-հորկ:

5) Փոխառություններ:

6) Հաշվեառութերներական կամպանիաներ: —

ա) Խորհուրդների,

բ) Կողմանտեսության,

զ) Կոռպերացիայի:

7) Տեղական կամպանիաներ, տասնորյակներ, միամսյակներ և այլն:

8) Քաղ-որեր:

## III. Ակմբի կուլտ-կրք. աշխատանքը.

- 1) Հանրակրթական աշխատանք:—
  - ա) Անդրագիտության վերացում:
  - բ) Կիսադրագիտության վերացում:
  - գ) Ինքնակրթության խմբակներ, —հաշվի, պատմության, աշխարհադրության, լիազորների և այլ առարկաների:
- 2) Թաղմական պրոպագանդա:
- 3) Հակակրօնական պրոպագանդա:
- 4) Սանիտարական լուսավորություն:
- 5) Ֆիղկուրատուրա և սպորտ:
- 6) Աշխատանքը կանանց մեջ. —տնարարություն, կարուծեամբների խնամք և այլն:

## IV. Ազրոտեխնիկական պրոպագանդա.

- 1) Դյուզատնտեսական խմբակներ:—
  - ա) Դաշտավարական:
  - բ) Ըստ առանձին կուլտուրաների, —հայահատիկացին, բամբակի, կարտոֆիլի և այլն:
  - գ) Այգեգործական:
  - դ) Բանջարաբուծական:
  - յի) Մետաքսագործական:
  - դ) Թուչնարուծական:
  - ե) Անասնական-խոշոր յէղջյուրավոր տնառուներ:
  - ը) Անասնաբուժական խմբակ. —  
Վոչխաբարուծություն:  
Խողաբուծություն:  
Զիալրուծություն:  
Ցաղարաբուծություն և այլն:
- 2) Տեխնիկայի գետայների ուսումնասիրության դ. ու խմբակներ.
  - ա) անասնակաների, հորթապահների, կթողների, ջրողների, խմբակներ:
  - բ) Գյուղմեքենաների, —տրակտորի, ցանիչի, հնձիչի և այլ մեքենաների ուսումնասիրության խմբակներ:
  - ը) Գյուղատնտ. արտադրության կազմակերպման խրմակներ:

- ա) Բըրիգաղիքըների:  
 բ) Ֆերմաների վարիչների և այլն:  
 4) Կարճառեւ դասընթացքներ:  
 ա) Աղբոտեխնիկայի առանձին հարցերի վերաբերյալ  
 դասընթացք-կոնֆերենցիաներ:  
 բ) Փորձվածների առաջարկների քննարկում:  
 գ) Կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների արտա-  
 դրական խորհրդակցություններ:  
 5) Մասայական աղբոտեխնիկական պրոպագանդա:  
 ա) Պարտադիր աղբո-կանոնների մասսայականացում  
 կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների մեջ:  
 բ) Առաջավոր կոլտնտեսությունների փորձի մասսա-  
 յականացում:  
 դ) Եքսկուրսիաներ և այլն:

Սա մոտավոր, ակմբի առաջ դրված բոլոր խնդիրներն ու  
 աշխատանքները չընդգրկող մի ցանկ ե: Նրանից չպետք ե յեղ  
 բակացնել, վոր ակումբն անպայման զբաղվելու յե այդ բո-  
 լոր հարցերով: Սակայն, վորոշելով իր խնդիրները, աշխա-  
 տանքի մոտավոր ծավալը, վորը պայմանավորվում ե յեղած  
 կուլտուրական ուժերով ու միջոցներով, —ակոմբը պետք է  
 նախորոք կազմի հարցերի այսպիսի ընդհանուր սինթեզ, կամ  
 հարցացուցակ՝ պլանի համար, բաժանի այն ակմբային աշ-  
 խատանքի բոլոր մասնակիցներին, վորպեսզի խմբակների,  
 այս կամ այն աշխատանքի պլանը կազմելիս բոլորն ունենան  
 մի ընդհանուր կանվա և վորպեսզի տարրերություններ, ճեղ-  
 քեր չլինեն ակմբի զանազան մասերի միջև: Առանց դրան  
 կարող ե այնպես պատահել, վոր այն ժամանակ, յերբ գրա-  
 դարան-ընթերցարանը, քաղյամբակները, այատի յրադիրը  
 և այլն, պատրաստվում են յենթադրենք գարնանացանն անց-  
 կացնելու համար, գյուղատնտեսական խմբակի պլենումում  
 դրված ե բամբակի բերքահավաքման հարցը, կամ նման մի  
 բան, վորը չի վերաբերում դարնանը: Ակմբի բոլոր խմբակ-  
 ներն առանց բացառության, բոլոր քաղլուս աշխատողները,  
 ամբողջ կուլտակտիվն իրենց աշխատանքի պլանը կազմելիս,  
 առանց թույլ տալու, վոր տուժի իրենց խորացրած աշխա-  
 տանքը, պետք ե այնուամենայնիվ հաշվի առնեն մի հանգա-  
 մանք. և կարեղագուռ տնտեսագաղաքաղաքական կամպանիա-  
 ները պահանջում են բոլորի մասնակցությունը, ընդհանուր

են բոլորի համար, ուստի պետք ե կոնկրետ արտահայտություն դանեն յուրաքանչյուր խմբակի պլանում:

Բոլոր խմբակներից, սեկտորներից (գրադարան, կինո, սպորտ, թատրոն, ադրուտեխնիկական կաբինետ, Պաջը-Ավիաֆիմ, անաստվածներ և այլն) ստանալով նրանց պլանները (վրորդնք պիտի կապակցված լինեն ակմբի աշխատանքի ընդհանուր սխեմային) և մշակելով գրանք (կրճատելով լրացնելով), ակումբի վարչիչը կազմում ե յեռամսյակային և շատ թեքի քիչ մոտավոր ճշուոթյամբ ամսական պլաններ: Հենց այստեղ ել նա նշանակում ե պլանի հիմնական կատարողներին, այս կամ այն պլանային միջոցառման մասնակցողներին (նշանակում են վոչ թե անհատ անձնավորություններ, այլ խմբակներ և սեկտորներ): Յուրաքանչյուր յեռամսյակի և այս կամ այն կամպանիայի նախորյակին ակումբը կազմում և աշխատանքի պլան: Այս պլանում արդեն նշվում են վոչ թե ընդհանուր խնդիրներ, որինակ, —

- 1) Գարնանացան,
- 2) Ցանքերի մշակում,
- 3) Բերքահավաք և այլն, —

Այլ տվյալ ժամանակում մղվող ամեն մի կամպանիայի բոլոր մանրամասնությունները, բոլոր կարևորագույն խընդիրները: Յեզ այստեղ մատնանշվում են պլանի կատարման ձևերն ու յեղանակները, ինչպես նաև կոնկրետ կատարողները և ճիշտ ժամկետներն ըստ դեկադի որերի:

Ենթադրենք թե ակումբն իր պլանը կազմում ե փետրվար ամսի համար: Հայտնի յե, վոր փետրվարը գարնանացանի նախապատրաստության վճռական ամիսն ե: Ակմբի բոլոր խմբակները, չընդհատելով իրենց պլանով նախատեսված սխանմատիկ աշխատանքը (որինակ, ուղղմական խմբակը վորն ուսումնասիրում ե հրաձգությունը, քաղաքական խմբակը, վորն ուսումնասիրում ե լենինիզմի այս կամ այն հարցը, անդրագիտության վերացման խմբակը վորն ունենում ե իր սովորական պարապմունքները և այլն), մասնակցում են գարնանացանի նախապատրաստության: Կամպանիան չպետք ե խանգարի ուսուցման: Վերջինս չպիտի կտրի խմբակները սոցիալիստական շինարարության գործնական խնդիրներից: Քաղաքական խմբակը, վորն ուսումնասիրում ե լենինիզմի հարցերը, կարող ե ոգնել և պետք ե ոգնի կոլտնտեսության ակտիվին՝ ուսումնասիրելու առաջիկա ցանքի խընդիրը:

Դիբները, նրա պլանը, ոգնի նրան՝ այդ գործնական խնդիրները կապահցելու հեղափոխության, սոցիալիզմի շինարարության ընդհանուր խնդիրներին, բարձրացնելու այդ ուսումնասիրությունը տեսական պատշաճ մակարդակի վրա, կազմակերպելու մասսաներին՝ պայքարելու պլանի կատարման համար։

Տնտեսական գործնական հարցերի ուսումնասիրությամբ ակտիվին ու մասսաներին սովորեցնել լենինիզմը։ Խաղմական խմբակը պետք է ողտագործի իր քիմիական գիտելիքները՝ հանքային պարարտացումների համար պրոպագանդ մղելու, գյուղատնտեսության վիճակառուների ու մոլախսուների դեմ կռվելու համար։ Հակակրոնական խմբակը պետք է պայքարի ազանդագործական, տերուերական, կուլակային պրովակացիաների դեմ, ինչպես և սնապաշտությունների դեմ յերկրագործության մեջ, վարի ու ցանքի պապենական յեղանակների դեմ և այլն։

Ակմբի բոլոր խմբակներն առանց բացառության, քաղլուսաշխատողները պետք են անխնա պայքար մղեն դասակարգային թշնամու մեքենայությունների դեմ, ցանքը և նրա նախապատրաստությունը վիճեցնելու փորձերի դեմ։ Բոլորը պետք են համանան, վոր ցանքի համար մղվող պայքարն ամենից առաջ քաղաքական պայքար են։ Յուրաքանչյուր աշխատանքի կոնկրետ պլան կազմելիս ակմբի վարիչը պետք է հաշվի առնի ուլոր առեւ ույժերն ու միջոցները։ Պետք է պարզի, թե վո՞ր ույժերն ու միջոցները պիտի ոգտագործվեն դարնանցանի ժամանակ։

Թվենք (գարձյալ մոտավորակես, սխեմատիկ) հիմնական ույժերն ու միջոցները—1) գրադարան-ընթերցարան, 2) կուլուկազմակերպիչ, 3) ընթերցողներ, 4) կինո, 5) ռադիո, 6) թատրոն, 7) անդրադիտության վերացման խմբակ, 8) գլորոց, 9) պիոներներ, 10) գրքատարներ, 11) խմբակներ—քաղաքական, ույլավատնաեսական, ռազմական, հակակրոնական և այլն,—12) պատի լրագիր, 13) աղիտամորներ և պրոպագանդիստ-դասախուներ, ղեկուցողներ։

Աշխատանքի ձևերը.—1) զեկուցումներ, դասախոսություններ, զրույցներ, 2) գրքերի ու լրագրերի ընթերցումներ, 3) բանավոր և կենդանի լրագիր, 4) յերեկույթներ, 5) քաղ-որեր, 6) պիեսներ, 7) ինսցինիրովկաններ, ագիտ-դատեր, քաղ-դատեր, 8) պլակատներ, 9) ագիտ-սայլեր։

Ունենալով այդպիսի ույժեր, միջոցներ, աշխատանքի ձևեր, ակումբը կարող է բազմազան գործունեյություն ցույց տալ, այնպիս անել, վոր ույդ գործունեյությունը ձանձրալի ու «անալի» չլինի: Իհարկե չպետք է ընկնել աշխատանքի չափից դուրս շատ ձևերի հետեւց (ինչպիս և չպետք է ահճամանափակիվել միայն հայոնի, շաբլոն ձևերով ու մեթոզներով, այլ պետք է փնտրել, սանզծել աշխատանքի աշխույժ, ճկուն, կենսական ձևեր), բայց հարկավոր է պարզապես խուսափել միմիայն զեկուցումներ ու դասախոսություններ կազմակերպելուց:

Հիմա արդեն ակմբի վարիչի համար դժվար չի լինի վռոշել, թե ո՞վ, ի՞նչպիս և ի՞նչ ձևերով պիտի իրագործի վարհանացանի նախազարասատության փետրվարյան պլանի հետեւալ հարցերը:—

- 1) Գարնանցամբ՝ վերաբերյալ՝ կուսակցությունը և համապատասխանականը կ մնասարին առ համապատասխանությամբ կ դարձնանալու մասին գործությունների մասնակիությամբ՝ մասնաւությամբ՝ 40 դրամ:
- 2) Պատմական գործությունը՝ ուսումնասիրությունը բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար— 20 բարի:
- 3) Պահճերի ժամանակակիցների կուտանքն ըստ պահճերի ժամանակակիցների 10 տասն համար:
- 4) Անհանդիպ բարձրածայի շնչիքոց մեջ առ կուտանքն ըստ պահճերի ժամանակակիցների 10 տասն համար:
- 5) Անհանդիպ սեղմանի սեղմանի մասին:
- 6) Պ. առ. ժեղանահնություն և զարգիքի դիրքորոշությունը:
- 7) Անդամականությունը՝ պահճերի աշխատավայրի մասին:
- 8) Անդամականությունը՝ Հայաստանի պարագաների մասին:

Կարուցում կ կրկնական գործությունը կ մնասարին առ համապատասխանականը կ դարձնանալու մասին գործությունների մասնակիությամբ կ դարձնանալու մասին գործությունների մասնաւությամբ՝ 40 դրամ:

Վարդապետի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար— 20 բարի:

Պահճերի ժամանակակիցների կուտանքն ըստ պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

Բարձրածայի շնչիքոց մեջ առ կուտանքն ըստ պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

Պարագաների սեղմանի մասին:

Պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

Պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

Պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

Պահճերի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի ուսումնասիրությունը՝ բրիգադի աշխատավայրի 10 տասն համար:

- 8) Եղանձնուհետո, քամի արտօնութեանին բառչրդակցություն, պատճեանիք պահանջման մասին իրավունքը իրավունք, պատճեանիք պահանջման մասին իրավունքը:
- 9) Յամքի եալիութեանուանության մասին առաջնական սպառագիր պահանջման մասին սպառագիր:
- 10) Համքային պատաքառացությունի մասին:
- 11) Առքի ու քայլի ժամանակ:
- 12) Սոցիումիզմի շահնշանի և նըսա համարականության ժամանակ:
- 13) Քաղաքացի քայլի պատաքառացությունի մասին (միա տարբեր տարբեր պահանջման մասին):
- Բայց այս կամաց պահանջման մասին իրավունքը կամաց պահանջման մասին իրավունքը:
- Այս գույք առաջ կառավարության կամաց պահանջման մասին իրավունքը:
- Այս գույք առաջ կառավարության կամաց պահանջման մասին իրավունքը:
- Այս գույք առաջ կառավարության կամաց պահանջման մասին իրավունքը:

Այս պլանին պետք է ավելացնել նաև յերկու սյունյակ—  
կատարման ժամկետները և նշումներ կատարման ժամփն։  
Սրանով չի սահմանափակվում ակմբի ամբողջ փետրվարյան  
աշխատանքը։ Չպետք է մոռանալ, վոր ակումբը պարտավոր  
է ոպասարկել մոտակա գյուղերը, նրանց կարմիր անկյուն-  
նեցը և ողնել նրանց կուրտ-կազմակերպիչներին։ Այս պատ-  
ճառով պլանում պետք է նախատեսնվի ակմբի վարիչի, աղի-  
տառորդների, ագիտ-խմբակների ու ազիտ-սայլերի մեկնումը  
գեղի գյուղերը և շրջիկ-կինոյի մարշրուտը և այլն։

Գարնանայցանի կամպանիայի սկզբից, հենց վոր գյու-  
ղացիները գուրս են գալիս ցանքի, ակմբի ու կարմիր անկ-  
յան աշխատանքի ծանրության կենարոնը փոխադրվում է  
զաշտերը։ Յեզ այդ շարունակվում է մինչեւ ձմեռ։ Ակմբի  
ներսում աշխատանքը բոլորովին չի դադարում, Կամբակնե-  
րի պարապմունքները շարունակվում են իրենց կարգով։ Սա-  
կայն ակումբը դառնում է մի շտաբ, վորը զեկավարում է  
բրիգադներում, հողամասերում, արոտավայրերում ցրված-  
քաղյուսաշխատողների ամբողջ բանակը։ Քաղլուսաշխա-  
տանքի ամառային ձևերն աչքի յեն ընկնում իրենց ճկունու-  
թյամբ ու աշխատավությամբ։ Դաշտային աշխատանքների  
շրջանում ժամանակ չկա կարդալ մեծ բրոշյուրներ ու գրքեր,  
ժամանակ չկա նույնիսկ ուշադրությամբ հետևել լրագրե-  
րին, կամ դասախոսություններ ու յերկար զրոյցներ լսել։  
Բայց և այնպես կարգալ հարկավոր ե, գեղքերին իրազեկ  
լինելն անհրաժեշտ։ Յեզ ահա ակումբն ընդառաջ է գնում  
մինչև կոկորդներն զբաղված ցանվորներին, ծավալելով աշ-  
խատանքի այնպիսի ձևերն, ինչպիսին են՝ բարձրածայն ըն-  
թերցումները, թոռւցիկ զրույցները, դաշտային լրագրերը,  
բանավոր ու կենդանի լրագրերը, բեմադրությունները և  
այլն։ Դաշտ է փոխադրվում յերաժիշտների, գրամախմբակի,  
ֆիզկուլտուրնիկների և այլն աշխատանքը։ Դաշտերում քաղ-  
լուս աշխատանքը կատարվում է գլխավորապես ընդմիջում-  
ներին, ցանվորների հանգստի ժամանակի։

Այստեղ շոշափված բոլոր հարցերի մասին գոյություն  
ունի մասսայական քաղաքական ու մեթոդական դրականու-  
թյուն։ Պլանի յուրաքանչյուր բաժինը կամ այս կամ այն  
կամպանիան սպասարկելու պլանը կազմելիս, ակմբային աշ-  
խատողները պետք է լավ ուսումնասիրեն այդ դրականու-  
թյունը։ Այսպես, որինակ, գյուղատնտեսական բոլոր կամ-

պանիաների վերաբերյալ կան մեթոդական բրոցյուրներ, իսկ մյուս կամպանիաները բավական լայն չափով լուսարանվում են մամուլում:

Կազմելով կամպանիայի աշխատանքային պլանը, կամ ամսական աշխատանքի պլանը, ակմբի վարիչը հետադայում կազմում և ակմբի և իր ղեկավարության տակ գտնվող բոլոր աշխատադների գործունեյության ծրագիր ամեն որվա համար: Ակմբի որական ծրագիրը գրվում և առիշշի կամ հայութաբարության ձևով և փակցվում և աչքի ընկնող տեղում: Յուրաքանչյուր կուլտկազմակերպիչ և ընթերցաղ յերեկոյան ուսաջագրություն և ստանում ակմբի վարիչից՝ հետևյալ որպահ համար: Յուրաքանչյուր խմբակի, կուլտկազմակերպիչ, ընթերցաղ, գրադարան, տեղեկատու սեղան, մի խոսքով, ակմբի բոլոր աշխատանքները պահում են իրենց աշխատանքի որագիրը: Ակմբի վարիչը կամ նրա ուժականը պահում են ամբողջ ակմբի որագիրը, վորտեղ համառոտ-դիանցում են ակմբի ամենորյա աշխատանքները: Առանց որագրի անկարելի յէ հաշվի առնել ակմբի աշխատանքն, անկարելի յէ հաշվետիւթյուն տալ, հանրագումարել կատարված աշխատանքը, հետևապես անկարելի յէ ճիշտ պլանավորել ակմբի դորժունեյությունը:

Քաղլուս աշխատանքի միասնական պլանը շրջանում և գյուղում

Շրջանում և գյուղում միայն սոցկուլտուրայի տները, ուկումբներն ու կարմիր անկյունները չեն, վոր քաղլուս աշխատանք են կատարում: Նրանք մենակ չելին ել կարողանա իրենց ուսերին առնել այդ բոլոր ընդարձակ խնդիրները: Քաղլուսաշխատանքով այս կամ այն չափով զբաղվում են նաև մի շաքը կազմակերպություններ և հիմնարկներ, — կուսակցությունը, կոմյերիստիությունը, արհմիությունները, շեֆերը, դպրոցները, կոոպերացիան, պատգամակորուհիների ժողովները, ժողովական թատրոնները, կինոթատրոնները, կինոթատրոնները և այլն:

Այժմ մասսայական լայն քաղ-դաստիարակչական աշխատանք են կատարում և ագրոտեխնիկական պրոպագանդ մղում ՄՏԿ-ները, շրջանային հողվարչությունները, խորհուտնությունները:

Այդ բոլոր կազմակերպությունները պրոպագանդայի և

աղիտացիայի համար հոկայտական ուժեր ու միջոցներ են ծախտամ և յեթե նրանց աշխատանքները չհամաձայնեցվեն մեկ-մեկու հետ, յեթե չկապակցվեն նրանց պլանները, ապա այդ ույժերն ու միջոցները հաճախ կլինեն շատոված, կծախութեն աննպատակահարմար: Այս պատճառով միանդամայն անհրաժեշտ և ունենալ շրջանի ու գյուղի քաղլուս աշխատանքի միասնական պլաններ: Դեռ կուսակցության XIII համաշխատաբը մատնանշեց, վոր «այն, ինչ վոր այժմ արվում և դյուղի քաղլուս աշխատանքի ուղղությամբ, չափազանց քիչ և այդ աշխատանքը կատարվում և խիստ անպլանաչափ ու հաճախ սակավ նոպատակահարմար: Ույժերն ու միջոցները շատոված են, ցրված և այդ պատճառով քիչ արդյունքներ են տալիս, քան կարող եր լինել, յեթե դոյություն ունենար մի ընդհանուր պլան»:

Այսաեղ, վորտեղ կան սոցիալիստական կուրտարայի մներ, քաղլուսաշխատանքի միասնական շրջանային պլանի կազմելին ընկնում և նրանց վրա: Յենթաշրջանում միասնական պլանը կազմում և ակումբը: Քաղլուսաշխատանք կատարող կազմակերպություններից յուրաքանչյուրը պետք և ունենա իր պլանն այդ աշխատանքի համար: Նա չի կարող աշխատել առանց պլանի, պատահարար, ինքնահոսով: Ակումբը հավաքում և այդ բոլոր պլանները, ուշադրությամբ ուսումնասիրում և, համաձայնեցնում: Առանց դրան հաճախ այնպես պատահում, վոր մի շարք կազմակերպություններ զեկուցումներ են ծրագրում միենանույն թեմայի շուրջը, կամ միենանույն ժամանակ ստուգատեսներ ու տասնորյակներ են անցկացնում բոլորովին միատեսակ խնդիրների շուրջը, իսկ մյուս զեկուցումների ու գործերի համար ույժերը չեն բավականանում:

Միասնական պլանը վերացնում և պարակելլիոմը: Սակայն այդ պլանը բոլորովին չպիտի դիմազուրեկ անի կազմակերպությունները, վերացնի նրանց ոպերատիվ աշխատանքի ինքնուրույնությունը: Ընդհակառակը, յուրաքանչյուր կազմակերպություն լիակատար չափով պատասխանատու յե միասնական պլանի իր բաժին աշխատանքի համար և այն կատարում և միանգամայն ինքնուրույն կերպով: Միասնական պլանը միայն ոգնում և կազմակերպությունների միջև աշխատանքի ճիշտ բաշխելուն, ույժերի ու միջոցների խնայողությանը: Միասնական պլանը նույնպես կազմվում և մեկ

տուավոր պլան, վորի փոխարեն կարելի յէ մտցնել ակմբի և կազմակերպությունների միջն կնքմելիք պայմանագրերի սխառամքը) համար, ինչպես և յեռամսյակի կամ հերթական աղիտ-կամպանիայի համար (աշխատանքային ոլյան): Այս ոլյաններում, ինչպես և ակմբի պլանում, մանրամասն տրվում և աշխատանքների բովանդակությունը, նրանց կատարման ձևերը, ժամկետները, մատնանշվում են կատարողները և կատարումը: Ակումբներն իրենց մշակած յեռամսյակային միամնական պլանները յեռամսյակի սկզբոց 10 որ առաջ ուղարկում են շրջլուսրաժնի և ՄՏԿ քաղրաժնի հաստատության:

Ակմբի կուլտուրական ակտիվը և աշխատանքը նրա հետ

Ակմբի առաջ դրված հակայական խնդիրները, բոլոր այն հարցերը, վոր մենք համառոտակի շոշափեցինք նախորդ գլուխներում, չեն կարող ընդդրկվել ու լուծվել միմիայն ակրօն քի հասախքային աշխատողների ույժերով, յեթե անդամ նկատի ունենանք նաև սոցհամատեղության կարգով աշխատողներին: Թվում ե, թե ինքնըստինքյան պարզ ե, վոր ակմբի ու կարմիր անկյան քաղլուսաշխատանքներին պետք ե ներդրավիեն գյուղի բոլոր կուլտուրական ուժերը, վորոնք մի վորելիք չափով կարող են ոգտագործվել մասսայական կուլտուրակատիւրական աշխատանքի համար: Ակումբն և կարմիր անկյունը պետք ե իրենց շուրջը համախմբեն բոլոր առաջավոր, դասակարգայնորեն ստուգված, կուլտուրեսային գործին հավատարիմ կուլտուրական ույժերը և նրանցից կազմակերպեն թեկուց և փոքր, բայց ուժեղ կուլտուրական հեղափոխության գործին հավատարիմ սկստիվիստների կուլտ ֆրոնտի ենտուղիաստների միջուկ, նրանց միջոցով կապվեն մասսաների հետ, կազմակերպեն կուլտ-ակտիվի միջոցով իրենց քաղաքական աղղեցության, դիտելիքների, կուլտուրայի տարածման մի հզոր սիստեմ:

Սակայն կուլտուրական ակտիվի նշանակության այդը բռնուսմը, այդ ակտիվը խմբելու, դաստիարակելու, աճեցնելու ցանկությունն ու կարողությունը մինչև այժմ բացակայել ե մեր խրճիթ-ընթերցարաններում և այլ քաղլուս հիմնարկներում: Ցեզ համարյա թե հենց այդ ե յեղել գլխավոր պատճառը, վոր մեր խրճիթ-ընթերցարանները հետ են մնացել, չեն կարողացել կապվել մասսաներին, ոգտակար լինել

նրանց համար։ Կուլտուրական ակտիվը, վորն ընտրվում է կոլտնտեսականներից, առաջավորներից, կոլտնտեսային շինարարության հարգածայիններից, հարկավոր և ակմբին վոչ միայն իրրե ողնական՝ քաղղուսաշխատանքի կոնկրետ խնդիրներն իրազործելու համար, այլ գլխավորապես այն նպատակով, վոր ամբողջ ակմբային աշխատանքը կապվի քաղաքական ու տնտեսական գործնական խնդիրների հետ, վորոնք գրիված են գյուղի ու կոլտնտեսության առաջ, վոր այդ աշխատանքը չլինի մտացածին, առարկայազութեա, ողից կախված, այլ պարզ որինակներով կարողանա ցույց տալ, թե ինչպես պիտի սոցիալիզմ կառուցել։ Առանց այդ մասսաների առաջավորների՝ կոլտնտականիվի միջոցներով մասսաների հետ այդպիսի իննդանի կապ պահելու, ակումբը չի կարող կատարել իր հիմնական խնդիրը—լինել կոմունիզմի պլրոպագանուայի պետական որդան, —քանի վոր «առանց աշխատանքի», առանց պայքարի, կոմունիստական բրոցյուրներից ու յերկերից քաղած կոմունիզմի գրքային պիտությունը բոլորովին վաշինչ չարժե» (Լենին)։

Կոլտնտեսային ակտիվի դաստիարակությունը ակմբի կարևորագույն խնդիրն եւ։

Ըստ եյտության ակմբի ամենախմնական, ամենակարեվոր խնդիրն այն եւ, վոր ոգնի կուտակցությանը հայտնարերելու, ստեղծելու, դաստիարակելու կոլտնտեսային ակտիվի հարգածային կոլտնտեսականներից, սոցիալիստական մցության մասնակիցներից, բրդագիրներից և այլն և ակտիվի չուրջը համախմբելու կոլտնտեսականների և աշխատավոր մենատոնտեսների ամբողջ մասսան, ակտիվի ոգնությամբ իրազործելու մասսաների սոցիալիստական մերադաստիարակությունը։ Հենց այդ կոլտնտեսային ակտիվն եւ, վարք պիտի դառնա ակմբի կուտուրական ակտիվ։ Շատ քաղղուշաշխատողներ մինչեւ այժմ գեռ չեն հասկացել, վոր գյուղում կատարվող տեղաշաբթերը, գյուղի կոլեկտիվացումը փոխել են նաև կուլտուրական ակտիվի հին հասկացողությունը։ Առաջ կուլտուրական ակտիվ առնելով հասկանում ենին միայն գյուղական վորակյալ ինտելիգենցիային, —գյուղատնտեսին, բժշկության, անառնաբուժին, ուսուցչին, խրճիթվարին և այլն։ Նրանք այժմ ել հանդիսանում են և պետք եւ լինեն ակմբի կուլտուրական ակտիվի կրթիզը, բայց միայն նրանդով չեն պատրվում կուլտուրական ակտիվի հասկացողությունը։

Կուլտուրական ակտիվ—դրանք նոր կուլտուրայի, նոր կենցաղի, աշխատանքի սոցիալիստական մեթոդների, բռջեկեցան կոլտնտեսության, սոցիալիստական հասարակության համար պայտարողներ են, մարտիկները։ Ուստի կուսակցական-կոմիտեմ յերիտական ակտիվը, կոլտնտեսության առաջավորները, հանդիսանում են կուլտուրական ֆրունտի լավագույն հարվածայինները։ Նրանցից շատերը թերեւ չունեն կուլտուրական աշխատանքի ունակությունները, թերեւ բավականաչափ գրադեմ չեն, կուլտուրական չեն, բայց ակմքի ամբողջ խնդիրը հենց այն է, քոր դաստիարակի նրանց, բարձրացնի նրանց կուլտուրական մակարդակը, զարգացմաբարձր զինի նրանց և դարձնի կուլտուրական հեղափոխության կուլտուրական մարտիկներ։

Իդուք չե, վոր ընկ. Ստալինն ասում եր—

«Դյուդացի-ագիտատորները համելիսամում են կոլտնտեսությին շարժման զարմանալի ագիտատորներ, քանի վոր նրանք այնպիսի ապացույցներ կԳտնեն հոգուտ կոլտնտեսությունների, հասկանալի և ընդունելի գյուղացիների հիմնաց կան մասամբի համար, վորոնց մասին մենք, վորակյալ բայլշեվիկներս, յերազել անգամ չեն կարող»։

Եեթե կոլտնտեսությն ակտիվը հանդիսանում է այն լավագույն պահեստը, վորաեղից ակումբը պետք է ստանա իր կուլտուրական բանակը, —ապիտատորներին, գյուղթղթակիցներին, կուլտ-կազմակերպիչներին, ընթերցողներին, մի խոսքով, իր լավագույն ողնականներին մասսայական քաղցրուս աշխատանքների մեջ, —ապա նա պիտի աշխատի այդ ակտիվի հետ, սովորեցնի, պատրաստի նրան։ Աշխատել կուլտնտեսությն ակտիվի հետ, նշանակում է միևնույն ժամանակ աշխատել կուլտուրական ակտիվի հետ։ Սակայն կան նաև հատուկ խնդիրներ—կուլտուրական ակտիվի հատուկ պատրաստությունը քաղցրուս աշխատանքի համար, ուս քաղցրուս աշխատանքի տեխնիկային տիրապետելն է։ Ակումբն իր գյուղթղթակիցների, ընթերցողների, կուլտ կազմակերպիչներին այլ քաղցրուս աշխատողների համար պետք է կազմակերպի նիստեմատիկ ռեսուլցում խմբակներում, հեռակա դասընթացներում, դասընթացը—կոնֆերենցիաներում և ամենօրյա գործնական կյանքում։ Իր չուրջը համախմբելով կուլտուրական ակտիվին, ակումբը պետք է նրա

մեջ ճիշտ բաժանի աշխատանքները, հմտությամբ ովտագործի: Ակմբի այն ակտիվիտատը, վորը չի կատարում վորոշակի աշխատանք, վորն ակմբի աշխատանքներին մասնակցում է պատահարար, և վոչ թե սիստեմատիկորեն, —ի յառես ակտիվիտ չե: Ակումբը պետք է ուշադրությամբ ուսումնասիրի իր յուրաքանչյուր ակտիվիտատին, հայտնաբերի նրա ընդունակությունները, հարկավոր ընթացք տա նրանց, հետեւ ակտիվիտատի առաջիմության, ողնի նրան:

Ակումբը պետք է զդուշանա ակտիվի ձևական ընտրությունից, չառաջնորդվի սրա կամ Կրտ գրաված պաշտոնով և այլն: Ակումբի ընտրության զործում նա պետք է ցուցաբերի հեղափոխական-զանակարգային մեծ զգոնություն, վորպեսզի թույլ չտա, վոր զասակարգային թշնամին խցկի կուլտակախիվի շարքերը՝ իդեոլոգիական ֆրոնտում քայլացնի աշխատանք կատարելու համար:

Ակմբի կուլտուրական ակտիվը պետք է դաստիարակել այնպիս, վոր նա լինի միաձուլված, կարգապահ մի բանակ, վորն աշխատում է ճշտությամբ, հարվածայնորեն և որինակելի:

Կարելի յե յերևակայել, թե վորքան անհրաժեշտ կլինի ակմբի ազիտացիան՝ կոլտնտեսության մեջ սոցիալիստական աշխատանքի, յերկաթյա դիսցիպլինայի, հարվածայնության համար, —յեթե նա իր ակտիվի հետ վատ և աշխատում, յեթե նա վիժեցնում է պլանները և յեթե նրանում բացակայում է աշխատանքի դիսցիպլինան: Այդպիսի ակմբի ազիտացիայի վրա կծիծառեն: Ակումբը պետք է ազիտացիա մղի իր որինակով, իր դործով:

Ակումբը—սցմբան կազմակերպիչ :

Պրոպագանդայի և ազիտացիայի կարևորագույն մեթոդը, ինչպես հայտնի յե, հանդիսանում է սոցմբցումը: Յեթե քաղլուս աշխատանքի արդյուների մասին կարելի յե զատել տնտեսական շինարարության հաջողություններով, ապա սոցիալիստական մըցությունը, —վորը հարվածայնության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, տնտեսական շինարարության հաջողությունների ազահովման ամենանհրաժեշտ լժակն ե, —պետք է դառնա ամբողջ ակմբային աշխատանքի հիմնական մեթոդը:

իսկ այդ աշխատանքի կազմակերպումը, —նրա հիմնական ու կարևորագույն խնդիրը:

Ակումբը պիտի լինի սոցիալիստական մրցության ազգակողը, նրա կազմակերպիչը:

Բայց, վորպեսզի ակումբն ունենա այդ իրավունքը, նա իր ներսում պետք է ծավալի և պատշաճ բարձրության վրա դնի սոցիալիստական մրցությունը բոլոր կուլտուրականության ների, խմբակների, ընթերցողների, կուլտուրական ակտիվի միջև: Բացի դրանից, ակումբը պետք է սոցիալիստական մրցության մեջ մտնի մյուս գյուղական, խորհանուեսային, ՄՏԿ-կամ բանվորական ակմբների հետ: Ակմբի առջեւ դրված կուլտուր-քաղաքական խնդիրների բավարպույն հաստարման համար ճենարկված սոցիալիստական մրցությունը մի հիմնալի միջոց է կուլտուրական ակտիվի դաստիարակման համար:

Վերեռում մենք արդեն մի քանի անգամ չեւտել ենք, թե գյուղում քաղյուս աշխատանքի այժմյան ետապը բնորոշվում է նրանով, վոր այդ աշխատանքը վճռականապես փոխադրվում և մասսաների մեջ, արդադրություն, կոլտնաեւության արտադրական բրիգադը: Այստեղից ել պետք է յեպքակացնել, վոր հենց արտադրական բրիգադներում պետք է առաջ քաշվի, կազմակերպվի և գործի Ծփի կուլտուրական ակտիվը: Արտադրական բրիգադների մրցության բոլոր պայմանագրերում պետք է մտցնել կուլտուրական հարցերի մեջ բերյալ կետեր, —քաղուսուցման լավագույն կազմակերպման, ագրոտեխնիկայի տիրապետման, լրագրերի բաժանորդագրության, գրքեր կարգալու մասին և այլն:

Կարելի յեւ ուղղակի ասել, վոր ակմբային որինակելի աշխատանքի լավագույն չափանիչը հանդիսանում է հարվածայնության և ացմբցման մասամյական վերելքը: Այդ գործի խթանողը, կազմակերպիչը և ղեկավարը դառնալու համար ակումբը պետք է իրադեկ լինի կուլտնուեսալին կը տեսքի բոլոր հարցերին, դիտենա կոլեկտիվ անտեսության բոլոր մանրամասնությունները, աշալուրջ հետեւ ամբողջ կուլտընտեսության, նրա յուրաքանչյուր բրդադի, ողակի յուրաքանչյուր քայլին: Պետք է գիտենա յուրաքանչյուր հարվածայինին և հետ մնացողին, վորովհետեւ «սոցիալիստական մրցությունն ասում է, վոմանք աշխատում են վատ, վոմանք

լավ, վոմանք եւ ավելի լավ. հասիր լավագույններին և հա-  
ջողեցրու ընդհանուր վերելքը» (Ստալին):

Սոցիալիստական մրցության պայմանագրերը պետք ե  
լինեն կոնկրետ: Նրանք հանդիսանում են կարևորագույն ո-  
պերատիվ փառատառությունները՝ կոլտնտեսությունները և բրիգա-  
դում և նրանց կատարումը պետք է սիստեմատիկարար  
սառուցվի ամբողջ կոլտնտեսային ակտիվիվ ոգնությամբ: Յու-  
րաքանչյուր գյուղատնտեսական մեծ կամպանիայի նախոր-  
յակին ակումբը կոլտնտեսային ակտիվիվ և կոլտնտեսության  
ժողովներում պետք է ֆնարիման դնի գործնական հարցե-  
րը, սոցմրցման պայմանագրի կնքումը բրիգադի մեջ, բրի-  
գագների ու կոլտնտեսությունների միջև, զարնահացանը,  
զաշտերի մշակումն ու բերքահամարքն անցկացնելու համար:  
Բոլոր պայմանագրերում ամենակարևոր կետերը պիտի լի-  
նեն՝ արտադրանքի նորմանները, նրա վրակի, մեքենաների  
ու լժկանների խնամքը, դիսցիպլինայի ամրապնդումը, հա-  
սարակական սեփականության պահպանությունն և ազգութի-  
չոցառումները:

Կոմյիրիտականները—կուլտուրական քանակի առաջավոր-  
ներ.

«Սովորեցեք բայլչեիզմը և առաջնորդեցեք տա-  
տանվողներին»: (Ստալին)

Հայտնի յե, վոր կուսակցությունն իր լավագույն ոգնա-  
կանին,—կոմյերիտմիությանն առանձնապես ակտիվ դեր ե  
վերապահում գյուղում հարվածայնության և սոցմրցման ու-  
ժը ձեւերի ժամանակ, կոլտնտեսությունների կազմակերպ-  
չական-տնտեսական ամրապնդման, նրանց բայլչեիկացման  
գործում: Հայտնի յե նաև, վոր հենց կոմյերիտականները  
պետք ե վճռական գեր խաղան յերկրագործության անշարժ  
հետամնաց պատեհական մեթոդների հաղթահարման և կոլ-  
տնտեսային գյուղում արքունության գիտությունն ու տեխ-  
նիկան մտցնելու ընդերման գործում: Այդ նրանք են, բարձր  
բիրքի գիրքերը, մորախոտերի և գյուղատնտեսության վնա-  
սառուների վոխերիմ թշնամիները, բիրքիության վարչետ-  
ները: Կուսակցության կողմից իր վրա դրված կանդիրներն  
իրագործելու համար կոմյերիտամիությունը քաղլուս աշխա-  
տանքն ու նրա կենտրոնը, —գյուղական ակումբը, —պետք ե  
դարձնի իր հենարանը, իր անվրեպ ու հզոր դինքը, միենույն

Ժամանակ իր դպրոցը, վորտեղ նա պետք է սովորի և սովորցնի:

Աշխույժ, յեռանդուն յերիտասարդությունը պետք է դառնա ակմբի հոգին, նրա կյանքի մեջ զվարժություն, կենսու բախություն, մարտական-հեղափոխական վոգի, աշխատանքի ու պայքարի ենտուլիազմ և դիտության մեծ, անհագ ծարտվ մտցնի: Ակումբը չվերածելով յերիտակմբի, վոչ մի դեպքում թույլ չտալով, վոր յերիտասարդության չափազանց կայտառ, կենսուրախ մասը վտարի հասակամփոր դյուղացիներին, վորոնք հանդիսանում են դյուոլի հասարակական-քաղաքական կյանքն ստեղծողները, —կոմյերիտմիւթյունն ակմբի կուլտուրական ակտիվիթին պիտի տա իր լավագույն ուժերը, աշխատի ակմբային կյանքում ներդրավել կուտնօսականների և աշխատավոր մենատնտեսների լայն մասաներին:

Վերջի վերջո կարելի յե համարձակ ասել, վոր ակմբի գործնեյտթյան դրության հիման վրա կարելի յե դատել կոմյերիտական կազմակերպության աշխատանքի դրության ու վրակի մասին: Կոմյերիտմիւթյունը պետք է ակտիվ մաս նակայի ակմբային ամբողջ քաղաքական-դաստիարակչական և կուլտկրթական աշխատանքին: Դժվար է մատնանշել աշխատանքի մի վորեւե ճակատամս, վորտեղ կոմյերիտականները պարտավոր չինեն գտնվել առաջին շարքերում: Հավանորեն լավագույն ընթերցողները կլինեն կոմյերիտականները: Գրքատարները, գրքի բարեկամները, գիտական ու քաղաքական գիտելիքները մասսաների մեջ փոխադրողները, ընդհանրապես, ամենուրեք կոմյերիտականներն են:

Կոմյերիտականներն են, վոր պայքարում են առողջ կյանքի, ֆիզիկական կուլտուրայի, խելացի հանդստի, պրոլետարական սպորտի համար:

Կոմյերիտականները մատնչող անսատվածների առաջավոր ջոկատն են: Կոմյերիտականները պետք է լինեն ազգութեանիկական ուսուցման հարվածայիններ, միևնույն ժամանակ լավագույն մասսավիկ—ազգուազուազանդիտներ: Նըսրանք ամենաստուկուն, ամենակայտառ ազիտատորներն են, վորոնք ազիտացիա յեն մզում սոցիալիստական շինարարության հաղթանակների համար, և այլ անում են իրենց անձնական որինակով, բոլշևիկյան գործով, —հարվածային աշխատանքով, գիտակցական կարգապահությամբ, հզոր, ճըշ-

մարիտ, ըմբոստ կոմյերիտական խոսքով, անհաշտ վերաբերմունքով դեպի այն ամենը, ինչ վոր նեխլած և, քայքայված, ինչ վոր բարոյալքում ու թունալորում և նոր, կորոնտեսային, սոցիալիստական կյանքը, իրենց անհաշտ վերաբերմունքով դեպի դասակարգային թշնամին և նրա գործակիցները, — ծույլերն ու կորպիչները, դեպի աջ ուղղորդումիստը, «ձախ» և «ձախլիկ» խոտորիչները — ուղղորդումիստները և դեպի բոլոր հաշտվողականներին ու լիքերանները:

Գյուղում կոմյերիտականները լավագույն մարտիկներ են համաշխարհային հեղափոխության նեցուկ Խորհրդային Միության պաշտպանունակության ամբապնդման համար, Պաջը-Ավիաքիմի լավագույն ակտիվիստները:

Վերջապես, կոմյերիտականները նոր կենցաղի նախաձեռնողներն են, դրագիտության, սանիտարիայի, առողջապահության, կանանց լիակատար ազատազրման, լավ դպրոցի, մանկապարտեզի, մանկամուրի, կինոյի, ուսուցիչի, թատրոնի, կուլտուրական յերաժշտության, հեղափոխական մարտական յերգի, նոր կուլտուրայի, — անդասակարգ սոցիալիստական հասարակության համար պայքարողներ են:

Գյուղում կուլտուրական հեղափոխության համար կոմյերիտմիության մզած պայքարում նրա ուղղեցույց ասալը թող լինի Մհծ Առաջնորդ Լինինի պատգամը, —

«Զի կարելի կոմունիզմ կառացել առանց գիտությունների, տեխնիկայի, կուլտուրայի»:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Շ

Երջանային ու գյուղական քաղլուս հիմնարկների  
սիստեմն ու տիպերը

(Լինինգրադի քաղլուս աշխատողների բրիգադի նախագիծը յերկորդ կուլտուրական 5-ամյակի համար)

1) Սոցիալիստական կուլտուրայի ու տեխնիկայի շրջանային տուն: Սոցիալիստական կուլտուրայի և տեխնիկայի շրջանային տունն ունի յերկու նշանակություն.

1) Լինել աշխատավոր մասնաների կուլտուրական սպասությման վայրը շրջանային կենտրոնում:

2) Լինել այն բոլոր քաղլուս հիմնարկների ամբողջ շրջանային ցանցի կազմակերպչական — մեթոդական ղեկավարության և ոգնության կենտրոնը, վորոնք գտնվում են ըբ-

ջանի տերրիտորիայում, —այս տեսակետից հանդիսանալով ըջլուսաժամի և այլ կազմակերպությունների հենակետը:

Սոցիալիստական կուլտուրայի ըջանային տան աշխատանքը շրջանի քաղլուսցանցի ղեկավարման ու ոգնության գործում կառուցվում ե այսպես. —

1) Կազմակերպչական-մեթոդական ոգնություն, վարի նպատակն ե՝

ա) Ընթացիկ հրահանդներ տալ ու սպասարկել ստորին կադրերին և կուլտուրակատիվին, բ) մատակարարել ծրագրեր, ուսումնական և գննական ձեռնարկներ, գրախոսական ցուցմունքներ և այլն, դ) կազմակերպել ստորին կուլտուրական վերակատրաստությանը (կարճատեղական գասընթացքներ և խորհրդակցություններ), դ) կազմակերպել սխստեմատիկ հաշվառք և ուսումնասիրել քաղլուս հիմնարկների աշխատանքի փորձն և մասսայականացնել այն։

2. Քաղլուս հիմնարկների շրջանային ցանցին կուլտիմվենտարի և կուլտ-սարքավորանքի մատակարարման կազմակերպումը. —

ա) Անկյունների, ցուցահանդեսների, կուլտվրանների և այլն սարքավորումը։

բ) Գրքերի մատակարարում (կոլեկտորի միջոցով) դրադարանային ցանցին։

գ) Մադիո-պարագաների, Փիզկուլտուրայի ու թատրոնի ինվենտարի, յերաժշտական գործիքների, պրոյեկցիոն լուսակերների և դիմապողիտիվների, մրցության և հայտարարությունների առաջնահերթ մատակարարում։

դ) Մտանդարտ կարսանիքի մատակարարում։

յի) Գրասենյակային պիտույքների մատակարարում։

3. Կուլտուրական ողնություն։

ա) Կուլտրբիդագների կազմակերպում և առաջում տեղերը և շրջիկ աշխատանքը (կուլտուրական որբիլ, կուլտուրակակ, կուլտ-սայլ և այլն) մյուս ձեռների կերպում, բ) ուղարկել դասախոսներ, պրումագանդիմաներ, շրջիկ կինոներ և այլն, դ) կազմակերպել մշտական շրջիկ թատրոն՝ ըջանն սպասարկելու համար։

Կուլտուրայի շրջանային սահման ունի իր հասուն շենքը վորուել կան։

1. Ներկայացումների դահլիճ (առնվազն 500 մարդու համար), ձայնական կինո-տեղակայանքով, 1 սենյակ գրա-

դարան-ընթերցարանի համար, վորտեղ պիտի տեղավորվի  
10-15 հազար հատոր գրիք, և ընթերցարան՝ 40-50 մարդու  
համար, 1 ֆոյն (առնվազն 200 մարդու համար), վորը պիտի  
հարմարեցրած լինի ցուցահանդեսների և կիունիների համար։ 1  
սենյամկ բուժեամփառ համար (խոհանոցով), վորը ողեաք և միա-  
ժամանակ սպասարկի մինչև 50 մարդու։ 1 սենյակ հանդասի  
համար։ 5 սենյակ կաբինետների և խմբակային ուս-  
ուրավունքների համար, յուրաքանչյուրը 40 մարդու համար  
(բուժը ռազմովիկացրած), սպորտի զահլիճ, սպորտային  
սարքավորանքով։ 1 պահեստ կուլտինվենտարի և շրջիկ աշ-  
խատանքի համար։ 1 սենյակ գրադարանային կոլեկտորի հա-  
մար։ 1 սենյակ քաղլուռ աշխատովի կորինեալի համար։ 1  
սենյակ ծառայող պերսոնալի համար (գրասենյակ), 2 սեն-  
յակ տեխնիկաբանալի ապրելու համար։ 1 միջանցք, վեր-  
նազգիստաներն հանելու համար։

Սոցկուլտուրայի շրջանային տան կից ողեաք և սարքա-  
վորվի մի չենք՝ ավտոմոբիլի, սայլերի համար և այլն։

Կուլտուրայի շրջանային տան հաստիքը։—

1) Կարիչ, 2) յերեք հրահանգիչ—կազմակերպիչ, 3) 2-3  
հրահանգիչ—պրոպագանդիստ, 4) գրադարանի և կունկառի  
վարիչ, 5) 2 տեխնիկական գրադարանապետ, 6) մատակա-  
րարման պահեստի վարիչ, 7) գործադարձ-մեքենագրուէի, 8)  
2 պահակ-հայլաքարար, 9) կուլտ-ավտոմոբիլի շոփեր։

Կուլտուրայի ու տեխնիկայի շրջանային տունն իր սիս-  
տեմում կազմակերպչորեն միավորում և գրադարանը և գո-  
վառադիտական թանգարանը։

Բացի դրանից, կուլտուրայի ու տեխնիկայի տունն իր  
աշխատանքի ընթացքում պետք է սերտ կապվի Սոյուզկի-  
նոյի կինո-վարձակայանի, գյուղացու տան, ռադիո-հան-  
դույցի և արհմիութենական կուլտ հիմնարկների հետ

Ուրիշ կազմակերպությունների փոխ-հարաբերություն-  
ները վորոշում են պայմանագրերով, —թե՛ ընդհանուր և թե՛  
առանձին գործնական միջացառումների վերաբերյալ։

Սոցիալիստական կուլտուրայի ու սենյակայի  
գյուղական տուն

Լինելով կոմունիզմի պրուլազանդայի պետական ոլո-  
գան, սոցիալիստական կուլտուրայի ու տեխնիկայի գյու-  
ղական տունը ղեկավարում է ու ծավալում և մասսայական

քաղլուսաշխատանքը բանվորների և կոլտնտեսականների, մենատնտես չքավորների ու միջակների, ինչպես նաև մասնագետների մեջ: Նեկավարում և ողնություն և ցույց տալիս իր տերրիտորիայի վրա դանվող քաղլուս հիմնարկների ամբողջ ցանցին:

Սոցիալիստական կուլտուրայի և տեխնիկայի գյուղական առներ կազմակերպվում ե գյուղխորհրդի կենտրոնում, ունի հատուկ շենք, վորք պիտի ունենա՞

1) Ներկայացումների դահլիճ՝ կինո-ստացիոնարով և բիմով, առնվազն 250 մարդու համար:

2) Ֆոյե 50 մարդու համար, վորտեղ պիտի հնարավոր լինի ցուցահանդես կազմակերպել: Յունիակ՝ խմբակային, զարգոցական-դասընթացքային պարագմունքների ու կարինետների համար, յուրաքանչյուրը 30 մարդու համար, նրանցից մեկը պիտի ունենա:

Մեկ հանգստի սենյակ (ուղիոյով): Մեկ սենյակ 5000 հատոր գրքերի և ընթերցարանի համար (25 մարդու): 1 սենյակ բարձրատիրած լրադրերի համար: 1 սենյակ շրջիկ գույցքի (կինո, ինվենտար, պարագաներ և այլն) համար, մասավորապես 35-40 քառ. մետր: 1 սենյակ գրասենյակային բնույթի և 2-3 սենյակ ծառայող պերսոնալի բնակության համար, 1 միջանցք վերնադիետ հանելու համար:

Կուլտուրայի գյուղական տան հաստիքը:—

ա) վարիչ, բ) գրադարանի և շրջիկ ֆոնդի վարիչ, գ) հրահանութիչ, դ) պահակ-հայտաքարար:

Կուլտուրայի գյուղական տանն անօլտյման սաքքավորմում են հետևյալ կարինետները:—ա) առըստեխնուցման, բ) ուղղմական և ֆիզկուլտուրայի, գ) կույտ-բանակայինի:

Գյուղական հիմնարկների սիանեմի ու տիմպերը պուտեխնուցման հետ փոխ-հարաբերությունները կառուցվում են հատուկ պայմանագրերի հիմունքով:

Քաղլուս հիմնարկների սիանեմի ու տիմպերը  
կոլտնտեսություններում.

Կոլտնտեսություններում պիտի լինեն. Հետևյալ տիպի հիմնարկներ, վորոնք աշխատում են սոցիալիստական կուլտուրայի ու տեխնիկայի գյուղական տան անմիջական դեկավարությամբ:—

1) Կոլտնտեսային ակումբ և ընթերցարան այն կորուն-  
տեսություններում, վորոնք ունեն ունվազն 100 տնտեսու-  
թյուն:

2) Ակումբ-ընթերցարան 50-100 տնտեսություն ունեցող  
կոլտնտեսություններում:

3) Կարմիր անկյուն-մանր կոլտնտեսություններում  
և արտադրական հողամատերում:

Նրանց հիմնական նպատակն է կազմակերպել ու տանել  
կուլտուր-գողաճական աշխատանք՝ կոլտնտեսությունների  
կազմակերպչական—տնտեսական ամբարձման և կոլտնտե-  
սային մասսաների սոցիալիստական վերօնդաստերակության  
ուղղությամբ:

Աշխատանքի ծավալն ու նրա բովանդակությունը վորո-  
շում են ըստ տեղական առանձնահատկությունների:

Ինչ վերաբերվում է հիմնարկների առանձին տիպերին,  
ապա դրանք հետեւյալներն են լինելու.

Կոլտնտեսային ակումբն ունի հատուկ շենք, վորոնեղ  
պիտի լինի՝ ա) ներկայացումների դահլիճ առնվազն 150 տե-  
ղող, բ) 1 սենյակ դրագարան-ընթերցարանի համար, վոր-  
տեղ պիտի տեղավորովի 1000 գիրք, ընթերցարանում—25  
մարդ. գ) 2 սենյակ խմբակային պարագամունքների և կարի-  
նետների համար (նրանցից մեկում—ուաղիո):

Կոլտնտեսային ակումբի հաստիքը.—

1) Վարիչ, վորն ընտրվում է կոլտնտեսականների ընդ-  
հանուր ժողովում և վորը պիտի վարձատրվի առնվազն 25  
աշխորով:

2) Պահակ (պիտի վարձատրվի 10 աշխորով):

Ակումբ-ընթերցարանը (մեծացրած կարմիր անկյուն)  
ապահովվում է յիրկու սենյակից բաղկացած շենքով:

ա) 1 սենյակ 500 գիրք և 20 մարդ տեղավորող դրադա-  
րան-ընթերցարանի համար:

բ) 1 սենյակ խմբակային աշխատանքների համար (պիտի  
ունենա ուղղիո և 25 մարդու տեղ):

Ակումբը-ընթերցարանի (մեծացրած կարմիր անկյան)  
հաստիքը.—

1) Վարիչ, վորն ընտրվում և կոլտնտեսականների ընդհանուր ժողովում և վորը պիտի վարձատրվի առնվազն 15 աշխորով:


2) Կարմիր անկյուն: Ունի (վորպես մինիմում) հատույլ սենյակ, շրջիկ գրադարանով, ռադիոյով և լրադրերով:


Անկյան վարիչը, վորն ընտրվում և կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, վարձատրվում և վոչ պակաս, քան 10 աշխորով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Կուլտուրական հեղափոխության խնդիրները 2-րդ հնգամբակում . . . . .	3—7
2. Կուլտուրական հեղափոխության խնդիրները գյուղի սոց՝ վերակառուցման գործում . . . . .	7—10
3. Քաղաքական լուսավորության աշխատանքը դնել 2-րդ հնգամյակի խնդիրների մակարդակի վրա . . . . .	11—18
Քաղաքական լուսավորության կազմակերպչա- կան խնդիրները գյուղում . . . . .	19—29
Քաղղուսանցի վերակառուցումը ՀԽՍՀ ուժ ա) գյուղական ակտոմբը . . . . .	30—37
բ) կարմիր անկյուններ . . . . .	37—42
Քաղղուսաշխատանքի նյութական քաղան Ակմբի և կարմիր անկյան ստրօնավորումը	42—49
Ակմբի և կարմիր անկյան խորհուրդ . . . . .	49—51
ա) ակմբի վարչություն . . . . .	51—52
բ) կարմիր անկյան խորհուրդ . . . . .	53—
Ակմբի և կարմիր անկյան աշխատանքի ողանը	53—65
Քաղղուսաշխատանքի միասնական պլանը 2ԲՀա- նում և գյուղում . . . . .	65—67
Ակմբի կուլտուրական ակտիվն և աշխատանքը նրա հետ . . . . .	67—70
Ակումբը—սոցմբյան կազմակերպիչ . . . . .	70—73
Կոմիտեի անհերթականությունը—կուլտուրական բանակի առաջավորներ . . . . .	72—74
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> . . . . .	74—79





45  
A II  
123314

ԳՐԱԸ 1 Ա. 50 Կ.

244.



Клубная работа в деревне

Арменгиз, Эреванъ  
1933